

5227

Հ Մ Խ Հ Հ Ո Ղ Ք Ո Ղ Կ Ո Մ Ա Տ

ՀՍԽՀ ՀԻԴՐՈՎԵՏԵՈՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՋՈՒԹՅՈՒՆ

Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԻԴՐՈՎԵՏԵՈՐՈՒԹՅԱՆ  
ԴԵՐԸ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

ՃԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Գ Յ Ո Ւ Ղ Հ Ր Ա Տ

1936

Յ Ե Ր Ե Վ Ա Ն



ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

ՀՍԽՀ ՀԻԴՐՈՎ-ՄԵՏԵՈՐՈՒՆԳԻԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

551.57

5

ՀԻԴՐՈՎ-ՄԵՏԵՈՐՈՒՆԳԻԱՅԻ ԴԵՐԸ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

1957.51

H 23139



ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ  
ՎԵՐՏՈՒՆՑՈՒՄ  
ԳՐԱԿԱՆ ՆՁ 1936  
ՊԵՏԻՆՍԿԻ

ԳՅՈՒՂՆԵՐՍ

ՆԵՐՍԻՍՅԱՆ



## ՅԵՂԱՆԱԿՆ ՈՒ ԿԼԻՄԱՆ

Հիդրո-մետեորոլոգիան ուսումնասիրելով յերկրի կլիման  
ու յնդանակը և ջրային միջավայրի յերևույթները՝ իր այդ դե-  
րով սոցիալատական շինարարութեան բոլոր բնագավառներում  
հսկայական դեր է խաղում: Ժողովրդական տնտեսութեան մեջ  
համարյա չկա մի բնագավառ, վոր կապված չլինի հիդրո-մե-  
տեորոլոգիայի հետ: Առանձնապես նա կարևոր նշանակութեան  
ունի գյուղատնտեսութեան, յերկրի պաշտպանութեան, քաղաքա-  
ցիական ու ազգական ավիացիայի և ելեկտրիֆիկացիայի համար:  
Նոր հիմունքներով վերակառուցվող գյուղատնտեսութեանը,  
արագորեն զարգացող ոդային հաղորդակցութեանը, ֆարրիկ-գոր-  
ծարանային բուսն շինարարութեանը, կուրորտային շինարա-  
րութեանը հիդրո-մետեորոլոգիային նորանոր պահանջներ են  
առաջադրում:

Հայտնի յե, վոր յուրաքանչյուր բույսի զարգացման հա-  
մար անհրաժեշտ է ջերմութեան, յույս և խոնավութեան,  
առանց վորոնց և վոչ մի բույս աճել ու զարգանալ չի կարող: Իսկ  
անհրաժեշտ խոնավութեանը, ջերմութեանը և յույսը կախված է  
ավյալ վայրի յեղանակից:

Իրտելով մթնոլորտի ջերմութեանը, վոր շարունակ փոփոխ-  
վում է, այսինքն՝ յերբեմն բարձրանում է, յերբեմն իջնում, —  
ահա այդ յերևույթներն են պայմանավորում տաք և ցուրտ  
յեղանակի հասկացողութեանը: Մթնոլորտում շատ կամ քիչ քանա-  
կութեամբ գտնվում է նաև խոնավութեան, վորով և պայմանավոր-  
վում է չոր ու խոնավ յեղանակը: Ողի ջերմաստիճանն իջնելիս՝  
մթնոլորտում գտնվող ջրային գոլորշիները խտանում են և ամ-  
պիր կաղնում, վորի հետևանքով յեղանակը պարզ կամ ամպած  
է լինում: Հետագայում՝ բոտ ծավալի մեծանալու և խոշոր չափի-  
րի հասնելու դեպքում՝ ջրային կաթիլներն սկսում են թափվել,  
կազմելով տեղումներ, վորի հետևանքը լինում է անձրևային  
յեղանակը:

Շարունակելով դիտողութունները յեղանակի վերաբերմամբ՝ տեսնում ենք, վոր մթնոլորտը շատ հազվադեպ և հանդիսանում է լինում, վոր շարունակ տեղի յեն ունենում ողի շարժումներ, այսինքն՝ քամի: Ողի շարժումը կամ քամին առաջանում և յերկու կետերում յեղած ճնշման տարբերութունից, այն է՝ ողը մեծ ճնշում ունեցող տեղերից շարժվում և նվազ ճնշում ունեցող տեղերը:

Վորպեսզի կարելի լինի յեղանակն ուսումնասիրել ու ճանաչել, անհրաժեշտ է գիտել ու հաշվի առնել մետեորոլոգիական բոլոր տարրերը՝ ջերմաստիճանը, ողի խոնավութունը, ամպամածութունը, քամին, տեղումները, ողի ճնշումը. այս տարրերն է մի առած՝ իրենցից ներկայացնում են մետեորոլոգիական յերևույթներ, վորոնք տեղի յեն ունենում տվյալ վայրում, ժամանակի վորոշ մոմենտներում. հենց այս ել կոչվում է յեղանակ:

Մթնոլորտի ցածր շերտերն ուսումնասիրելու համար յուրաքանչյուր պետութուն հիմնում է մետեորոլոգիական կայանների ցանց: Կայանների տեղիտորիալ տեղադրումը, այսինքն՝ կայանները միմյանցից վորոշ հեռավորության վրա հիմնելը կախված է վայրի բնույթից, ուղիքից:

Հարթավայրի պայմաններում մի կայանը կարող է բնութագրել ավելի մեծ շրջան: Լեռնային պայմաններում, վորտեղ վոչ մեծ հեռավորութունների վրա ուժեղ կերպով փոխվում են յեղանակի պայմանները, հիմնում են մետեորոլոգիական կայանների ավելի խիտ ցանց: Մետեորոլոգիական կայանի տեղը, յեթե այն ծառայում է կլիմայական ընդհանուր բնութագրման համար, պիտի լինի բաց և շրջանի համար բնորոշ: Յեթե հատուկ նպատակ է դրվում ուսումնասիրել կիրճերի, կամ վորևէ վայրի միկրո-կլիման, կայանի տեղը կարող է լինել վոչ բոլորովին բաց, սակայն տվյալ վայրի համար այն պիտի լինի բնորոշ:

Մետեորոլոգիական կայանները լինում են հետևյալ պրոֆիլների, նայած թե կայանին ինչ խնդիր և առաջադրված և սոցիալիստական վորպիսի շինարարության և ապասարկում-հիմնական, ազրո-մետեորոլոգիական, ավիացիայի, հաղորդակցության, կուրորտային և Յ-բզ կարգի կայաններ: Հիմնական կայանները մտնում են ԽՍՀՄ կայանների հիմնական ցանցի մեջ: Հիմնական կայաններն ունեն լրիվ սարքավորում, կատարում են լրիվ դիտողութուններ: Այդ կայանները կլիմատոլոգիական և սինոպտիկական կայաններ են: Կայանների տվյալ-

ների հիման վրա կատարում են տվյալ յերկրի կլիմայի ու յե-  
ղանակի ուսուցնասիրությունը: Ամեն որվա առանձին դիտածա-  
մերի տրոյունքները դիտողությունից անմիջապես հետո հազոր-  
դում են համապատասխան կենտրոնում գտնվող յեղանակի  
ինստիտուտին: Բացի այս՝ ազրո մետեորոլոգիական կայաններում  
կատարվում են դիտողություններ գանազան բարձրություններ-  
ում, վերոշվում են հողի խոնավությունը, բուսապատ հողի մա-  
կերևույթի գոլորշիացումը, հողի մեջ ջրի ներծծվելը, միևիմում  
ջերմաստիճանի բաշխումը գանազան բարձրություններում, բուսա-  
ածակ հողի ջերմաստիճանի դիտողությունները, արևի առդիացիայի  
ազդեցությունը գյուղատնտեսական կուլտուրաների վրա, լույսի  
ազդեցությունը գյուղատնտեսական կուլտուրաների զարգացման  
վրա. կատարում են բուսականության զարգացման ֆազերի  
ֆենոլոգիական դիտողություններ, թռչունների, կենդանիների  
միջատների վրա դոֆենոլոգիական դիտողություններ:

Ավիացիոն կայաններն սպասարկում են ավիացիային՝  
ողաչվին ժամանակին տալով յեղանակի վերաբերյալ պահանջվող  
տվյալները: Ոգանավակայանին կից գործող ավիացիոն կայաններն  
ասանալով ողաչվի ճանապարհի վրա գտնվող մետեորոլոգիական  
կայանների տվյալները՝ հազորդում են ողաչվին:

Հաղորդակցության մետեորոլոգիական կայանների հիմնա-  
կան նպատակն է սպասարկել յերկաթգծի տրանսպորտին, իր  
ժամանակին հաղորդելով յերկաթգծի վարչությանը դիտողու-  
թյուններ՝ յեղանակի փոփոխման, բքի, մառախուղի, ուժեղ քա-  
մու մասին և այլն:

Յերբորդ կարգի կայաններում կատարվում են մթնոլորտա-  
յին տեղումների քանակի, ձյունածածկոցի բարձրության և մըթ-  
նոլորտային բոլոր յերևույթների վերաբերյալ դիտողություններն  
առանց գարծիքների, ինչպես, որինակ՝ ցողի, յեղյամի, ճենճառի,  
ալաունակի, համատարած յերկրահոսք մառախուղի, մոտավոր, հե-  
ռավոր ամպրոպի, ծիածանի, գետնաբքի, չոր մառախուղի և այլն:  
Բացի վերոհիշյալ կայաններից, կան դիտողական կետեր, ուր դի-  
տում են յեղանակի առանձին յերևույթները՝ ամպրոպ կամ  
ամպամածություն, կատարում են բուսականության զարգացման  
ֆազերի, թռչունների յերևալու և հեռանալու վերաբերյալ ֆենո-  
լոգիական և դոֆենոլոգիական դիտողություններ: Ջրային միջա-  
վայրը— ովկիանոսները, ծովերը, գետերն ու լճերն ուսուցնասիրե-  
լու համար սովորաբար հիմնվում են կոմպլեքսային հիդրոմետեո-  
րոլոգիական կայաններ:

Ովկիանոսների, ծովերի և մեծ լճերի ափին հիմնվում են առափնյա կայաններ, վորտեղ համապատասխան մետեորոլոգիական կայանի լրիվ ծրագրով, ծովի վրա նավարկելու միջոցով կատարում են ջրի վերին շերտի և տարբեր խորությունների ջերմաստիճանի, ջրի մակերևսի գոլորշիացման, վճիտության, սանտիմետրներով ջրի բարձրության, ափից դեպի ծովը հորիզոնական տեսանկյանությամբ, ծովային հոսանքների և ջրի աղիության վերաբերյալ դիտողություններ: Ծովի բաց մասերի ռեժիմն ուսումնասիրելու համար նավերի վրա հիմնվում են հիդրոմետեորոլոգիական կայաններ: Բացի մետեորոլոգիական և հիդրոմետեորոլոգիական կայաններից, հիմնվում են նաև մետեորոլոգիական և մագնիտոմետեորոլոգիական որսերվատորիաներ: Մետեորոլոգիական որսերվատորիաներում կատարվում են մետեորոլոգիական լրիվ դիտողություններ:

Բոլոր ինքնագիրների սարքավորմամբ կատարվում են ճառագայթաչափական դիտողություններ, այսինքն՝ կատարվում են արևի արձակած ռադիացիայի լրիվ հաշվառում, յերկնակամարի արձակած՝ ցրված ռադիացիայի, ինչպես նաև յերկրի ճառագայթացման հաշվառումը: Կատարում են մթնոլորտի վերին շերտերի ուսումնասիրություն, մթնոլորտային էլեկտրականության վերաբերյալ դիտողություններ և գիտահետազոտական աշխատանքներ: Մագնիտոմետեորոլոգիական որսերվատորիայում բացի մետեորոլոգիական դիտողություններից կատարվում են նաև հողի մագնետիզմի վերաբերյալ դիտողություններ և գիտահետազոտական աշխատանքներ: Վերջին ժամանակներս մետեորոլոգիական որսերվատորիայից զատելով՝ սկսել են հիմնել աերոլոգիական և ճառագայթաչափական որսերվատորիաներ (ակտիվ մետրական):

Ինչպես մետեորոլոգիական կայաններում, նույնպես և որսերվատորիաներում բոլոր գործիքների տեղակայումն անում են միատեսակ և խիստ մշակված ծրագրով: Ողի ջերմաստիճանի և խոնավության վերաբերյալ դիտողության գործիքները տեղակայվում են պսիխրոմետրական դիտարանում այնպես, վոր թե ջերմաչափերի և թե խոնավաչափի վրա անմիջականորեն չընկնեն արևի ճառագայթները, մթնոլորտային տեղումները և հողի մակերեսով թից բարձրացող տաք ճառագայթները: Վորպեսզի դիտարանում ողի յուրահատուկ շրջանառություն կատարվի, դիտարանի պատերը մթնավեղկային են շինում: Պսիխրոմետրիկական դիտարանում


բանը տեղեկայվում է պատվանդանի վրա այնպես, վոր  
 դիտարանի ներսում ջերմաչափերի գնդիկները հողի մակերևույթից  
 թից 2 մետր բարձր լինեն: Պսիխրոմետրիկական դիտարանում տե-  
 դակայվում է Ավգուստինի պսիխրոմետրը: Ավգուստինի պսիխրո-  
 մետրը բաղկացած է յերկու միասնական միասնական ջերմաչափե-  
 րից, վորոնցից մեկը ցույց է տալիս ողի ջերմաստիճանը, իսկ մյուս  
 ջերմաչափի գնդիկը փաթաթում են բատիստով: Բատիստի ծայ-  
 րը կախում են ջրով լցված բաժակի մեջ: Բատիստը անընդհատ  
 թրջվում և թրջում է ջերմաչափի պատերը: Յերկու ջերմաչա-  
 փերն էլ կախված են իրար մաս՝ ուղղաձիգ: Սոնավ գնդիկով  
 ջերմաչափը ցույց է տալիս ավելի ցածր ջերմաստիճան, քան  
 չոր գնդիկով ջերմաչափը, վորովհետև խոնավ մակերևույթից գոլոր-  
 շիացում է կատարվում, իսկ գոլորշիացման վրա ջերմութունն է  
 ծախսվում և չոր ու թրջած ջերմաչափի միջև տարբերութունը  
 կլինի այնքան մեծ, վորքան ուժեղ կլինի գոլորշիացումը: Յեթե  
 ողը հագեցած լիներ, ապա ջուրը չեր գոլորշիանա և յերկու ջեր-  
 մաչափերն էլ միևնույն ջերմաստիճանը ցույց կտային: Սակայն  
 ողը սովորաբար հագեցած չի և գրա համար էլ գոլորշիացում է  
 տեղի ունենում:

Չոր, քամոս յեղանակներին յերկու ջերմաչափերի միջև յե-  
 դած տարբերութունը մեծ է լինում, վորովհետև շատ գոլորշիացում  
 է կատարվում և շատ էլ ջերմութունն ծախսվում: Սոնավ, ամ-  
 պած յեղանակներին գոլորշիացումը խիստ նվազում է, հետևա-  
 պես յերկու ջերմաչափերի տարբերութունն այնքան էլ մեծ չի  
 լինում:

Իալտոնի որենքի համաձայն՝ ժամանակի մի միավորում գոլոր-  
 շիացող ջրի քանակն ուղիղ հարաբերական է այն գոլորշիների առաձ-  
 գականության տարբերությանը, վորոնք ջրի մակերևույթը գոլոր-  
 շիացնող ջերմության դեպքում հագեցնում են տարածութունը,  
 այսինքն՝ թրջած ջերմաչափի ջերմաստիճանի դեպքում և մթնո-  
 լորտում գտնվող գոլորշիների առաձգականութունն ուղիղ հարա-  
 բերական է գոլորշիացնող մակերևույթին և հակառակ հարաբերա-  
 կան՝ ողի ճնշման: Իրա համար էլ գոլորշիների տարած ջերմության  
 քանակութունը կարելի չե հետևյալ ֆորմուլայով արտահայտել.

$$aS \frac{E-e}{H}$$
 վորտեղ S-ը թրջած ջերմաչափի գնդիկի մակերևույթն է, E-ն  
 գոլորշիների առաձգականութունն է, վորը թրջած ջերմաչափի ջեր-  
 մաստիճանի ժամանակ հագեցնում է տարածութունը, e-ն ողում իս-


կապիս գտնվող գոլորշիների առաձգականությունը, Է-ը՝ ողի ճնշումը, Ը-ն՝ մի ինչ-վոր մշտական մեծություն: Վարովհեան թրջած ջերմաչափի ջերմաստիճանը միջավայրի ջերմաստիճանից ցածր է, ապա թրջած ջերմաստիճանի գնդիկի շուրջը շրջապատող ողից շարունակ տաք հոսանք է տեղի ունենում: Դրսից կլանվող տաքության քանակությունն ուղիղ հարաբերական է գնդիկի մակերևույթին և չոր ու թրջած ջերմաչափերի ջերմաստիճանների տարբերության և արտահայտվում է հետևյալ ֆորմուլայով  $bs(t-t')$ , վերտեղ 8-ը ջերմաչափի գնդիկի մակերևույթն է,  $t$ -ն՝ չոր ջերմաս-



Նկ. 1. Պոլիտրոմետրիկական դիտարան—ներսում Ավգուստինի պոլիտրոմետրը, մաղախին խոնավաչափը, մաքսիմալ և մինիմալ ջերմաչափերը:

չափի ջերմաստիճանը,  $t'$ -ն՝ թրջած ջերմաչափի ջերմաստիճանը,  $b$ -ն՝ մի ինչ-վոր մշտական մեծություն: Թրջած ջերմաչափն իջնում է աչքան ժամանակ, մինչև վոր գոլորշիացման համար ծախսվող տաքության քանակությունը հավասարվի ողից ստացվող տաքության քանակությանը: Լինում է մոմենտ, յերբ տաքության մուտքն


Եւ ծախսը հավասարվում է նաև սահմանվում է ստացիոնար դրու-  
 թյուն, յերբ  $as \frac{E-e}{H}$  ջերմության ծախսուժը հավասարվում է  
 $bs(t-t')$  մուտքին  $as \frac{E-e}{H} = bs(t-t')$ , վորանդից  $E-e = \frac{b}{a}(t-t')H$  :  
 $\frac{b}{a}$  վորտարինելով  $A$  տառով, վոր նշանակում է մի ինչ-վոր  
 ճշտական կոեֆիցիենտ: Այս կոեֆիցիենտը, զգայուն խոնավա-



Նկ. 3. Ասմանի պսիխրոմետր

չափի համեմատութիւնը վորոշվում է առմիշտ: Փորձուլայից  
դուրս դալով  $e$  մեծութիւնը —  $e = E - AH(t - t')$ :


Սովորաբար ֆորմուլաները վերլուծվում են պսիխրոմետրի-  
կական աղյուսակներում, վորոնց ոգնութիւնը  $e$ -ն վորոշվում է  
առանց վորիէ հաշվումի: Ավգուստինի պսիխրոմետրով սգտվում  
են ոգի խոնավութիւն միջին —  $5^{\circ}.0$  ջերմութիւնը վորոշելու  
համար: —  $5^{\circ} - 0$  ցած ջերմաստիճանի դեպքում թրջած ջերմաչա-  
փի խնամքը դժվարանում է և ցուցմունքները լինում են վոչ ճիշտ:  
Յուրա ամիսներին սգտվում են մազային խոնավաչափի ցուց-  
մունքներով, վորը տեղակայվում է հենց պսիխրոմետրիկական  
դիտարանում:




Նկ. 3. Ռիշարի ջերմադրիչ

Ոգի խոնավութիւնն ուժեղացման դեպքում մազը յերկա-  
րում է, մազի հետ միացած տախաակի առանցքը (սանին) պտրա-  
վում է, և ճախարակի առանցքին ամրացրած սլաքն իր վերջա-  
վորութիւնը ցուցնակի վրայով դեպի աջ և դառնում: Մոնավու-  
թիւնն իջնելու հետ միասին կարճանում է մազը, և սլաքը դեպի  
ձախ է դառնում: Մոնավութիւնը վորոշվում է նաև Ասմանի  
պսիխրոմետրի միջոցով:


Պսիխրոմետրիկական դիտարանում հորիզոնական դիրքով տե-  
ղակայվում են մաքսիմալ և մինիմալ ջերմաչափերը՝ ոգի ամենա-  
մեծ մաքսիմում և ամենափոքր մինիմում ջերմաստիճանները վո-  
րոշելու համար: Պսիխրոմետրիկական դիտարանի կողքին, նույնպի-  
սի, սակայն ավելի մեծ մի միջնափեղկավոր դիտարանում դրվում են  
ինքնագիր գործիքներ — ջերմադիր, խոնավագիր, վորոնք ամբողջ  
որվա ընթացքում (ցերեկ և գիշեր) անընդհատ գրանցում են ոգի  
ջերմաստիճանը և խոնավութիւնը:




Նկ. 4. Չեղճագրի ժամանակ



Նկ. 6. Մոնիտորի ժամանակ




Նկ. 6. Ռեզարի խա-  
նավարը:



Նկ. 7. Դիտարանը՝  
խնայազիբ գործի-  
ներով

Յերկու մետր բարձրությամբ վրա դրվում է անձրևաչափը՝ 500  
 քառ. սանտիմետր մակերեսով, մթնոլորտային տեղումները—  
 անձրև, ձյուն, կարկուտ, բանջարաբուսեղ և այլն հավաքելու հա-  
 մար։ Անձրևաչափում հավաքված անձրևը, ձնաջուրը կամ կարկը-  
 տաջուրը լցնում են անձրևաբաժակը և միջնակարգներով չափում։  
 Անձրևի քանակն ու ժամանակն անընդհատ գրանցման համար




Նկ. 8. Անձրևաչափ




Նկ. 9. Անձրևաչափի բաժակը

նույնպիսի պայմաններում, ինչպես սովորական անձրևաչափը՝ ծա-  
 ւերից, պատերից, աստիճաններից ու այլ առարկաներից հեռու, յերկու  
 մետր բարձրությամբ վրա դրվում է պլյուվիոգրաֆի ինքնազիջ  
 գործիքը, ձյան գրանցման համար տեղակայվում է ուժրոգրաֆ։  
 Ձմեռը գիտողությունները կատարվում են ձյունածածկոցի վրա-  
 վորոշվում է, թե վորքան է յեղել ձյունի ծածկոցի հաստություն-




Նկ. 10. Պլյումբոսկոպ



Նկ. 11. Պլյումբոսկոպի ժամանակներ


նը և գետինը վորքան ժամանակ և ձյունապատ յեղել: Դիտողու-  
 թյունները կատարվում են հաստատուն, մշտական և շարժական  
 ձողերի միջոցով: Բացի ձյունի ծածկոցի հաստությունից, դիտ-  
 վում և նաև ձյունի խտությունը, վորից վորոշվում և ձյունի շեր-  
 տի միջի ջրի պաշարը: Այդ դիտողությունների համար գործադր-  
 վում են խտաչափեր: վորոնք յերկու սխեմմի յեն՝ ծավալային



Նկ. 12. Հողմացույց

և կշռային: Քամիների ուղղութիւնն ու արագութիւնը դիտելու համար տներինց, ծառերինց ու այլ առարկաներինց հեռու դրվում են շիւղի հողմացույցն այնպէս, վոր բոլոր ուղղութիւն քամիների համար բաց լինի:

Քամիների ուղղութիւնն ու արագութիւնն անընդհատ արձանագրելու համար աշտարակի կամ շենքերի վրա բոլոր ուղղութիւն քամիների համար, բաց տեղում դրվում են հողմագիր (անեմոգրաֆ). քամու արագութիւնը վորոշվում է անեմոմետրի միջոցով:




Ջերմաստիճանների մեծ տատանումներ չունեցող շենքում ողի ճնշումը դիտելու համար դրվում է ծանրաչափ: Ողի անընդհատ ճնշումն արձանագրելու համար ծանրաչափի կողքին դրվում է ծանրաչափագիր: Ամպամածութիւնը, այսինքն՝ յերկինքն ամպերով ծածկված վիճելու չափն աչքով է վորոշվում: Նույն ձևով վորոշվում է նաև ամպերի ձևը: Գյուղատնտեսութիւն համար ամպամածութիւնը, վերջինիս հետ միասին, նաև արևի ռադիացիայի, այսինքն՝ արևի արձակած շոգերի եներգիան խոշոր նշանակութիւն ունի:

Յեթե յերկինքն ամբողջովին ծածկված է խիտ, ցածր ամպերով, ապա նրանց միջից արևի շոգերը չեն անցնում և բոյսերը թույլ, ցրված եներգիա յեն ստանում: Յեթե յերկինքը ծածկված է բարձր, բարակ, թափանցիկ ամպերով, վորոնց միջով անցնում են արևի շոգերը, ապա բույսերն ստանում են արևի և ամպերի ցրված եներգիա: Ամպամածութիւնը նշանակելու ժամանակ՝ ցածր, խիտ ամպաձևերը նշանակվում են առանձին, իսկ ընդհանուր՝ ամպամածութիւնը, այսինքն՝ յերկնակամարն՝ ամպերով ծածկված վիճելու չափը: վորի մեջ մտնում են ցածրի, միջին, վերևի ամպաձևերն առանձին, ամպամածութիւնը նշանակվում է կոտորակի ձևով, համարինն ար-

Ն.կ. 13. Ծանրաչափ:

տահայտում է ընդհանուր ամպամածաւթյուն, իսկ հայտարարը՝  
 ցածր ամպամածութիւն: Յերկնքի բոլորովին անամպ լինելը կամ  
 մեկ կամ մի քանի մանր ամպակտորների առկայութիւնը նշանակ-  
 վում է բալերով ( $\frac{0}{0}$ ): Յերկնքն ամբողջովին ցածր ամպերով ծածկ-  
 ված լինելը  $10/10$ -ով է նշանակվում: Յերբ ընդհանուր ամպամա-  
 ծութիւնն 8 է, իսկ ստորին ամպերը՝ 5, նշանակվում է  $8/5$   $10/4$   
 և այլն:

Ամպերի շարժման ուղութիւնը և հետեւապես քամու ուղու-  
 թիւնը դիտվող բարձրութեան վրա և ամպի շարժման արագու-  
 թիւն վորոշելու համար կայաններում դրվում է նեֆեսկոպ:



Նկ. 14: Ծանրաչափագիր

Արևափայլի տեղութիւնը ժամերով վորոշելու համար  
 կայաններում դնում են արևագիր: Արևագիրը յերկու սխտեմի  
 յե լինում՝ վելիկո և կեմպելյա՝


Հողի ջերմութիւնը դիտելու համար գործադրվում են հողի  
 ջերմաչափեր: Հողի մակերեսին հորիզոնական դիրքով դրվում են  
 մաքսիմալ, մինիմալ և սովորական ջերմաչափեր: 5, 10, 20, 40  
 սանտ. խորութեան դրվում են Սավիթնովի սխտեմի ջերմաչափեր:  
 Խոր ջերտերում դրվում է Լյամոնի սխտեմի ջերմաչափեր:

Հողի ջերմաչափերը դրվում է 5, 10, 20, 40, 80, 160 և 320  
 սանտիմետր խորութեան մեջ. գյուղատնտեսութեան համար նը-  
 պատակահարմար է ջերմաչափերը դնել հողի վերևի ջերտում 3,

76461  
 23139  
 П

ՀԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
 ԿԵՆՏՐՈՆԱԿՍ  
 ԳՐԱԴԱՐԱՆ № 2  
 ԱԿՈՂԱՆԻՍ

5, 10, 25 սանտ. մինչև 1 մետր խորությամբ: Ջրի մակերեսից գոլորշիացումը վորոշելու համար կայաններում դնում են Վիլդա-յի գոլորշիաչափ:



Նկ. 15. Մանրաչափադրի ժապավեն


Վորովհետև մշտական-սաացրոնար դիտողություն-ների համար անհրաժեշտ է, վոր մետեորոլոգիական կակայաններին մոտ նաև գտնվեն դիտողների բնա-կարաններ, ուստի մեծ մա-սամբ մետեորոլոգիական կայանները հիմնվել են քա-ղաքներում և մեծ գյուղե-րում, այնպես, վոր անա-պատները, կիսանապատնե-րը, բարձր սարերը, անբնա-կելի շրջանները հիդրո-մե-տեորոլոգիական տեսակե-տից մնում են չուսումնա-սիրված և չլուսարանված:

Վերջին տարիներս կա-ռավարությունը տնտեսա-կան ու քաղաքական խոշոր նշանակություն տալով հյուսիսի յուրացման և ու-սումնասիրության գործին, խոշոր ուժեր, եներգիտ և միջոցներ ծախսելով հյուսի-սային ծայրում՝ հիմնել է բեվեռային կայաններ: Այս-պես, Ֆրանց Յոսիֆի կղզում 80°—20', լայնության վրա Ռուդոլֆի կղզում, Բարե-հուսո հրվանդանում, Մա-տոչկին Շարում, Ռուսական նավահանգստում, Մալիյի, Կարմակուլի, Յունգերի շարում, Վայգաչում, Դիկ-սոնում, Ուստ-Յենիսեյում,

Նոր նավահանգստում, Հյուսիսային Յերկրում, Չեյուսկին հրվանդանում, Տիկսինում, Նոր Իվիգում, Սազաստրում, Լյախովի կղզում, Վրանգելի կղզում, Հյուսիսային հրվանդանում:

Այդ կայանների աշխատկիցներն ամբողջ աշխարհից կտրված, մշտնջենական սառուցներում, բեվեռային 126 վողնուցում, ինչպեսին և Ֆրանց Յոսիֆի կղզին, կատարում են դիտողություններ և իրենց տվյալները ռադիոյով հաղորդում են Յեդանակի Ինստիտուտին:

Ողի վերին շերտերն ուսումնասիրելու համար բարձր լեռների վրա հիմնվում են մետերոլոգիական կայաններ, ինչպես՝ Արագածի վրա, Կարագյուլ լճի տփին (3250 մետր բարձրության վրա), Կազբեկի վրա՝ 4020 մ բարձրությամբ, Միջին Ասիայում՝ Տիան-շինի վրա՝ 3580 մետր բարձրությամբ, Մոնբլանի վրա՝



Նկ. 16. Հովի ջերմաչափ՝ Սալինովի սխեմա

4359 մետր բարձրությամբ: Պերում կիսամար հրաբխային Ալ-Միստի լեռան գագաթին՝ 5850 մետր բարձրության վրա, կիսամյա աշխատելու ունակությամբ դրված են ինքնագիր գործիքներ: Պամիրի վրա՝ Ֆեշենկո սառցադաշտի 4300 մետր բարձրության վրա կառուցված և մետերոլոգիական ուժեղ որսերվատորիա. Պամիրի վրա, արևելյան լանջին ընկ. Ստալինի անվան լեռնագագաթի 6850 և 5600 մետր բարձրության վրա ինքնագիր գործիքներով կառուցված և մետերոլոգիական կայան: Իադաստանում՝ Սուլակի վրա՝ 3200 մ բարձրության վրա, Նլբրուսի վրա՝ 4250 մ. բարձրությամբ: Բայց և այնպես այդպիսի կայանները, վորպես թանգ արժեցող կայաններ, առայժմ լայն տարածված չեն:

Մթնոլորտի բարձր շերտերն ուսումնասիրվում են նույնպես անբրոնզիական գիտողությունների միջոցով: Մթնոլորտի վերին շերտերում ոդային հոսանքների ուղղությունն ու արագությունը վորոշելու համար բաց են թողնում պիլոտ գնդիկներ, վորոնք պատրաստված են գուտասպերչից և լցվում են ջրածնով: Այդ գնդիկների տարողությունն է 0,1, 0,2 մ<sup>3</sup>: Թեոդոլիտով հետևում են այդ գնդիկների շարժման ուղղությանն ու արագությանը և գրանով հաշվում են քամու ուղղությունն ու արագությանը զանազան բարձրությունների վրա:

Մթնոլորտի վերին շերտերն ուսումնասիրելու նպատակով ոդային գծիկների ոգնությամբ բաց են թողնվում ինքնագիր գործիքներ: Ջրածնով լցված 3—4 մ խ. ծավալով<sup>3</sup> զոնդ գնդիկներին ամբացնում են ինքնագիր գործիքներ: Սավառնակի մեջ դրվում են ինքնագիր գործիքներ, վորոնց միջոցով թռիչքի ժամանակ գրանցվում են մթնոլորտի բարձր շերտերի ջերմությունը և քամիները:

Մթնոլորտի բարձր շերտերն ուսումնասիրում են նաև սա- գիտ-զոնդերի միջոցով:

Չյուրացված և կիսայուրացված շրջանների կլիմայական բնութաները պարզելու համար, իսկ վոր ամենից գլխավորն է, ժողովրդատնտեսությանը շահագրգռող մի շարք հարցերին արագ պատասխան տալու համար, այդ վայրերի կլիմայական պայմանների ուսումնասիրությունը կարելի յե կատարել եքսպեդիցիայի միջոցով: Եքսպեդիցիոն հետազոտությունը կոմպլեկտային պիտի լինի: Նայած թե հետազոտվող շրջանի վերաբերյալ նպատակա- յին ինչպիսի խնդիրներ են առաջադրվում, ըստ այնմ եւ կազմակերպվում են հետազոտող խմբեր: Յեթե հետազոտությունը կատարվում է կուրորտային շինարարության նպատակով, ապա եքսպեդիցիային անպայման պիտի մետեորոլոգներ, բժիշկներ մասնակցեն և պիտի կատարվեն գլխավորապես ճառագայթաչա- փական գիտողություններ:

Յեթե հետազոտությունը կատարվում է գյուղատնտեսական նպատակներով՝ խորհտնտեսություն և կուլտնտեսություն հիմնելու նպատակով, ապա կոմպլեքսային հետազոտությունը պիտի կազմ- ված լինի հետևյալ խմբակներից — տնտեսական կլիմայաբանա- կան, հողային, բիոլոգիական և ագրոտեխնիկական:

Կլիմայաբանական հետազոտությունը կատարվում է մի քանի ձևով. յեթե կլիմայական պայմանները մոտակա մետեո-

քույրական կայանների տվյալների համաձայն՝ ընդհանուր գը-  
ծերով հայտնի չեն, ապա այդ գիտողությունը կատարվում է  
վորոշ ժամանակամիջոցի նկատմամբ և մետեորոլոգիական վորոշ  
տարրերի վերաբերմամբ, վորոնց առաջադրված նպատակի համար  
հետաքրքրություն են ներկայացնում:

Կառավարությունը Փոքր Սարդարաբադի հողերի յուրացման  
խնդիրն է դրել՝ այստեղ պողա-բանջարաբուծական խորհանտեսու-  
թյուն հիմնելու համար: Այդ շրջանն ուսումնասիրված չէ. սակայն  
Հոկտեմբերյանի մետեորոլոգիական կայանի տվյալներից յերելում  
է, վոր ամռան ամիսներին արև որերի թիվը շատ է, ողի ջերմաստի-  
ճանը բարձր է, վորը նպաստում է պտուղների և խաղողի լրիվ  
հասունանալուն և մեծ քանակությամբ շաքարակուտակման:

Ոգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին այստեղ,  
Հայաստանի այգեգործական մյուս շրջանների համեմատությամբ,  
ողի ջերմաստիճանն ավելի բարձր է, քան նույնիսկ Սամարղան-  
դի, Թուրքեստանի և Գյանջայի ողի ջերմաստիճանը: Սակայն  
ձմեռային սեփիմն իր ցածր ջերմաստիճանով խիստ տարբեր-  
վում է այգեգործական մյուս շրջաններից: Չմեռային ամիսներին  
Սարդարաբադի տափաստանում ջերմաստիճանի ուժեղ անկում  
է լինում՝ հասնելով մինչև—31,0 աստիճանի՝ ողում:

Չանաղան ծառեր և զանաղան սորտեր տարրեր կերպով են  
յենթարկվում նույն աստիճան սառնամանիքների ազդեցությա-  
նը: Այսպես՝ դեղձենին ավելի ցրտազգայուն է: Ծիրանիններից  
դեղձանդին—27,8 աստիճան սառնամանիքում 100%-ով վոչնչա-  
նում է: Յրտազգայուն են նաև Թաբարդի, աղջանաբաթի, շալախի,  
բադամարիկի և արութալիբի սորտերը: Յրտադիմացկուն են նով-  
բաստ և գյոզջանաբաթ սորտերը: Յրտահարվելու տեսակետից  
մեծ նշանակություն ունի ծառերի գտնվելու տեղը: 1933 թ.  
ուժեղ սառնամանիքներին դեղձենիները ցրտահարվեցին ու վոչնչ-  
ացան: Մինչդեռ Չանգվի և ավերին գտնված դեղձենիներն  
աղատվել են և միջակ բերք ավել:

Յածր ջերմաստիճանի դեպքում, շնորհիվ այն հանգամանքի,  
վոր ջրի ջերմաստիճանը մի քանի անգամ ողի ջերմաստիճանից  
բարձր է, ջրագուրը շիններն ողում ջրի վրա խտանում են, հետևա-  
պես մառախուղ է առաջանում: Մարախուղը բարձրանում է ու  
ծածկում ամբողջ կիրճը: Այդ մառախուղներն էլ փրկել են դեղ-  
ձենին և մյուս ծառերը:

Փոքր Սարդարաբադի հողերում պողատունների խորհանտե-

սուբյուան հիմնելու ժամանակ այս բոլորը նկատի ունենալով՝ անհրաժեշտ և հետադուտուբյուան կատարել պարզելու համար, թե ձևեան իսկապես վերտեղ և ցուրտ ողջ կուտակվում, վերալեզի պրա համաձայն ևլ գանազան տեսակի ու սորտերի ծառեր տրնկվեն: Յուրա գիշերներին, ինվերսիայի շրջանում, յերբ վարի շերտերում տեղի յե ունենում ցուրտ ողի կուտակում և շուտարացից տուաջ, յերբ վարի շերտերում լինում և ամենացած ջերմաստիճանը, նախորոք նշված կետերում անհրաժեշտ և ողի ջերմաստիճանի, քամիների և ողի խոնավության վերաբերյալ դիտողություններ կատարել. բացի ցուրտ ժամանակից, դիտողություններ կարելի յե կատարել և ուրիշ ժամանակ, միայն լինի պարզ: Այդ դիտողությունները կատարելու համար անհրաժեշտ են հետևյալ գործիքները. Աամանի պսիխրոմետր, Ծուսսի հողմաչափ, միսիմալ ջերմաչափ, բարձրաչափ, կողմնացույց:

Յեթե յուրացված շրջանի մտտակայքում մետեորոլոգիական կայան չկա և շրջանի կլիմայական պայմանների մասին բացակայում են տվյալներ, ապա անհրաժեշտ և մետեորոլոգիական կայան հիմնել: Այդ կայանները կարող են լինել ժամանակավոր: Մետեորոլոգիական դիտողությունների հետ միաժամանակ հասպեզիցիոն մեթոդով կատարվում են կոմպլեքսային հետադուտություններ:

Մետեորոլոգիական բոլոր կայաններում հիմնական դիտողությունները կատարվում են յին ճիշտ վորոշված ժամերին, տեղական ժամանակով՝ առավույան ժամի 7-ին, ցերեկվա ժամի 13-ին և յերեկոյան ժամի 21-ին: Ժամը 7-ին, 13-ին և 21-ին ստացված որվա միջինը 0,01, 079<sup>0</sup>-ով և տարբերվում ամեն ժամ կատարված դիտողություններից՝ ստացված ստույգ սրականից: Այս հիմնական ժամկետներից բացի, հատուկ առաջադրանքների համար դիտողություններ կատարվում են նաև այլ ժամկետներում: Մինոպտիկական սպասարկումների համար սինոպտիկական կայանները լրացուցիչ դիտողություններ կատարում են նաև ժամի 19-ին և գիշերվա ժամի 1-ին: Աերողրոմներն սպասարկող ողակավար կայաններն ամբողջ որվա ընթացքում դիտողություններ կատարում են յերեք ժամը մեկ անդամ: 1986 թ. հունվարից բոլոր կայաններում դիտողությունները կատարվում են ժամի 7-ին, 13-ին, 19-ին և գիշերվա 1-ին:

Գործարանի բաց թողած մետեորոլոգիական բոլոր գործիքներն ստուգող ինստիտում անպայման ստուգվում են և ապա

միայն կայաններում տեղակայվում: Գործիքները տեղակայվում են վորոշ բարձրության վրա: Այս բոլորն արվում է այն նպատակով, վորպեսզի մի կայանի ստացած դիտողությունները հնարավոր լինի համեմատել այլ կայանների դիտողությունների հետ, վորպիսին կլիմաների համեմատության համար վերին սաստիճանի անհրաժեշտ է: Յեթե դիտողությունները կատարվեն տարբեր ժամանակներում և տարբեր սարքավորումներով, ապա դանազան կայանների դիտողությունները համեմատելն անհնար կլինի:

## ՀԻԴՐՈՄԵՏԵՈՐՈՒՆԻԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Դիտողություններից կուտակված նյութերի հիման վրա ուսումնասիրելով տարբեր վայրերի կլիման, իսկ կլիմա ասելով հասկանում ենք սովյալ շրջանի համար բնորոշ մթնոլորտային և մասամբ հողային պրոցեսների շրջանառություն, տեսնում ենք, վոր բույսի կյանքի համար անհրաժեշտ ջերմությունը, լույսը և խոնավությունը տարբեր վայրերում տարբեր է: Լույսի, ջերմության և խոնավության նկատմամբ դանազան մշակույթների ունեցած տարբեր պահանջների հետևանքով դանազան վայրերում աճում են դանազան բույսեր: Յերևանում, վորտեղ վոշ սառնամանիքային օրերի թիվը միջին հաշվով հասնում է 254-ի և բավական քանակությամբ տաքություն կա, աճում է խաղողենին, վոր, բողբոջների բացվելուց մինչև հասունանալը, պահանջում է 1615 սաստիճան ջերմություն: Միմյանուկայում, վորտեղ այդ քանակությամբ ջերմություն չկա, վորտեղ վոշ սառնամանիքային օրերի թիվը տարվա մեջ 115 է, հասունանում է դարի, դարնանացան դուբն, վորոնք իրենց լրիվ վեգետացիայի համար պահանջում են 847 սաստիճան ջերմություն:

Մետեորոլոգիայի նպատակն է՝ ջերմաստիճանի, խոնավության, քամիների, ամպամածության ու տեղումների ընթացքի սխտեմատիկ դիտողությունների միջոցով վորոշել սովյալ վայրի կլիմայի բնույթը, այսինքն՝ հայտարարելու ջերմության քանակությունը, ձմեռային սառնամանիքների տեղությունը, ձգմեռային սառնամանիքների բացարձակ մեծությունը, վոշ սառնամանիքային ժամանակաշրջանի տեղությունը, առաջին և վերջին սառնամանիքի ժամանակը, տեղումների քանակը, տեղումների ըստ տարվա յեղնակների բաշխումը, յերաշար, ամպա-

ժաժությունը, ամպամածությունն ըստ սեզոնների, պարզ որերի  
թիվը և քամիների դասավորությունը:

Յուրաքանչյուր շրջանի մետեորոլոգիական պայմանների  
ձանաչողությունը և յուրաքանչյուր բույսի մետեորոլոգիական  
ֆակտորների նկատմամբ ունեցած պահանջը հնարավորություն  
են ընձեռում ավելի ազդեցուն կերպով շրջանացնել գյուղատըն-  
տեսական մշակույթները:

Պրոֆ. Վոյեյկովը համեմատելով Սև ծովի ծովափնյա շրջան-  
ների մետեորոլոգիական պայմանները, ամառվա ամիսների ջեր-  
մության քանակությունը, ձմռան տևողությունը, ձմռան ոգի  
մինիմալ ջերմությունը, տեղումների բաշխումն ըստ սեզոնների  
տեղումների ընդհանուր քանակը Նիսոնա կղզու (Ճապոնիա — Թե-  
յի մշակույթների հայրենիքը) նույնաման տվյալների հետ, և  
յերկու միջավայրերի կլիմայական պայմանների մեջ կատարյալ  
նմանություն գտնելով՝ առաջաբերելով Սև ծովի ծովափնյա շրջանում  
թեյի մշակույթ մտցնել, վորպիսին և մշակվում ե այժմ:

Կլիմայական պայմանների և դանազան մշակույթների՝ ջեր-  
մության, լույսի և խոնավության նկատմամբ ունեցած պահանջի  
ձանաչողությունը հնարավորություն ե ընձեռել մի շարք նոր  
շրջաններում տարածել տեխնիկական մշակույթներ, ինչպես,  
որինակ՝ բամբակի մշակույթը Հյուսիսային Կովկասում, Դաղստա-  
նում, Արևմտում, Ստորին Վոլգայի շրջանում, Ուկրայինայում, Իսկ  
բրինձը՝ Հյուսիսային Կովկասում և Ուրալում:

ԽՍՀՄ-ի դանազան շրջանների կլիմայական պայմանների  
համեմատությունը յերկրագնդի այլ յերկրների համանման կլի-  
մայական պայմանների հետ, մեզ հնարավորություն կտա Միու-  
թյան մեջ մշակելու մի շարք հումույթ տվող նոր տեխնիկական  
մշակույթներ, վորոնք մինչև այժմ ներմուծվում են արտասահ-  
մանից: Այդ նոր մշակույթների տարածումով Խորհրդային  
Միությունը կազատվի արտասահմանից ներմուծվող այնպիսի  
հումույթներից, ինչպիսիք են՝ Ավստրալիական ակացիոնը, ղորը  
տալիս և դարաղելու բարձրորակ եքստրակտ, յուղատուներ, վո-  
րոնք պահածոների արդյունաբերության համար տալիս են  
պրովանսյան յուղ, ռամի՝ մետաքսի գործվածքների համար,  
եֆիրե-յուղատու և կաուչուկաբեր բույսեր, կենսաֆ, սորգո, սոյա  
եվկալիստ, նոր Ջելանդիայի կտավհատ, լաքի ծառ և այլն:

Յուրաքանչյուր բույս իբ վեգետացիոն ժամանակաշրջա-  
նում ունենում և վճռական մի շրջան, այսինքն՝ յեթե բույսն

այդ վճռական շրջանում չի ստանում տվյալ Ֆազին անհրաժեշտ քանակությամբ ոգի, հողի ջերմությունն ու խոնավությունն, ապա բույսի զարգացումը կանգ է առնում, նա կամ չորանում մեռնում և, կամ բերքն է պակասում և կամ վատորակ բերք է ստացվում:

Փենոլոգիական դիտողությունների միջոցով ուսումնասիրելով վեգետացիոն ժամանակաշրջանի տեղումնը, այսինքն՝ դիտելով բույսի պարբերական զարգացումը, որինակ, դարնան հացահատիկի ցանքից մինչև ծլելը, ծլելուց մինչև-թիակալումը, թիակալումից մինչև հասկակելելը, հասկակալելուց մինչև ծաղկելը և ծաղկելուց մինչև կաթնային հասունությունը, կաթնային հասունությունից մինչև լրիվ հասունացումն ունեցած ժամանակը, և իմանալով, վոր բույսի խոնավության ու ջերմության ունեցած պահանջը՝ սերմի ծլելուց մինչև հասունացումը՝ հետևողականորեն փոխվում է, վոր ցանքից մինչև հասկակալելը, այսինքն՝ սերմերի ծլելուց, զարգանալու, հասկակալելու կամ հուրանալու համար բույսը բավականաչափ խոնավության կարիք ունի, այդ ժամանակաշրջանում մթնոլորտային տեղումների բացակայությունը անջրդի վայրերում, իսկ ջրաբեր վայրերում՝ չորողելը բերքի վրա բացասաբար են անդրադառնում: Հակառակը, հասկակալելուց մինչև հնձելը մեծ քանակությամբ տեղումներն իջեցնում են բերքը, պակեցնում են բույսերը և առաջացնում են հիվանդություններ:

Մետեորոլոգիական դիտողությունների միջոցով իմանալով մթնոլորտային տեղումների քանակն ու բաշխումն ըստ ամիսների, իմանալով մաքսիմալ տեղումների ժամանակը, ցանք կարելի չէ կատարել այն հաշվով, վոր տվյալ բույսի խոնավության պահանջի վճռական մոմենտը գուգադիպի տվյալ վայրում առավելագույն տեղումների ժամանակին:

Յեթե պարզվի, վոր տվյալ մշակույթի խոնավության պահանջի վճռական մոմենտը վրա չէ հասնում հունիս ամսին, իսկ տվյալ վայրում հունիս ամսը աչքի չէ ընկնում տեղումների նվաղ քանակությամբ կամ չորությամբ, ապա այդ մշակույթի արածումն այդ շրջանում անշահավետ է, յեթե, իհարկե, վոռոգման համար ջուր չկա:

Վոռոգվող շրջաններում բույսի խոնավության պահանջի վճռական մոմենտն իմանալը հնարավորություն կտա իր ժամանակին վոռոգել և դրանով իսկ ապահովել առավելագույն ու լա-

վորակ բերքի ստացումը: Որինակ, հացահատիկների կրիտիկա-  
կան մոմենտը վրա յե հասնում նրանց հասկակալելուց 15 ու  
առաջ: Յեթե այդ ժամանակ նրանք չըլլեն, ապա բերքի վորակն  
ու քանակը կվատանա, յեթե նույնիսկ վճռական մոմենտից հե-  
տո ջրվի, կամ մետեորոլոգիական պայմանները փոխվեն և մեծ  
քանակությամբ տեղումներ լինեն: Յեթե վճռական մոմենտին  
բույսը բավականաչափ քանակությամբ խոնավություն ստանա,  
իսկ հետագա ֆազերին վոչ, և մետեորոլոգիական պայման-  
ները նվազ նպաստավոր լինեն, ապա լավ բերք կստացվի:

Վճռական մոմենտի դիտողություններով հնարավոր է նա-  
խագուշակել բերքը: Յեթե վճռական մոմենտին բույսը պահանջ-  
ված քանակությամբ խոնավություն կամ ջերմություն չի ստա-  
ցել, ապա բերքը կորած պիտի համարել:

Իհարկե՝ այստեղ դեր է խաղում բույսի պահանջների բա-  
վորարման տոկոսը: Յեթե վճռական մոմենտին ամբողջովին չո-  
րային է յեղել, ապա Չ ամիս առաջ հայտնի կլինի բերքի վոչըն-  
չացումը, յեթե բույսի պահանջը մասնակիորեն չի բավարարված,  
ապա վորակապես ու քանակապես վատ բերք կստացվի:

Ճակնդեղի մշակութ մտցնելու դեպքում մետեորոլոգիական  
գործոններից պիտի հաշվի առնել ջերմաստիճանը, տեղումների  
քանակն ու բաշխումը և ամպամածության բաշխումն ըստ ամիս-  
ների: Յեթե կլիմայական տվյալների հիման վրա պարզվի, վոր  
տվյալ վայրում ամառվա վերջին և աշնան սկզբին մթնոլորտա-  
յին տեղումները շատ են, վորի հետևանքով մեծանում է ամպա-  
մածությունը և պակասում է արևափայլը, ապա տվյալ վայրում  
շահավետ է մշակել կերի ճակնդեղ, ապահովելով մեծ բերք: Իսկ  
յեթե կլիմայական տվյալներով պարզվի, վոր տվյալ վայրը մթ-  
նոլորտային տեղումներով առատ է դարձան ու ամռան սկզբին,  
իսկ ամառվա վերջին և աշնանը չոր է, պարզ ու արեռտ որերը  
շատ, ապա այդպիսի վայրում պիտի մշակել շաքարի ճակնդեղ,  
վորովհետև կլիմայական այդ պայմաններն ապահովում են  
մեծ քանակությամբ շաքարի ճակնդեղի բերքը:

Բույսի կյանքն ու զարգացումը կախված է հողային պայ-  
մաններից, հողի հանքային նյութերի հարստությունից: Սակայն  
վորքան էլ հողը հարուստ լինի, բույսը չի աճի, յեթե հողում  
բավականաչափ խոնավություն չկա:

Բացի այդ, գյուղատնտեսական մշակութների վրա առաջին  
հերթին ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ յերազ-

որ, կարկտահարությունը, անձրևային ամառը կամ աշունը, գարնանային և աշնանային ցրտահարությունները, ձմեռային սառնոցը և ջերմաստիճանները և ձյան վրա նստած սառցակեղեր:

Մետեորոլոգիայի նպատակն է կլիմայի սխտեմատիկ ուսումնասիրությամբ հայտարարել և ուսումնասիրել տվյալ վայրի կլիմայական պայմանների բացասական կողմերը: Յեթև գիտագությունների միջոցով պարզվի, Վոր տվյալ վայրում ձմեռն ունի ցածր ջերմաստիճան, ապա այդ վայրում գյուղատնտեսական մշակույթները ցրտից պաշտպանելու համար պետք է ձերք առնել վորոշ միջոցներ: Միջուրինի հսկայական փորձերը՝ սելեկցիայի միջոցով ստանալ ցրտադիմացկուն գյուղատնտեսական մշակույթներ՝ բավականաչափ լուծում են բույսերը ցրտերից պաշտպանելու պրոբլեմը: Հոկտեմբերյանում՝ ձմեռն ինվերսիայի ժամանակ տեղի յեն ունենում խիստ ցրտեր, վորովհետև ցուրտ և ծանր ողն իջնում և խտանում է հարթավայրում: Նորմալ դրությունն այն է, Վոր ցածրադիր վայրերում, ջերմաստիճանը պիտի բարձր լինի, քան բարձրադիր վայրերում: սակայն ինվերսիայի ժամանակ հակառակն է լինում, ցածրադիր վայրերում ավելի ցուրտ է լինում քան բարձր վայրերում:

### Ինվերսիայի որինակներ

Կայանների անունը.	Բարձր մետրեր.	Ողի միջին ջերմաստիճանը փետրվար 1932 թ.	Ողի բայարձայն միջին մասի ջերմաստիճանը փետրվարին 1932 թ.
Հոկտեմբերյան. (Սարգարաբաղ) . . . . .	858	-5,8	-30,8
Ղամարլու . . . . .	860	-5,1	-28,1
Յերևան . . . . .	951	-4,1	-22,7
Աշտարակ . . . . .	1152	-3,4	-16,3

29 հունվարի 1934 թ.

Կայանների անունը	Բարձր. մետրեր	Ողի միջին ջերմաստիճանը
Հոկտեմբերյան (Սարգարաբաղ)	858	-25,1
Յերևան . . . . .	951	-22,2
Աշտարակ . . . . .	1152	-16,6
Ղոջարուլար . . . . .	1767	-15,8
Ալագյուղ (Արագած) . . . . .	3250	-15,2

Չմեռային խիստ սառնամանիքներ ունեցող վայրերում դեղ-  
ձեռնի և խաղողենի տնկելիս անհրաժեշտ և հաշվի առնել սառնամ-  
նային միջնամալ ջերմաստիճանը. այդպիսի վայրերում ձմեռը  
խաղողենին անսպալման պիտի ծածկեն: Դեղձենիների համար  
պիտի ընտրել լանջեր և բարձրադիր վայրեր, վորտեղ ցուրտ ոդի  
կանգառում տեղի չի ունենում: Միևնույն ժամանակ կիրառելով  
մի շարք ագրոտեխնիկական միջոցառումներ՝ պարատացում, իջ  
ժամանակին վորոգում, հրաժարվել ծառերի տակը բանջարանո-  
ցային կուլտուրաներ մշակելուց, դադարեցնել ջրելը, յերբ արդեն  
նկատվում են հաջորդ տարվա պտղաբողբոջները, կարելի կլինի  
ծառերը դարձնել ավելի ցրտադիմացկուն, կամ թե ծառերին  
տալ վորոշ ձևավորում և բարձրություն, վոր ծածկելու համար  
հարմար լինեն: Մեծ չտիերով ցած ջերմաստիճաններ ամեն ձմեռ  
չեն կրկնվում:

Յերևանում 40 տարվա ընթացքում ոդի ջերմաստիճանը 3  
անգամ և ուժեղ կերպով իջել՝ 1897 թ. մինչև—26<sup>0</sup>,77, 1928 թ.  
մինչև—26<sup>0</sup> - 0, 1933 թ. մինչև—27<sup>0</sup>,88: Գյուղատնտեսական կուլ-  
տուրաների համար առանձնապես վտանգավոր և վոչ թե բացարձակ  
միջնամալ ջերմաստիճանը, այլ տևական ցածր ջերմաստիճանը և  
թե վորքան աշնանից ծառերի ընձյուղները հասունացած են: 40  
տարվա ընթացքում միջնամալ ջերմաստիճանների մեծ տևականու-  
թյամբ աչքի յե ընկնում 1898 թ., յերբ միջին միջնամալ ջերմաս-  
տիճանը հունվարին 15,4 եր և 1933 թ.—15,5: 1928 թ. բացար-  
ձակ միջնամալ ջերմաստիճանը նույնպես մեծ եր—26,0, իսկ ամ-  
սական միջին միջնամումը—14,4: Այդ տարին այնքան ուժեղ  
փրասաներ տեղի չունեցան, իչպես 1933 թ., յերբ փրասվեց դեղձե-  
նիների, կեռասենիների, ծիրանենիների մեծ տոկոսը և տանձենու-  
ւածալաչած տեսակը:

Յեթե կլիմայական պայմանների ուսումնասիրությունից  
պարզվի, վոր տվյալ վայրում ուշ գարնանը ցրտերը կրկնվում են  
և դրա հետ լինում են նաև ցրտահարություններ, ապա մի շարք  
բույսերի, ինչպես՝ ծխախոտ, յեզիպտական բամբակ, պամիդոր,  
տաքդեղ սածիլելը պիտի թողնել ցրտերն անցնելուց հետո:

Այդպիսի շրջաններում բամբակի ցանքը պիտի կատարել  
այն հաշվով, վոր ծիլերը դուրս գան ցրտերն անցնելուց հետո,  
վորովհետև ցրտերի ժամանակ բույսերը գտնվելով տոպոգրաֆի-  
կական տարրեր պայմաններում՝ տարրեր չափով ել յենթարկվում  
են ցրտահարության: Հարթավայրերում ու հովիտներում, վորտեղ

գիշերներն իջնում կուտակվում և ցուրտ ողը, հենց այդ վայրե-  
րումն և, վոր ամենից առաջ և ուժեղ չափով բուսականությունը  
ցրտահարվում է: Բաց և բարձր վայրերում, վորտեղ զարուհակ-  
քամի յե լինում, ողի շարժում և կատարվում և ցուրտ ողը չի  
խտանում ու կանգնում, այդպիսի վայրերում կամ ցրտահարու-  
թյուններ չեն լինում, կամ լինում են շատ թույլ չափերով: Շըր-  
տահարություններ չեն լինում նաև ջրավազանների ավերին,  
վորովհետև ջրի մակերևույթի հետ շփվող ողն իր մեջ պարունա-  
կում է մեծ քանակությամբ ջրագուրը, իսկ ջրագուրը շինեք  
ցերեկն արևից մեծ քանակությամբ ջերմություն կլանելով՝ գի-  
շերն այն տալիս են ողին: Մյուս կողմից՝ ջրագուրը շիներն ողում  
լողալով՝ հողը պաշտպանում են գիշերային ճառագայթումից.  
դրանով իսկ միևնույն ժամակակ ջերմությունը պահպանում են  
մթնոլորտի ստորին շերտերում:

Ցանքի ժամկետները պիտի դասավորել այնպես, վոր առա-  
ջին վաղ ցանքերն արվեն բարձրավանդակներում և ջրավազաների  
ավերին, իսկ ուշ ցանքերը՝ հարթավայրերում այն հազվամ,  
վոր բամբակը ծլի ցրտերն անցնելուց հետո: Յիժե կլիմայական  
պայմանների սխտեմատիկ ուսումնասիրությունից պարզվի, վոր  
ձմեռը ձյունածածկը սխտեմատիկորեն խտանում է, ձյունաշերտի  
հաստությունը մեծանում է և աշնանացանը փչանում է, առա-  
տվյալ շրջանի ցանքաշրջանառությունից աշնանացանները պի-  
տի հանել:

Պտղատու ծառեր և խաղողի այգիներ տնկելիս, պիտի հաշ-  
վի առնել տիրապետող քամիների ուղղությունը, թե առավա-  
րնթացքում վնասեղից են ամենից հաճախ նրանք փչում, վորով-  
հետև քամին ուժեղացնում է գուրը շիացումը, իսկ մեր՝ չափազանց  
նվազ խոնավության պայմաններում ամառային ամիսների  
ուժեղ քամիներն արագացնելով գուրը շիացումը՝ ցամաքեցնում են  
բույսերը: Քամու ազդեցությունը թուլացնելու նպատակով՝ խա-  
ղողենին պիտի տնկել այնպես, վոր նրա շարքերը քամու ուղ-  
ղությանն ուղղահայաց չլինեն, այլ գուդահեռական, դրանով  
նվազում է քամու ազդեցության ուժը: Կամ թե տիրապետող  
չոր, փոշոտ քամիների ուղղությամբ ծառեր տնկելով՝ արհեստա-  
կան պատվար են կանգնեցնում: Քամին հանդիպելով խոչընդոտ-  
ների՝ ուժասպառ է լինում:

Անասնաբուժական շրջաններում արտա ժամանակը վորո-  
շելիս և ձմեռային կերի պաշարի հաշիվները կազմելիս անհրաժեշտ

ե իմանալ տվյալ շրջանի ձյունածածկի տեղականությունը, առաջին անգամ և վերջին անգամ ձյան շերտ կազմելու ժամանակը:

Փորձադաշտի յուրաքանչյուր փորձագետ (ОПЫТНИК) իր ամբողջ աշխատանքի համար հիմք պիտի ընդունի տվյալ շրջանի կլիմայական հիմնական պայմանները:

Ընտրված տեղը կլիմայի տեսակետից տվյալ շրջանի համար պիտի լինի բնորոշ: Փորձի ընթացքում զուգնթացաբար գիտում ե բույսի զարգացման մետեորոլոգիական տարրերը, կապ գտնելով ջերմաստիճանի, տեղումների, արևափայլի և խոնավության, կուլտուրաների զարգացման ու բերքատվության մեջ, ինչպես նաև գյուղատնտեսական կուլտուրաների հիվանդությունների զարգացման մեջ:

Կլիմայական պայմանները ճանաչելուց զատ, գյուղատնտեսությունը կարիք ունի ճանաչելու նաև յեղանակի պայմանները: Մետեորոլոգիական կազմակերպություններից և Յեղանակի Ինստիտուտից նախորոք ստանալով յեղանակի տվյալ մոմենտի բնորոշումը և ապագայում, այսինքն՝ մի որ, յերեք՝ որ, 7—10 որ՝ անգամ ամբողջ սեզոնի՝  $2\frac{1}{2}$  ամսվա համար լինելիք յեղանակի մասին նախազգուշացումներ, այդ հնարավորություն կտա սլըլանավորելու ամբողջ գյուղատնտեսական աշխատանքներն ու ոռոգիոնալ կերպով ոգտագործելու յեղանակի բարենպաստ պայմանները: Յեղանակի ճիշտ ընթացքի մասին իմանալը խորհտնտեսություններին ու կուլտնտեսություններին հնարավորություն կտա իր ժամանակին կատարել ցանքը:

Հայտնի յե, վոր սերմերի ծլելու համար անհրաժեշտ ե, վոր հողում լինի ոպտիմալ քանակությամբ ջերմություն ու խոնավություն: Այսպես՝ 6-րդ որում բամբակը հավասարապես և լավ կծլի, յեթե 5 սմ խորությամբ հողում լինի 17—24 աստիճան ջերմություն: Արևածաղկի անձան համար 5 սմ խորության դեպքում 3,5 աստիճան, 10 սմ խորության դեպքում՝ 4 աստիճան և կանեփի համար՝ 2 աստիճան ջերմություն: Սաոր կամ թույլ տաքացած հողերում ցանված բամբակի սերմերը յերկար ժամանակ չեն ծլում, ծիլերը յերևում են 20 որից և հաճախ մեկ ամսից հետո: Ծիլերը լինում են նվազ ու թույլ, վորի հետևանքով բույսը հեշտությամբ վարակվում ե վնասատուներով:

Գարնան սկզբներին ամենայն որ տեղեկություններ ստանալով որի, 3,5—10 սմ խորության հողի շերտի ջերմաստիճանի ընթացքի ու խոնավության մասին և հետևելով այդ տարրերի ըն-

Թացքին՝ հնարավոր կլինի ցանքերը կատարել իր ժամանակին  
և կարճ ժամանակում ստանալ հավասարապես աճած ծիլեր:

Հայտնի յե, վոր բույսերի սնկային հիվանդությունները  
և պարազիտների զարգացումը սերտորեն կապված ե ողի ջերմու-  
թյան ու խոնավության, բույսերի վրա յեղած ջրի հետ: Այսպես, որի-  
նակ՝ խաղողի միլդիու հիվանդությունը՝ համաձայն Մուլլերի դի-  
տողության՝ կարող ե զարգանալ միայն ջերմության ու խոնավու-  
թյան վորոշ պայմաններում և անձրև գալուց հետո: Չոր յեղա-  
նակներին միլդինում չի զարգանում: Թեև, յեթե ջերմությունը  
բավականաչափ ե, առաջին վարակումը տեղի յե ունենում որ-  
վա միջին՝ 13° և ավելի ջերմության դեպքում և անձրև գալուց  
հետո, կամ թե ուժեղ ցողից հետո:

Այգեդործն ամենայն որ տեղեկություններ ե ստանում որ-  
վա միջին ջերմության և տեղումների մասին: Յերբ միլդիուի  
տարածվելու համար մետեորոլոգիական պայմանները կլինեն  
նպաստավոր, այսինքն՝ յերբ ողի որվա միջին ջերմությունը կը-  
լինի 13 աստիճան և ավելի (ավելի բարձր ջերմումիւթյան դեպ-  
քում վարակը տարածվում ե ավելի արագությամբ), և այդ ժա-  
մանակ անձրև կգա, կամ ուժեղ կերպով ցող կնստի, այդ դեպ-  
քում կարելի յե միլդիուի յերևալուն սպասել: Այս տվյալների  
հիման վրա իր ժամանակին սրակումներ կատարելով՝ կարելի յե  
փրկել խաղողի բերքը:

Յեղանակի կարճատև գուշակումները սովորաբար արվում են  
24 ժամ առաջ: Յեղանակի կարճատև գուշակումների համար պիտի  
հնարավորություն ունենալ յեղանակի հիմնական տարրերի մա-  
սին տեղեկու թյուններ ստանալու միանգամից, ինչպես ողի ճնշման,  
ջերմաստիճանի, քամիների արագության և ուղղության, ամ-  
պամածության, տեղումների մասին: Մետեորոլոգիական կայան-  
ները, բացի հիմնական տարրերի մասին հաղորդելուց, հայտնում  
են նաև ծանրաչափական տեղեկանքների մեծության ու բնույթի  
մասին, այսինքն՝ այն փոփոխությունների մասին, վոր դիտե-  
լուց առաջ՝ վերջին 3 ժամվա ընթացքում տեղի յեն ունենում  
ինչպես՝ յերկինքն ամպերով ծածկված լինելու աստիճանը—ամ-  
պամածությունը, ստորին, միջին և վերին շերտերի ամպերի  
ձևը, ցածր ամպերի քանակությունն ու բարձրությունը, ողի  
հարաբերական խոնավությունը, հորիզոնական տեսանելիու-  
թյունը, այսինքն՝ հեռավոր առարկաներն առանց զինված աչքե-  
րի վորքան են տեսանելի, տեղումների քանակը, յեղանակի բը-

նույն ժամկետներին և այդ ժամկետների միջև ընկած ժամանակամիջոցներում, ամպերի շարժման արագությունն ու արագությունը, հողի մակերևութի միմյանցիկ շերտաստիճանը, հողի մակերեւութի դրությունը, քամիների ամենամեծ ուժը դիտաժամկետների ընթացքում, ձմեռը ձյունածածկոցի հաստությունն ու բնութիւնը: Ծովային կայանները հաղորդում են նաև ծովի դրության, ջրի բարձրության և ողի ու ջրի շերտաստիճանի միջև յեղած տարբերության մասին:

Սինոպտիկական կայաններն առավտոյան ժամի 7-ին, ցերեկվա ժամի 13-ին, յերեկոյան ժամի 19-ին և գիշերվա ժամի 1-ին դիտողություններից անմիջապես հետո Յեղանակի Ինստիտուտին ուղարկում են մետեորոլոգիական ծածկագիր հեռագրեր, ռադիո-հեռագրեր: Վերոշած ժամանակին մետեորոլոգիական ծածկագիր հեռագրեր ստացվում են նաև յեվրոպական պետութայուններից և Ամերիկայից: Ստացված տվյալներն իսկույն ևեթ վերծանվում են և մշակելուց հետո կազմվում և տվյալ ցանցի դիտողութայունների ամփոփումը և ծածկագրերի ձևով հաղորդում և յեվրոպական և ուրիշ Յեղանակի Ինստիտուտներին: Ստացված տվյալները վերծանվելուց հետո պայմանական նշաններով նշանակվում են սինոպտիկական քարտի վրա: Սինոպտիկ անունը ձագում և հունական «սինոպտիկոս» խոսքից և նշանակում և բոլորը միասին դիտել:

Քարտի վրա բոլոր տեղեկութայուններն անցկացնելուց հետո գծվում են իզոթերմներ, այսինքն՝ միևնույն ճնշումն ունեցող վայրերը միմյանց հետ միացնող գծեր. և, անալիզից հետո, ըստ տեղական ծագման, նշանակվում են զանազան ծագում ունեցող ողային մասսաները, ինչպես՝ արկտիկ, բևեռային, տրոպիկական, միջորեյական, ծովային, կոնտինենտալ ող: Պայմանական նշանակումներով անց են կացվում ցիկլոնի առք և ցուրտ ֆրոնտները:

Մթնոլորտում շարունակ տեղի յեն ունենում տրոպիկական առք մասսայի և ցուրտ կամ բևեռային մասսայի շարժում: Տարբեր շերտաստիճանի, խտության և շարժման տարբեր առագության այդ յերկու մասսաների բաղխումից ստացվում և սահմանային մակերեւութ, այսպես կոչված՝ բևեռային ֆրոնտ—գեպի ցուրտ մասսան թեքված: Յերկու, ըստ շերտաստիճանի ու խտության, տարբեր մասսաների շարժման դեպքում սահմանային մակերեւութի յերկարությամբ ստացվում և ալիքային շարժում: Մակերևութի բաժանումը ծավում և, առք մասսան լեզվալի ձև-

վով մտնում է ցուրտ մասսայի մեջ, և տաք մասսայի ծավածքը բարձրանում է կենտրոնի մինիմում ճնշումով, յերևում է ցիկլոնի կենտրոնը:

A. Նկարի վերին սև սլաքը ցույց է տալիս բևեռային ցուրտ ողի հոսանքը, միջին գիծը ցույց է տալիս մակերևույթի բաժանման կամ բևեռային ֆրոնտի նորմալ դրուժյունը, ցածր սլաքը ցույց է տալիս արևմուտքից շարժվող ողի տաք կամ տրոպիկական մասսայի ուղղությունը:


B. Նկարը ցույց է տալիս բևեռային ողի դեպի հարավ և տրոպիկական ողի դեպի հյուսիս ճեղքելու մոմենտը, ծավածքի առաջանալը և տաք մասսայի սողոսկելը ցուրտ մասսայի մեջ, — այս հանդիսանում է ցիկլոնի դարգացման սկիզբը: Ճիկլոնի հետագա զարգացման ընթացքում տաք մասսան ավելի ու ավելի յն խցկվում ցուրտ մասսայի մեջ: Ճիկլոնը հասնում է իր լրիվ զարգացմանը, նրա մեջ պարզ կերպով պատկերանում է տաք և ցուրտ ֆրոնտը, այսինքն՝ հարձակվող տաք ողի մասսայի և նահանջող ցուրտ ողի մասսայի բաժանող սահմանային մակերևույթը: Տաք ֆրոնտի յերկարությամբ շարժվում է տաք ողը, վորից և նա ստացել է իր տաք առունը:

C. Նկարի վրա BC գիծը ցույց է տալիս սահմանային մակերևույթը, վորտեղ նահանջող տաք մասսայից հարձակվող ցուրտ մասսան բաժանվում է՝ կազմելով ցուրտ ֆրոնտ: Այդ մակերևույթի յերկարությամբ շարժվում է ցուրտ ողը՝ դեպի վեր մղելով տաք ողը, C նկարի վրա այդ ցույց է տալիս AB գիծը: Հետագա զարգացման ընթացքում ցիկլոնի տաք մասը շարունակ սեղմվում և յերկարում է. նկար d:


Հետագա զարգացման ընթացքում ցուրտ մասսան աստիճանաբար դուրս է մղում ցիկլոնի տաք մասսային (նկար 1): Ճիկլոնի առաջի և հետևի ցուրտ մասսաները վերջնականապես ձուլվում և դեպի վեր են մղում տաք մասսան: Այդ ժամանակ ցիկլոնը մտնում է իր դադարելու շրջանը (նկար 2): Ողի տաք և խոնավ հոսանքը դադարում է, և ցիկլոնն աստիճանաբար չքանում է\*) (նկար 3 և 4):

Բևեռային ֆրոնտի՝ դեպի հարավ թեքվելու ժամանակ ցիկլոնների միջև կազմվում է անտիցիկլոն: Մի ցիկլոնի առաջ գալու դեպքում յերևում են նաև ուրիշ ցիկլոններ և այդպիսով


\*) Նկարները վերցված են Վանդեյգեյմի «Մինոպիկական և հետերոպիկական» գրքից:



a



b








c



d





ստացվում է ցիկլոնների մի ամբողջ ընտանիք: Մինտպտիկական համարյա յուրաքանչյուր քարտի վրա դժվում են յերկու տիպի ինքնամփոփ իզոթարներ: Մեկը մեծ մասամբ ելիպտիկ ձևի՝ դեպի կենտրոնը նվազող ճնշումով, այսինքն՝ ցիկլոն: Յերկրորդ տիպը՝ ցիկլոնին հակառակ՝ դեպի կենտրոնը մեծացող ճնշումով: Տիպերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: Ցիկլոնի ժամանակ գերակշռում է ամպամած, անձրևային յերդանակը: Չմեռը ցիկլոնի ժամանակ ջերմաստիճանը բարձրանում է, ամառը՝ իջնում: Քամիները ծայրերից փչում են դեպի կենտրոնը, ճնշման բարձր վայրերից՝ դեպի ճնշման ցած վայրերը: Յերկրի պտտվելու շնորհիվ, քամիները շեղվում են իրենց սկզբնական ուղղությունից և հյուսիսային կիսագնդում նրանք ժամացույցի սլաքին հակառակ են փչում, իսկ հարավային կիսագնդում՝ ժամացույցի սլաքի ուղղությամբ: Քամիները կենտրոնից վրչ հեռու ամենամեծ ուժի յեն հասնում՝ դառնալով մրրիկ, փոթորիկ, իսկ ձմեռն առաջացնում են բուք: Ցիկլոնը մի տեղում չի մնում, զանազան արագությամբ տեղափոխվում է այս և այն կողմը: Նրա արագությունը ձմեռը մի ժամում հասնում է 40 կիլոմետրի, ամառը՝ 30 կիլոմետրի: Չմեռային ցիկլոններն ավելի ուժեղ են ու խորը, քան ամառայինները: Ցիկլոնի ամբողջ կյանքը տևում 6—7 օր, տեղափոխվելով 30 աստիճան լայնության պտտաներին և հասնում: Այս լայնության մաքսիմալ ճնշումը վերջ է դնում ցիկլոնի հետագա շարժմանը:

Անտիցիկլոնը ցիկլոնի հակառակն է: Մաքսիմալ ճնշումը գտնվում է կենտրոնում և ճնշման բաշխմանն էլ համապատասխան քամիները կենտրոնից դեպի ծայրերն են ուղղվում: Սակայն յերկրագնդի պտտվելու շնորհիվ՝ քամիները շեղվում են իրենց ուղղությունից և հյուսիսային կիսագնդում փչում են ժամացույցի սլաքի ուղղությամբ, իսկ հարավային կիսագնդում, ժամացույցի սլաքին հակառակ: Անտիցիկլոնի ժամանակ քամիների արագութունը շատ ավելի թույլ է, քան ցիկլոնի ժամանակ: Անտիցիկլոնի կենտրոնում հանդարտ է: Շնորհիվ այն հանդամանքի, վոր անտիցիկլոնում ողային մասսաները կենտրոնից դեպի ծայրեր են ուղղվում, կենտրոնում ստացվում է ողի ճեղքվածք և այստեղ ողի մասսաների վարընթաց է տեղի ունենում: Վերին շերտերից, ցածր ճնշում ունեցող շերտերից ողային մասսայի բարձր ճնշում ունեցող շերտերն իջնելու ժամանակ տեղի յե ունենում ողի սեղմում, վորից ողային մասսան տաքանում է

և հապեցման կետից հեռանում, դրա հետևանքով ել ամառը, անտիցիկլոնի ժամանակ լինում է պարզ, չոր և շոգ յեղանակ, — ձմեռը գերակշռում է պարզ, ցուրտ յեղանակը:

Պարզ կա գիշերների շտրհիվ ուժեղ ճառագայթում է տեղի ունենում. ճառագայթումն առանձնապես ուժեղ է լինում ձյունածածկոցի ժամանակ: Այդ պատճառով ել անտիցիկլոնի ժամանակ մթնոլորտի ցածր շերտերում ձյան և մերկ հողի մակերևույթի վրա ջերմաստիճանը շատ ցածր է լինում: Անտիցիկլոնի ժամանակ ողի ճնշումը բարձրանում է: Սակայն, պատահում է նաև, վոր անտիցիկլոնի ժամանակ յերկինքն ամբողջովին ծածկվում է ամպերով և տեղումներ են լինում: Անտիցիկլոնը նույնպես մի տեղում չի մնում, այլ զանազան ճանապարհներով տեղափոխվում է: Անտիցիկլոնն ավելի դանդաղ է տեղափոխվում, քան ցիկլոնը: Անտիցիկլոնի ընդգրկած տարածությունն ավելի մեծ է, քան ցիկլոնինը:

Սինոպտիկական քարտերը կազմվում են հետևյալ ժամկետների դիտողությունների տվյալների վրա. առավոտյան ժամի 7-ին, ցերեկվա ժամի 13-ին և յերեկոյան ժամի 19-ին: Գիտենալով ցիկլոնի, անտիցիկլոնի և ողային մասսաների մետեորոլոգիական հատկությունները, գիտենալով նրանց հավանական ճանապարհը, տեղի ունեցող շարժումների արագությունը, համեմատելով մի ժամկետից մինչև մյուս ժամկետը՝ սինոպտիկական քարտեղները հնարավորություն են տալիս ուսումնասիրելու մթնոլորտում ծավալվող պրոցեսների ընթացքը և այդ անալիզի հիման վրա տալ պրոգնոզ, այսինքն՝ թե հետագայում այդ պրոցեսներն ինչպես պիտի ընթանան, նախագուշակել այն շրջանների յեղանակը, վորի վրայով պիտի շարժվի տվյալ ճնշման շրջանը:

Վաղ աշնանը և ուշ գարնանը ցուրտ հոսանքների շարժման և ցրտահարություններ լինելու հավանականությունների մասին նախագուշակումներ ստանալով, անհրաժեշտ է բույսերը պաշտպանելու համար միջոցներ ձեռք առնել, վորովհետև ցրտահարությունները վնասում են գյուղատնտեսությանը, և լինում են տարիներ, յերբ այն վոչնչացնում է ամբողջ բերքը:

1914 թ. ապրիլի 30-ին ցրտահարություններն ամբողջովին վոչնչացրին հայաստանի այգեգործական շրջանների խաղողի բերքը:

Աշնանային վաղ ցրտահարություններից բամբակենին վնասվում է, վեգետացիան շուտ է վերջանում, կնգողների հե-

տագա բացվելը ցածր ջերմաստիճանի հետևանքով կատարվում է մեքենայորեն, բացվում են չհասունացած կնգուղները, վորի հետևանքով ստացվում է ցածրորակ բաժարակ: Բայց կնգուղները չեն հասունանում, շատ կնգուղներ չեն բացվում և քիչ բերք է ստացվում, և, ընդհակառակը, այն տարիները, յերբ ցրտահարություններն ուշ են վրա հասնում, բամբակի հասունացման պրոցեսը նորմալ է ընթանում, կնգուղների մեծ մասը բացվում է և վորակով ու քանակով լավ բերք է ստացվում:

Վաղ աշնանային և ուշ գարնանային ցրտահարությունները հետևանք են յերկու պատճառի. առաջինը կրում է տեղական-ընդունյթ, իսկ յերկրորդը՝ ցրտի ալիքների: Գարնանը, յերբ ողի և հողի ջերմությունը բավականաչափ բարձր չէ, իսկ աշնանը, յերբ ինչպես ողի, նույնպես և հողի ջերմաստիճանն արդեն իջած է ողի ու հողի ջերմաստիճանի տարբերությունը մեծ չէ: Ճառագայթման համար նպաստավոր պայմանների դեպքում, այսինքն՝ պարզ, խաղաղ գիշերին հողն իր տաքությունը ճառագայթելով՝ արևածագին ջերմությունը ցրվում է մթնոլորտի վերին շերտերում, իսկ հողի մակերևութի վրա ջերմաստիճանն ընկնում է: Բուսածածկի մակերևութի վրա ջերմաստիճանի անկումը լինում է ավելի ուժեղ, վորովհետև ճառագայթումը սև ու խորդուբորդ մակերևութից ավելի ուժեղ է կատարվում և ճառագայթման մակերևութն ավելի մեծ է: Բացի այդ, ջերմության մի մասը ծախսվում է բույսերի վրայից ջրի գոլորշիացման վրա: Յերբ ողի ջերմությունն ընկնում է, ջրագոլորշիները հաղենում են, և գոլորշիների խտացման ջերմաստիճանը 0 աստիճանից ցածր լինելու դեպքում յեղյամ է նստում: Յեղյամը նստելով բուսածակի մակերևութի վրա՝ խորշաթաղանթներում առաջացնում է սառույց, սառցի բյուրեղները մեծանում են ի հաշիվ խորշաթաղանթի հյութի, վորի հետևանքով խորշաթաղանթը մեծ քանակությամբ ջուր է կորցնում): Բացի այդ, խորշաթաղանթում առաջացած սառույցը մեքենայորեն ազդում է խորշաթաղանթի բովանդակության՝ պրոտոպլազմի վրա, վորից և խորշաթաղանթը մեռնում է: Բամբակ և ամպամած գիշերներին ցրտահարություններ չեն լինում, վորովհետև ամպերը, մանավանդ ցածր ամպերը, իրա շերտով ծածկելով յերկինքը՝ արգելում են ճառագայթումը, իսկ քամիներն արգելում են ցուրտ ողի կանգ առնելը: Բարձր և բաց վայրերում, վորտեղ քամու արագությունն ավելի յե, ճառագայթումից առաջացած ցուրտ ողը յերկար կանգ չի առնում: Յածրա-

գիր վայրերում, փոսերում, ձորերում, վորտեղ քամու արագու-  
թյունը շատ պակաս է, տեղի յե ունենում հակառակը, այսինքն՝  
ցուրտ ողը կուտակվում և կանգ է առնում: Բացի այդ, ծանր ու  
ցուրտ ողը բարձր տեղերից ցած է իջնում, վորի հետևանքով  
հովիտներում, ցածրադիր վայրերում ու ձորերում ու շ գարնանը  
և վաղ աշնանը բույսերը յեն թարկվում են ցրտահարության:

Առաջին խորհրտեստեության մեջ (Յերևանում) խաղողի այ-  
գիների մի մասը գտնվում է ցածր տեղերում և աշնանը սովո-  
բարար մի ամբողջ ամիս առաջ այդ այգիները յեն թարկվում են  
ցրտահարության ու նրանց վեգետացիան վերջենում է: Իսկ այն  
այգիները, վորնք գտնվում են նրանցից 100 մետր հեռավորու-  
թյան վրա, բաց ու բարձր տեղում, ուր ողի շարժումն ավելի մեծ  
է և ցուրտ ողը կանգ չի առնում, ցրտահարության յեն թարկ-  
վում են շատ ուշ՝ ուժեղ ցրտեր լինելու դեպքում:

Մթնոլորտում ջրագուլորչիները նվազեցնում են ճառագայթ-  
ման ինտենսիվությունը: Ջրագուլորչիները լողալով ողում՝ ցե-  
րեկը կլանում են արևի ջերմությունը, իսկ գիշերն այն վերա-  
դարձնում են, յետ են տալիս: Բացի այդ՝ ջրագուլորչիները հողից  
կլանում են բարձրացող ճառագայթները, հետևապես ջերմու-  
թյունը մնում է մթնոլորտի ցածր շերտերում: Իրա շնորհիվ եւ  
ջրավազաններին մոտ գտնվող բուսականությունն ավելի քիչ է  
յեն թարկվում ցրտահարության: Ցրտահարության ինտենսիվու-  
թյունը կախված է նաև հողի բնույթից և տաքություն հաղորդե-  
լու ունակությունից: Որգանական նյութերով հարուստ կիզահո-  
ղերը տաքությունը վատ հաղորդող հողեր են: Յերեկն այդպիսի  
հողերն արևից քիչ են տաքանում, գիշերներն ել տաքությունը  
խոր շերտերից վերին շերտերին հաղորդելը կատարվում է շատ  
դանդաղ: Ճառագայթման համար բարենպաստ գիշերներին, խա-  
ղաղ ու պարզ գիշերներին այդպիսի հողերում ցուրտ ու ծանր է  
ողի սառչելն ու կուտակումը տեղի յե ունենում ավելի ուժեղ,  
ցրտահարությունները վրա յեն հասնում ավելի շուտ և ուժեղ  
կերպով:

Կիզահողերում յեղած խոնավությունը (ջուրը) մասամբ  
նվազեցնում է ցրտահարությունների ինտենսիվությունը, վո-  
րովհետև ջերմաստիճանն իջնելու դեպքում ցող է նստում: ազատ-  
վում է թագնված ջերմությունը, գուլորչիների հագեցումից և  
կոնդենսացիայից առաջանում է մառախուղ, իսկ մառախուղն իր  
հերթին նվազեցնում է գիշերային ճառագայթումը: Վաղ աշնան

ու ուշ դարնան ցրտահարություններն առաջանում են նաև ցրտի  
ալիքներից: Յուրա ողի ալիքներն առաջանում են հյուսիսում—  
Սառուցյալ ովկիանոսում, Կարսկի ծովում՝ Նոր Հողից արևելք,  
Արևելյան Գրենլանդիայում, և սովորաբար շարժվում են միջին  
արագությամբ, այն է՝ մի ժամում 26 կիլոմետր: յերբեմն այդ  
արագությունը հասնում է 40 կիլոմետրի: Ցրտի ալիքները շարժ-  
վելով դեպի արևելք, հարավ-արևելք և հարավ՝ հասնում են  
Մեդերկովկասին և անցնում Պարսկաստան, Հնդկաստան: Ցրտի  
ալիքները Հայաստան գալիս են մեծ մասամբ դարնանն ու աշ-  
նանը: ամառը հազվագեղ է:

Ցրտի ալիքների շարժման դեպքում տեղի յե ունենում ողի ջեր-  
մաստիճանի ուժեղ անկում: Մի ժամվա ընթացքում անկումը  
կատարվում է 8—10 աստիճանի սահմաններում: Ցրտի ալիքնե-  
րի անցնելու և սառելու հետևանքով տեղի յե ունենում ջրագուրչի-  
ների հագեցում: կոնդեսացում և տեղումներ: Տեղումները դադարե-  
լուց և յեղանակը պարզելուց հետո՝ գիշերվա ճառագայթման և  
ցրտահարությունների համար ստեղծվում են ավելի նպաստավոր  
պայմաններ: Աշնանային ցրտահարությունները, վորոնք տեղի  
յեն ունենում ցուրտ ալիքներից հետո, ավելի ուժեղ են լինում,  
վորովհետև ընդհանուր ջերմաստիճանի անկում է լինում, սառչում  
ե: Ամառվա ընթացքում մթնոլորտը թափանցած մեծ քանակու-  
թյամբ փոշին անձրևից լվացվում է, մթնոլորտը պարզվում է,  
մեծանում է ճառագայթումը, դրա հետևանքով մեծանում է նաև  
ցրտահարությունների ինտենսիվությունը:

Նկատի ունենալով ցրտահարությունների՝ գյուղատնտեսա-  
կան կուլտուրաներին հասցրած մեծ վնասը, դեռ շատ վաղուց,  
նույնիսկ հին հռոմեյացիները փորձեր եյին անում պալքարել  
ցրտահարությունների դեմ է փրկել բուսականությունը: Բու-  
սականությունը ցրտահարությունից փրկելու համար պայքարի  
մի քանի ձևեր են կիրառվում: Արհեստական ձևով մա-  
ռախող են առաջացնում, վորը նվազեցնում է գիշերային ճա-  
ռագայթումը, բարձրացնում է ողի ջերմաստիճանը և մեծացնում  
է ջրագուրչիների քանակն ողում: Գիշերային ճառագայթումը  
նվազեցնելու նպատակով Ուկրաինայում վերջին ժամանակներս  
քիմիական նյութերի  $\text{SnCl}_4$  այրումներ են կիրառում, վոր խիտ  
մառախուղ է առաջացնում: Ցրտահարությունների շրջանում  
գնդակների ձևով պատրաստած քիմիական նյութերը ցրում են  
դաշտի վրա և յերբ ցրտահարություններ են սպասվում, գիշերը

յերկու անգամ վառում են, կամ թե չեն սավառնակներից ծուխ են բաց թողնում՝ վառելով քիմիական նյութեր, վորոնք խիստ ծխի մառախուղով ծածկում են ամբողջ դաշտը:

Ամերիկական փորձերը ծխի վարագույրների վերաբերյալ, վոր պատերազմի ժամանակ գործադրվում էին սառնամանիքների դեմ պայքարելու համար, դրական հետևանքներ չեյին տալիս, վորովհետև ստացվում է չոր և վոչ թե խոնավ վարագույր:

Ծխի վարագույրը կանգնեցնում է հողի բաց թողած տաք հառազայթները, տաքությունը մնում է մթնոլորտի ցածր շերտերում և ցրտահարություն տեղի չի ունենում: Գերմանիայում գործ են ածում ձյութով թրջած տորֆի բրիկետներ: Ծխի վարագույր ստանալու համար վառում են նաև խարույկներ:

Խարույկների համար վորպես վառելանույթ ծառայում են կիսաքայքայված գոմաղբը, անասունների ուտելու համար անպետք ծղոտը, կարտոֆիլ թերը, յեզիսլտացորենի ցողունները, աշնանից հավաքած ծառի տերևներն ու ձյուղերը և այլն:

Ավելի թանձր մառախուղ ստանալու համար խարույկի կույտերին ավելացնում են քարածխի ձյութ, հանքային յուղեր, կրի և նաշադրի խառնուրդ: Կույտերը մեծ չպետք է շինել, վորովհետև այդ դեպքում ստացվում են ուժեղ դուրս հոսող հոսանքներ, տաքությունը բարձրանում է վեր, իսկ տակից անցնում է ցուրտ հոսանքը: Կույտերը պիտի կազմել  $1\frac{1}{2}$  մետր լայնությամբ և 1 մետր բարձրությամբ:

Կույտեր կազմելու համար սովորաբար հողի մեջ ուղղահայաց քրությամբ ձող են դնում: Քամու ուղղությամբ, վորտեղից ամենից հաճախ նկատվում է ողի շարժում, մեկը մյուսից 70 սմ հեռավորությամբ հողի վրա 2 ձող դնում են այնպես, վոր ձողերի ծայրերը կես մետր կույտից դուրս մնան: Այս ձողերով բարձրացնում են կույտերը, յեթե նրանք վատ են վառվում: Սովորաբար կույտերը վատ են վառվում այն դեպքում, յերբ այն ուժեղ կերպով նստել է, կամ յեթե վառելանույթը չատ խոնավ է: Կույտը քամու ուղղությամբ բարձրացնելիս ողի առատ հոսանք է ստացվում ու դրանով արագացվում ու կանոնավորում է այրումը:

Ուղղահայաց ձևով դրած ձողի շուրջը գաբսում են չոր ծղոտ, տաշեղ, ձյուղեր, դրանց վրա լցնում են գոմաղբ, բիտն, իսկ վրայից ծածկում են հողի բարակ շերտով: Մի հեկտարի վրա շինում են 50—60 կույտ:

Յրտահարություններ լինելու մասին գուշակումներ ստա-  
նալուն պես կույտերը վառում են այն հաշվով, վոր արևը ծա-  
գելու պահին, ամենացածր ջերմաստիճանի ժամանակ ամբողջ  
այգին կամ դաշտը ծածկված լինի թանձր մառախուղով: Դրա  
համար հանում են ուղղահայաց ձևով դրած ձողը և կույտի մեջ  
բացված ճեղքը մի փունջ չոր ծղոտ են դնում և վառում:  
Վառել սկսում են ծայրերի կույտերից, հետո հետևում են, վոր-  
պեսզի բոց դուրս չգա: Յեթե կույտը ուժեղ է այրվում, ասպա-  
նրա վրա լցնում են թաց վառելանյութ կամ հող են ցանում:  
Փակ յեթե կույտը վատ է այրվում, ասպա անհրաժեշտ է ավերը  
բարձրացնել: Կույտերի տակ դրած ձողերով բարձրացնում են,  
կույտերի ավերը, ստեղծվում է ողի շարժում, և կույտը վառվում  
է: Ծխելը պիտի շարունակել այնքան ժամանակ, մինչև վոր ծուխ  
արձակող հողամասից հեռու դրած ջերմաչափը գերոյից բարձր  
աստիճան ցույց տա: Յեթե բույսերը մասամբ ցրտահարված են  
ասպա ծխելը պիտի շարունակել նաև արևը ծագելուց հետո, վոր-  
պեսզի արևի ճառագայթները բույսի վրա ազդեն աստիճանաբար  
և վոչ թե միանգամից: Սառած բույսերն աստիճանաբար հալչե-  
լու համար՝ հատուկ ցնցուղներով բույսերը սրակում են ջրով:

Յեթե նույնիսկ լինի այնպիսի բարենպաստ տարի, վոր  
ցրտահարություններ չեն լինի, այնուամենայնիվ աշնանից ծա-  
ռերի տակից հավաքած տերևների այրումը կունենա այն նշա-  
նակութունը, վոր թափված տերևների մեջ ձմեռող բոյսը սուռն-  
կերը, պարագիտները կոչնչանան: Փրանսիայում համեմատաբար  
վոչ մեծ տարածությունները պաշտպանելու համար գործադրում  
են շարժական ոջախների: Դրա համար ձեռքի սայլակին, վորի  
վրա ցանում են մի բարակ շերտ հող, դնում են ձյութով կամ  
վառելանյութով լի տակառ: Տակառի վրա բոցի բարձրությամբ  
դրվում է վանգակ և սրա վրա ել դրվում է թաց ծղոտ: Վառե-  
լանյութի այրվելուն գուղընթաց, ծղոտը թրջում են, վորպեսզի  
ավելի բարձր ու խոնավ ծխի վարագույր ստացվի: Այս ձևի  
սառավելությունն այն է, վոր սայլակը մի տեղից մյուս տեղը շար-  
ժելով՝ տաքությունը դեպի վեր տանող հոսանքների չեն առաջա-  
նում, ինչպես կույտերի այրվելու ժամանակ և, բացի այդ՝ հնա-  
րավորություն է ստեղծվում ծխով պատել այն հողամասերը:  
Վորոնք առանձնապես դրա կարիքն զգում են:

Կալիֆորնիայում այգիները, նարնջի ու լիմոնի անկարան-  
ները և բանջարանոցները պաշտպանելու համար դեռ 1904 թ.

կիրառվում է տաքացում, վոր բարձրացնում է ողի շերմաստի-  
ճանր: Սկզբում մետաղյա դամբյուղներում վառում ենին քարա-  
ծուխ. հետագայում քարածխի փոխարեն սկսեցին գործածել նաև  
նավթ: Յեվ Լավ սարքավորված տնտեսություններում, այգիներում  
նավթն անց է կացված խողովակներով:

Սև նավթը կամ մազութն այրում են ջեռոցներում: Ջե-  
ռոցներով պայքարելու մեթոդը մեծ չափերով է կիրառ-  
վում: Ջեռոցները լինում են գանաղան սխտեմների՝ պարզ,  
վերևից դույլի նման բաց վերի յեզրի յերկարությամբ՝ ող անց-  
նելու համար՝ կան յերկու շարք բացվածքներ, իսկ վերևից՝ խա-  
չաձև վահանակ, վորը հավաքում է մուրը և բոցն ուղղում մի  
կողմի վրա՝ թույլ չտալով, վոր այն ուղղակի վեր բարձրանա:  
30 սանտիմետր յերկարության և 25 սանտիմետր տրամագծով,  
այդ ջեռոցները շինում են թիթեղից, նրանք վերցնում են 10 լիտր  
նավթ և այրվում են 8 ժամ: Կան հեղատայեռի ձևով շինված ջե-  
ռոցներ՝ խողովակի ներսից. վորի միջոցով ողը ներքևից վերև է  
շարժվում: Խողովակի վերևի մասում վառելու ժամանակ ող անց-  
նելու համար անցք է թողնված: Սրա տարողությունը 8 լիտր է,  
այրվում է 7 ժամ: Վերջապես կան կրկնակի խողովակներով  
ջեռոցներ, վորոնց մեջ այրումը կատարվում է լրիվ կերպով և  
առանց ծխի. սրանց տարողությունը 40 լիտր է: Ներկայումս  
կալիֆորնիայում ցիտրուսային արդյունաբերությունն սրազված  
և ջեռոցների գործադրումից առաջացած ծուխը պակասեցնելու  
հարցով: Սկզբներում կարծում ենին, թե ծուխը ցրտահարու-  
թյուններից պաշտպանելու մի արժեքավոր միջոց է, վորով հետևե-  
նա պակասեցնում է ճառագայթման հետևանքով առաջացած  
տաքության կորուստը, սակայն վերջին տարիների կատարած  
փորձերը ցույց տվին, վոր պաշտպանում է վոչ թե ծուխը, այլ  
տաքացած ողը: Մի հեկտարը լրիվ պաշտպանելու համար հար-  
կավոր է մոտ 175 ջեռոց և մի ժամվա համար պահանջվում է  
175—225 լիտր նավթ, վառելիքի և բանվորական ձեռ-  
քերի ծախսն այժմյան գներով 1,8 և 2,4 գոլլար, շահավելավ  
սարքավորման ամորտիզացիան: Ձևով դրանք նման են նավթով  
վառվող լապտերների և ունեն 10 սանտիմետրից մինչև 1 մետր  
յերկարության խողովակներ: Գործադրելով ջեռոցները, կարելի է  
ողի շերմաստիճանը բարձրացնել մինչև 3—5 աստիճան: Շինում  
են նաև կենտրոնական ջեռոցում և խողովակների միջոցով անց  
են կացնում տաք ջուր կամ տաք գազ:

Բանջարանոցները պաշտպանելու համար ծածկում են ծղո-  
տի կամ յեղեգնի խսիրով: Յերբեմե ել ցրտահարությունների  
դեմ պայքարում են ջրով: Ցրտահարության վտանգի յենթակա  
հողամասն արհեստականորեն ջրով լցնում են այնպես, վոր բույ-  
սերը մինչև գագաթը ծածկվում են ջրով, վորպեսզի սառուցն  
առավոտյան հալվելու դեպքում՝ ջերմություն կլանելիս՝ ջերմաս-  
տիճանն ուժեղ կերպով չընկնի և սառուցն արագորեն չհալվի:  
Սովորաբար ջուրը բաց են թողնում դանդաղորեն, գրա հետե-  
վանքով ել սառուցը գանդաղ ե հալվում: Կալիֆորնիայում ցըր-  
տահարությունների դեմ պայքարում են ուժեղ վենտիլյատորնե-  
րի ոգնությամբ, վորոնք շարժվում են 100 ձիու ուժանոց մա-  
տուներով — ավելի վերևի և ավելի տաք ոգն ուղղվում ե ցած:  
Միաժամանակ ներքև իջնող ոգը վառարաններով տաքացվում ե  
և արհեստականորեն խոնավացվում: Այդ մեքենաների ազդեցու-  
թյան տարածությունը մեծ չե. նրանց շրջապատը 40 մետր ավե-  
լի չե, դրա համար ել լայն տարածում չստացան: Վոչ հարթ տե-  
ղադրություն ունեցող վայրերում, վորտեղ բարձրություններից  
ցուրտ ոգի հոսանքն իջնում ե ցած, այդ բարձրությունների  
սահմանները ծառապատում են և այդպիսով արգելում ցուրտ  
ոգի հոսանքը: Այնուհետև, յերբ իր ժամանակին ամեն ինչ պատ-  
րաստված ե, գարնանը բողբոջները բացվելուց և սածիլները  
դուրս հանելուց յերկու շաբաթ առաջ, իսկ աշնանը՝ մինչև ցըր-  
տահարություններն սկսվելը, այգում դրվում են ջեռոցներ կամ  
ձխելու համար պատրաստվում են քիմիական պրեպարատներ  
կամ կուլտեր: Միանգամայն անհրաժեշտ ե ցրտահարություն-  
ներն սկսվելու վերաբերմամբ իր ժամանակին պրոգնոզ ստանա-  
լը, վորպեսզի, նախ՝ իզուր տեղը վառելանյութ չծախսվի, և  
վոր ամենագլխավորն ե, աչքաթող չարվի ցրտահարությունների  
վրա հասնելու վտանգավոր մոմենտը: Ցրտահարությունների  
պրոգնոզը կատարվում ե Յեղանակի ինստիտուտի կողմից՝ սի-  
նոպտիկական քարտեզների միջոցով, տեղական մետեոլոգիա-  
կան կայանների մետեոբոլոգիական հիմնանսներ շարժելու մի-  
ջոցով և տեղական նշաններով: Տեղական նշաններն են — յեթե  
յերեկոյան ժամի 19-ին ցողի կետը, այսինքն՝ մի ջերմաստիճան,  
վորի ժամանակ ոգի մեջ գտնվող գոլորչն հասնում ե հագեցման  
(այդ ջերմաստիճանի ժամանակ ոգից սկսում ե առանձնանալ  
գոլորչի՝ ցողի, յեղյամի կամ մառախուղի ձևով), զերյից ցածր  
ե և դրա հետ միասին յերկինքը պարզ ե, ապա ոգի ճնշումը

բարձրանում է, հետևապես գիշերային ցրտահարությունը հա-  
վանական է\*):

Վերցնելով յերեկոյան ժամի 19-ի չոր ջերմաչափի՝ ոգի  
ջերմաստիճանի տվյալները, ինչպես և յերեկոյան ժամի 19-ի,  
տամկած ջերմաչափի տվյալները, գտնում են չոր և տամկած  
ջերմաչափերի միջև յեղած տարբերությունը:

Աղյուսակում հորիզոնական գծով գտնում ենք չոր և տամ-  
կած ջերմաչափերի միջև յեղած տարբերությունը, ուղղահայաց  
գծով արսուլյուտ խոնավության տվյալները, իսկ նրանց հատման  
կետերում գտնում ենք արսուլյուտ խոնավությունը՝ հարաբերա-  
կան տոկոսներով և ցողի կետը: Յեթե ցողի կետը գերոյից ցած  
է և յերկինքը պարզ, ապա գիշերային ցրտահարությունն սպա-  
սելի յէ: Որինակ՝ յեթե յերեկոյան ժամի 19-ին չոր ջերմաչափը  
ցույց է տալիս 6,9, տամկած ջերմաչափը՝ 4, 3, չոր և տամկած ջեր-  
մաչափերի միջև յեղած տարբերությունը 2, 6 է (ամբողջացրած 3),  
ինտում ենք վերևում՝ հորիզոնական կողմում, ուղղա ալա-  
ցում՝ տամկած ջերմաչափի ցույց տված 4-ը և նրանով հորիզո-  
նական կողմում 3 թվանշանի տակ գտնում ենք արսուլյուտ խոնա-  
վությունը՝ 4,3, հարաբերական խոնավությունը՝ 57 և ցողի կե-  
տը՝—0,9: Յեթե մթնոլորտում գտնվող գոլորշին հագեցման հաս-  
նի, ապա վոչ թե ցող կստացվի, այլ յեղյամ, վորը սառցի փոք-  
րիկ բյուրեղներով կծածկի մինչև 0 աստիճան սառած առարկա-  
ների, քարերի, հողի մակերեսը:

Յեթե չոր ջերմաչափով ջերմաստիճանը՝ 5, 8 է, տամկած  
ջերմաչափով՝ 4,2, չոր և տամկած ջերմաչափերի տարբերությունը  
1,6 (կլոր թվով՝ 2), ապա տամկած ջերմաչափի 4-ով գտնում ենք  
արսուլյուտ խոնավությունը՝ 4 9 միլիմետր, հարաբերական խոնա-  
վությունը՝ 70 տոկոս և ցողի կետը՝ 0,9: Յեթե այդ պայման-  
ներում գոլորշին հագեցման է հասնում, ապա հողի և բուսականու-  
թյան վրա ցող է նստում: Առանձնապես այն նկատելի յէ լի-  
նում բույսերի տերևների ծայրերին, վորոնցից կախված են լի-  
նում ջրի կաթիլները: Նույնը նկատվում է նաև այլ առարկա-  
ների վրա: Այս պայմաններում յելք ցողի կետը գերոյից բար-  
ձրը է, ցրտահարություն չի լինի, մանավանդ յերբ ամպերը  
շատ են և քամի կա:

\*) Գրքույկի վերջում, ցողի կետերը վորոշելու համար, գետեղված է  
աղյուսակ:

Տրտահարություններն սկսվելու հավանականությունը վորոշվում է նաև Միխալեվսկու յեղանակով, հետևյալ ֆորմուլայով.  
 $Mn = t' - (t - t')c.$

$Mn$  — ողի գիշերային միջինում ջերմաստիճանը,  
 $t'$  — տամկած ջերմաչափի ջերմաստիճանը ժամի 13-ին  
 $t$  — ողի ջերմաստիճանը չոր ջերմաչափով, ժամը 13-ին.  
 $c$  — կոեֆիցիենտը, նայած ողի խոնավությանը:

С կոեֆիցիենտը վորոշելու աղյուսակ

Հարաբերական խոնավությունը %/0	С.	Հարաբերական խոնավությունը %/0	С.	Հարաբերական խոնավությունը %/0	С.
100	5,0	70	2,0	40	0,9
95	4,5	65	1,8	35	0,8
90	4,0	60	1,5	30	0,7
85	3,5	55	1,3	25	0,5
80	3,0	50	1,2	20	0,4
75	2,5	45	1,0	15	0,3

Հոտ ֆորմուլայի գիշերվա միջինում ջերմաստիճանը վորոշելու համար՝ վերահիշյալ աղյուսակից վերցնում են 13 ժամվա ողի հարաբերական խոնավության կոեֆիցիենտի ցուցմունքը, չոր ջերմաչափի ցուցմունքից դուրս են գալիս տամկած ջերմաչափի 13 ժամվա ցույց տված ցուցմունքը և այդ տարբերությունը բազմապատկում են գտած կոեֆիցիենտով: Այնուհետև, ինչ վոր ստացվում է, դուրս են գալիս տամկած ջերմաչափի 13 ժամվա ցույց տվածից:

- Հստ վորում ստացված մեծություններից պիտի հետևցնել.
  - 2 աստիճանից պակասի դեպքում ցրտահարություն պիտի սպասել.
  - 2 աստիճանից մինչև + 2 աստիճանի դեպքում ցրտահարությունը հավանական է.
  - + 2 աստիճանից ավելի դեպքում ցրտահարության հավանականութ. քիչ է.
- 13 ժամվա դիտողությունների հիման վրա գտնելով այդ մեծությունը՝ այնուհետև յերեկոյան 19 ժամվա դիտողության

հիման վրա կատարվում է ճշտում: Յեթե ժամի 19-ին յերկինքը բոլորովին անամպ է (ամպամածուկությունը 0), ուրեմն տեղի կունենա բավականաչափ ճառագայթում, ուստի՝ ըստ Ֆորմուլայի՝ 13 ժամվա ընթացքում ստացված միներմումը պիտի պակասեցնել 3 աստիճանով, իսկ յեթե ժամի 19-ին ամպամածուկությունը 4—7 է, վոչինչ չպիտի փոխել: Յեթե ժամի 19-ին ամբողջ յերկինքը ծածկված է ցածր ու խիտ ամպերով, ապա Ֆորմուլայով ստացված ողի միներմումը շերմաստիճանին պիտի ավելացնել 3 աստիճան:

**Դիլիջանի սդկայանի սվյալների սրինակը**

Չոր շերմաչափի շերմաստիճանը ժամի 13-ին . . . . .	7,9
Տամկած » » » » . . . . .	2,0
Չոր և տամկած շերմաչափերի ցուցմունքների տարբերությունը . . . . .	5,9
Հարաբերական խոնավությունը ժամի 13-ին . . . . .	28 %
Ը կոեֆիցենտ հարաբերական խոնավություն . . . . .	28 »
Աղյուսակից՝ . . . . .	0,7
Ստացված 0,7 բազմապատկելով 5,9 տարբերությունով՝ կստացվի $5,9 \times 0,7 = 4,1$ աստիճան:	


Տամկած շերմաչափի ցուցմունքներից դուրս գալով՝  $2,0 - 4,1 = -2,1$ ,  $Mn = 2,0 - (7,9 - 2,0)$ ,  $0,7 = -2,1$ :

Ժամի 19-ին ամպամածուկությունը 0-է, ըստ կանոնի մացնելով — 2՝, վերջնականապես շերմաստիճանի միներմումը յեղավ — 4,1 դիջերը տեղի ունեցավ ցրտահարություն: Յրտահարություն հավանականությունը վորոշվում է նաև ժամի 13—19-ի ողի շերմաստիճանի անկումով և ժամի 19-ի շերմաստիճանով: Նախքան ցրտահարությունը, ուղղաձիգ գծով գծվում է գծագիրը, կամ թե՛ ըստ ողիինատի՝ 19 ժամվա համար ողի շերմաստիճանի ցուցումները նշանակվում են մոտավորապես 0-ից մինչև 15 աստիճան հորիզոնական գծով, նշանակվում է, 13 և 19 ժամերի միջև շերմաստիճանի տարբերությունը՝ դարձյալ մոտավորապես 0-ից մինչև 21 աստիճան: Գծագրում նշվում է ցրտահարություն լինելու հավանականության մոտավոր տոկոսը. 19 ժամում 0-ից մինչև 3 աստիճանի միջանկյալ շերմաստիճանի դեպքում ցրտահարությունը 100 % ով հավանական է: 3 աստիճանից մինչև 4,6 աստիճանի դեպքում՝ հավանականություն տոկոսը 60, ցրտահարությունը խիտ հավանական է. 4,7 աստիճանից մինչև 6,8 աս-

տիճանի դեպքում հավանականության տոկոսը 40, ցրտահարու-  
թյունը հավանական է: 7,9 աստիճանից մինչև 8,6 աստիճանի  
դեպքում հավանականության տոկոսը 20 ցրտահարությունը քիչ  
և հավանական: 8,7 աստիճանից մինչև 11 աստիճանի դեպքում  
ցրտահարությունը շատ քիչ է հավանական, հավանականության  
տոկոսը 10, 11 և բարձր աստիճանի դեպքում ցրտահարություն  
չի լինի, հավանականության տոկոսը՝ 0:

Փամի 19-ի ողի ջերմաստիճանով ցրտահարություններ լինելու  
հավանականությունը յեվ ժամի 13-ի, 19-ի ջերմաստիճանի ցար-  
բերությունով:

**ՋԵՐՄԱՍՏԻՇԱՆԸ**  
ՉԱՄԻ 19-ԻՆ



ՋԵՐՄԱՍՏԻՇԱՆԸ  
ՑԱՐԲԵՐՈՒՄՆԵՐ  
ՉԱՄԻ 13-Ի  
ԵՎ 19-Ի

Հասփուսնների օրինակներ. — 1932 թ. մարտի 28-ին ցրտահարությունն Արմավիրում (Ղուրղուղուում): Նախընթաց օրը՝ մարտի 27-ին ժամի 13-ին ողի ջերմաստիճանն էր 6,6 աստիճան, ժամի 19-ին՝ 3,7 աստիճան: Որդինատով վերցնում ենք 3,7 աստիճանը, արսցիս տարբերությունը ժամի 13-ի և 19-ի միջև՝ 2,9 ուղղաձիգ և հորիզոնական գծերի հատման կետում ստանում ենք 80% -ով ցրտահարություն լինելու հավանականություն: Մարտի 28-ին ջերմաստիճանն իջավ մինչև 4,8 աստիճան:

1931 թ. նոյեմբերի 15-ին ցրտահարություն վաղարշապատում: Նախընթաց օրը, նոյեմբերի 14-ին, ժամի 13-ին ողի ջերմաստիճանը 6,8 աստիճան էր, ժամի 19-ին՝ 4,9 աստիճան: Որդինատի ուղղաձիգ գծով վերցնում ենք շոր-ջերմաչափի ժամի 19-ի համար ցույց տված ցուցմունքը, տվյալ օրինակում՝ 4,9: Ուղղաձիգ գծով ընդհանուր տարբերությունն ստանում ենք ժամի 13-ի ջերմաստիճանից ժամի 19-ի ջերմաստիճանը դուրս գալով  $6,8 - 4,9 = 1,9$ :

Ուղղաձիգ և հորիզոնական գծերի հատման կետում ստանում ենք 80% -ով ցրտահարության հավանականություն: Նոյեմբերի 15-ին գիշերը մինիմում ջերմաստիճանը 2,9 աստիճան էր:

Վերսկան ցրտահարությունների բոլոր ֆորմուլաները և գուշակումները կազմվում են յերկու մետր բարձրության պսիխրոմետրիկական դիտարանի դիտողությունների հիման վրա, մինչդեռ բուսականության մեջ, մասնավորապես բուսածածկում՝ ջերմաստիճանի իջեցումը լինում և ավելի շատ և շուտ, ուստի կարող և պատահել, մեր 2 մետր բարձրության վրա պսիխրոմետրիկական դիտարանի ողի ջերմաստիճանը 0-ից բարձր լինի, իսկ բուսածածկոցում՝ 0-ից ցածր, և բուսականությունը փչանա:

Ցրտահարությունների շրջանում ավելի լավ և գործիքներ դնել դաշտում կամ այգում և դիտողություններ կատարել ջերմաստիճանը և ցողի կետը վորոշելու համար: Պատրաստել փայտյա շտատիվ պսիխրոմետրիկական դիտարանի շտատիվի նման, վորպեսզի կարելի լինի շոր և տամկած ջերմաչափից կախել: Ջերմաչափից մեկի գնդիկը փաթաթել բատիստով, ասլա բատիստի ծայրը մայցնելով մի բաժակ ջրի մեջ՝ դնել բույսերի մեջ: Խաղաղ ու սլարդ յերեկոներին ջերմաչափերով դիտողություններ կատարելով և վորոշելով ցողի կետը՝ կարելի յե հեշտ կերպով վորոշել գիշերային ցրտահարությունները:

Յրտահարութեան գուշակումներն ավելի լայլ և կատարել  
վերև բերված բոլոր յեղանակներով և ճիշտ ստուգելու համար  
«գտնվել գիշերվա ժամի 1-ի դիտողութեաններով. ֆորմուլաների  
ժամի 19-ի տվյալների տեղը նշանակել գիշերվա ժամը 1-ի տը-  
վյալները:

Ստորև տալիս ենք պարնանային վերջին և աշնանային  
առաջին սրտահարութեաններին ամսաթվերը: Այս տվյալները  
կազմված են Հայաստանի մի քանի շրջաններում կատարված  
բազմամյա դիտողութեաններին հիման վրա և կազմված են հողի  
մակերեզվով թից 2 մետր բարձրութեան պսիխրոմետրիկական դի-  
տարանի տվյալներով: Տալիս ենք նաև տվյալներ Թուրքեստանի,  
Ադրբեջանի և Ամերիկայի բամբակագործական մի քանի շրջան-  
ների վերաբերյալ:

	Դարնանային վերջին սրտահարութեաններին միջին թվականը	Յրտահարութեան- ների ամենաուշ ժամկետը
Յերևան . . . . .	7/IV	30/IV
Վաղարշապատ . . . . .	10/ >	30/ >
Աշտարակ . . . . .	14/ >	30/ >
Գյրքավական (Ղարաթիլիսա-Լոռի) . . . . .	29/ >	21/V
Դիլիջան . . . . .	27/ >	21/ >
Իջևան . . . . .	4/ >	16/IV
Գորիս . . . . .	16/ >	22/ >
Լենինական . . . . .	3/ V	19/VI
Ջաջուռ . . . . .	3/ >	19/ >
Արտաշատ (Թալինի շրջան) . . . . .	20/IV	12/ V
Սեան (Յելենովկա) . . . . .	5/ V	19/VI
Նոր-Քայազեռ . . . . .	18/ >	24/ >
Սիմյոնովկա . . . . .	23/ >	—
Տաշկենտ . . . . .	30 / III	27/ IV
Գոլոգնայա ոտեղ . . . . .	1/ IV	24/ >
Խոջենեռ . . . . .	20/ III	14/ >
Անդիջան . . . . .	26/ >	22/ >
Մարդելան . . . . .	20/ >	19/ >
Գյանջա . . . . .	28/ >	
Քյուրդասմիլ . . . . .	24/ >	
Պետրոպոլիովսկ . . . . .	1/ IV	
Սալյան . . . . .	19/ >	
Ազստաֆա . . . . .	28/ III	

Ամերիկայի բամբակ.

2րջան

Աուգուստ . . . . .	18/ III
Մենֆիս . . . . .	24/ >
Ուսկո . . . . .	17/ >
Մոնգոմերա . . . . .	11/ >

Հողի մակերեսը յիշխում է զրա ցրտահարությունները գարնանն ու շուն լինում, Յերեվանում 11 որով ուշ՝ մոտավորապես ապրիլի 21-ին, քան յերկու մետր բարձրության ուղում: Կիրովականում (Լոռի) հողի մակերեսը յիշխում է զրա ցրտահարություններն ապրիլի ուշ են լինում, մոտավորապես 34 որ ուշ, քան յերկու մետր բարձրության ուղում:

Աշնանային առաջին ցրտահարության միջին թվականը:

Աշնանային ցրտահարությունների ամենավաղ ժամկետը:

Յերեան . . . . .	6/XI	8/X
Վաղարշապատ . . . . .	5/ >	7/ >
Կիրովական (Ղարաքիլիսա-Լոռի) . . . . .	20/X	5/ >
Դիլիջան . . . . .	17/ >	3/ >
Իջևան . . . . .	14/XI	9/ >
Դորիս . . . . .	1/XI	6/X
Ղենիսական . . . . .	7/X	7/IX
Ջաջուռ . . . . .	12/X	7/IX
Արարած (Թալինի 2րջան) . . . . .	3/XI	18/X
Մեան (Յելենոփկա) . . . . .	16/X	10/IX
Նոր-Քայաղետ . . . . .	24/IX	15/VIII
Քասարդեշար . . . . .	23/IX	—
Սիմյոնոփկա . . . . .	21/IX	15/VIII
Տաշկենտ . . . . .	19/X	3/X
Գուղարայա օտեպ . . . . .	17/X	30/IX
Խոջենետ . . . . .	28/X	3/X
Անդիջան . . . . .	25/X	9/X
Մարդեղան . . . . .	20/X	3/X
Գյանջա . . . . .	17/XI	
Քյուրդամիր . . . . .	24/XI	
Պետրոպոլիս . . . . .	5/XI	
Յալյան . . . . .	23/XI	
Աղստաֆա . . . . .	11/X	

Յմերիկայի բամբակագործ. շրջաններում

Աուգուստ . . . . .	9/XI
Մենֆիս . . . . .	28/X
Ուսկո . . . . .	10/XI
Մանգոմերա . . . . .	8/XI

Յերեմիական հողի մակերևույթի վրա աշնանը ցրտահարու-  
թյուններն 8 որով ավելի շուտ են ընկնում, քան յերկու մետր  
բարձրության ոգում, իսկ կիրովականում նույն յերևույթը  
կատարվում է 15 որով ավելի շուտ:

Բացի կարճատև գուշակումներից, արվում են նաև յերկա-  
րատև գուշակումներ. յերկարատև գուշակումներ արվում են 3 որ-  
տաջ, 7—10 որ տաջ և մի ամբողջ սեզոնի համար՝  $2\frac{1}{2}$  ամիս  
տաջ: Սովորաբար կարճատև գուշակումներ արվում են վոչ միայն  
մետեորոլոգիական առանձին տարրերի շերտաստիճանի, ամպամա-  
ծության, քամիների բնույթի փոփոխման մասին, այլև այս կամ  
այն յերևույթը տեղի ունենալու ժամանակի մասին:

Յերկարատև գուշակումները տալիս են առաջիկա յեղանակ-  
ների ընդհանուր բնութագրումը, այսպես՝ ձմեռը տաք կլիմի,  
թե՛ ցուրտ, ամառը յերմաշտ, թե՛ անձրևային, կամ թե տալիս է  
վերոջ ժամանակաշրջանի յեղանակների բնութագրումը:

Ամբողջ սեզոնի յեղանակների նախորոք գուշակումը դյու-  
զատնտեսական աշխատանքների համար խոշոր նշանակու-  
թյուն ունի:

Գարնան սկզբի բնույթի մասին պրոգնոզ ստանալը հնա-  
րավորություն կտա իր ժամանակին սլանավորել նախաքանքային  
և ցանքային բոլոր աշխատանքները: Իր ժամանակին խիստ ձգմ-  
բան մասին յերկարատև գուշակման միջոցով պրոգնոզ ունենալը  
հնարավորություն կտա իր ժամանակին թաղել այգիները, ծած-  
կել պտղատու ծառերը:

Բույսերի տերևներից և ցողուններից մշտապես տեղի յե-  
րևում ջրի գոլորշիացում:

Բարձր շերտության և քամու ժամանակ գոլորշիացումն ուժե-  
ղանում է և բույսն ավելի շատ է ջուր կորցնում: Ենթիվ արմա-  
տային սխտեմի ծծող ներգործության, գոլորշիացած ջրի փոխա-  
րեն հողի ջուրը ցողունի միջոցով անցնում է տերևներին: Յերազ-  
տի ընթացքում, յերբ յերկարատև, յերբեմն ամիսներով անձրև-  
ներ չեն գալիս, հողի ջուրը սլակասում է թե անընդհատ գոլոր-  
շիացման շնորհիվ դետնի յերեսից և թե տերևներից: Յերբ անձ-  
րևների բացակայության պատճառով բուսահողի ջրի սլակասը  
չի լրացվում, իսկ բույսի մեջ գոլորշիացման ճանապարհով տե-  
ղի ունեցած խոնավության սլակասը չի լրացվում արմատային  
սխտեմի ներծծումով բուսահողի մեջ՝ ջրի անհրաժեշտ քանա-  
կության բացակայության պատճառով՝ բույսի աճումը կանգ է

առնում, բույսն սկսում և դանդաղ թառամել, և բերքը վոչնչա-  
նում և: Չոր և տաք քամիներից, այսպես կոչված՝ խորշակներից  
(суховей) առաջացած յերաշտը բեցքի համար կորստաբեր և:

Չոր և տաք քամիների կամ խորշակների ծագումը սովորա-  
բար 2 տեսակ է լինում՝ դաշտային և լեռնային: Խորշակները փշե-  
լով դաշտերից ստեղծված խոնավությամբ՝ առաջացնում են ուժեղ  
գոլորշիացում տերևներից և ցողուններից: Բույսերից գոլորշիա-  
ցած ջուրը չի ձեռնում տեղում, այսինքն՝ բույսերի շրջանում, այլ  
ցրվում է քամուց, վերահաս չոր քամիներն ավելի ու ավելի  
ուժեղացնում են գոլորշիացումը:

Խորշակները փշելիս ողի մեջ հաճախ բարձրանում և մեծ  
քանակությամբ ամենամանր փոշի՝ բազկացած հանքային մանր  
նյութերից և մանրիկ ավազներից և տարվում է հեռու: Ողի մեջ  
յերկար բռնում է չոր մառախուղ: Չոր մառախուղի ավազի մաս-  
նիկները լողալով մթնոլորտի մեջ՝ կլանում են արևի եներգիան,  
տաքանում են, նրանց ջերմությունն ավելի բարձր և լինում, քան  
թե ողի ջերմությունը: Խորշակները չոր մառախուղով առավել ևս  
ձուսա են պատճառում բույսերին: Բարձր ջերմություն ունեցող փո-  
շու մասնիկները ծածկելով տերևները՝ ավելի ևս ուժեղացնում են  
գոլորշիացումը: Սովորական յերաշտի ժամանակ նրա ազդեցություն-  
ը բույսի վրա տեղի յե ունենում բուսահողի կողմից՝ ներքևից,  
իսկ խորշակների ժամանակ՝ վերևից ներքև:

Խորշակները սովորաբար սկսում են փշել կեսօրից և դիշեր-  
վա դեմ աստիճանաբար հանդարտվում են:

Խորշակների ժամանակ քամու արագությունը մեծ չափերով  
տատանվում է թույլ քամուց մինչև փոթորկի ուժը: Հայաստա-  
նում չոր և տաք քամիները գլխավորապես փչում են հարավա-  
յին և հարավ-արևմտյան ուղղությամբ: Բամու առաջանալու տե-  
ղը, ինչպես յերեվում է, ընկնում է Հայաստանի սահմաններից  
դուրս: Բամիները ներթափանցում են Պարսկաստանից և Թյուրք-  
իստանից: Չունենալով մետեորոլոգիական սվյաչներ՝ Թյուրքիստանի  
և Պարսկաստանի տերիտորիաներն ընդգրկող սինոպտիկական քար-  
տեղներ՝ դժվար է դատել խորշակների առաջացման և անտիցիկ-  
լանների ու ցիկլոնների հետ նրանց ունեցած կապի մասին: Խոր-  
շակների հատկանիշն է ողի շատ չորությունը և ողի բարձր ջեր-  
մությունը, յերբ ողի հարաբերական խոնավությունն ընկնում է  
մինչև 11 տոկոս: Համեմատելով 1929, 1932 1933 թ. թ. հացահա-  
տիկների բերքը Հայաստանում տեսնում ենք, վոր 1929 թ. լավ

բերք ե ստացվել, միջին թվով Հայաստանում բոլոր հացահատիկ-  
ների նկատմամբ՝ 9,0 ցենտներ մի հեկտարից: 1932 թ. վատ բերք  
ստացվեց, այն ե՝ 5,1 ցենտներ մեկ հեկտարից. 1933 թ. բերքը  
շատ ավելի բարձր ե, քան 1932 թ. և մի քիչ ցածր՝ 1929 թ. բեր-  
քից, այն ե՝ 8,4 ցենտներ մեկ հեկտարից:

Յերեք տարվա ընթացքում հողի պայմանները չեյին կարող  
այնպես ուժեղ փոխվել, վոր ազդեյին բերքատվութան վրա.  
նույնը կարելի յե ասել և ազրո-տեխնիկական միջոցառումների  
մասին: Յերեք տարվա մետեորոլոգիական պայմանները համեմա-  
տելով՝ տեսնում ենք, վոր 1932 թ. յերբ բերքը վատ եր, աչքի յեր  
ընկնում խորշակային որերի շատությամբ: Խորշակները չոր և  
տաք քամիներ են, փչում եյին 1932 թ. հունիսին, հուլիսին և  
ոգոստոսին: Լեռնականի շրջանում հունիսյան չոր և տաք քամի-  
ների ժամանակ հացահատիկները գտնվում եյին ծաղկման Փա-  
ղում, իսկ հուլիսյան չոր և տաք քամիների ժամանակ՝ մոմային  
հասունության Փաղում:

Ախտայի շրջանում չոր և տաք քամիների ժամանակ (խորշակ-  
ներ) հուլիսի 2-րդ դեկադում աշնանացանքը հասակակալման Փա-  
ղումն եր. հուլիսի 3-րդ դեկադում չոր և տաք քամիների (խոր-  
շակներ) ժամանակ գարնանացանքը հասկ լցնելու (налив) Փա-  
ղումն եր գտնվում:

Ապարանում հուլիսի 2-րդ դեկադի սկզբում չոր և տաք քա-  
միների ժամանակ գարնանացանքը գտնվում եր հասակակալման  
Փաղում, 2-րդ դեկադի վերջում խորշակները դուրսադիպեցին ծաղկ-  
ման Փաղին:

1933 թ. խորշակները փչում եյին մայիս և ոգոստոս ամիս-  
ներին, առանձնապես ուժեղացան ոգոստոսի վերջին: Մայիս ամսին  
խորշակների ժամանակ շատ շրջաններում գարնանացանքը 2-րդ  
և 3-րդ տերևների դարգացման Փաղումն եր. լեռնային շրջաննե-  
րում՝ գարունն ուշ սկսվելու պատճառով՝ ցանքն ուշացավ, և  
սերմերը դեռ չեյին ծլել: Աշնանացանքը թփակալման Փաղումն եր:

1933 թ. ոգոստոսը չորային եր, շատ շրջաններում ամբողջ  
ամսվա ընթացքում անձրև չեկավ: Սևանում (Յելենովկա) ոգոստոս  
ամսվա ընթացքում անձրև տեղաց 0,5 միլիմետր, Լեռնականում՝  
0,1 միլիմետր, բայց դա այնքան քիչ եր, վոր չեր կարող խոնավաց-  
նել հողը: Խորշակները փչում եյին ոգոստոսին, յերբ հացահատիկ-  
ները գտնվում եյին մոմային հասունության Փաղում, կամ արդեն  
քաղված եր: 1929 թ. հասկ լցնելու ժամանակաշրջանը դուրսադի-

պէց անձրևների շրջանին, և չկային չոր ու տաք քամիներ 1932 թ. ցածր բերքը բացատրվում է նրանով, վոր չոր քամիների ժամանակամիջոցը գուգադիպեց հացահատիկների ծաղկման և լցվելու ֆազին և այդ ել վճակեց բերքի բախտը: Չոր և տաք քամիների ազդեցութեան շնորհիվ ստացվում է վտիտ, թեթևաքաշ և համարյա փուշ հատիկ: 1932 թ. չոր և տաք քամիները բռնելին մըթնոզորտի մեծ շերտ: Չոր և տաք քամիներ նկատվում էին Յանըխում՝ 2325 մետր բարձրութեան վրա: Չոր քամիներ նկատվել են նաև Արագածի բարձրադիր կայանում՝ 3250 մետր և ավելի բարձրութեան վրա: Չունենալով դիտողութեաններ մեծ բարձրութեանների վրա՝ դժվար է դատել չոր և տաք քամով բռնված մասսաների վերին սահմանը: Բարձրագույն և այգեգործական շրջանում խորշակներն առաջ են բերում բամբակի ծաղիկների կնգուղների վաղաժամ բացվելը, խաղողի և պտուղների վաղաժամ հասունացում: Ավստրալիայում՝ խորշակների շնորհիվ՝ խնձորները ծառերի վրա ընդունում են խորոված խնձորների տեսք: Մոսկվայում արվեստական կլիմայի լաբորատորիաներում խորշակների ուսումնասիրութեանը ցույց է տվել, վոր խորշակների ազդեցութեան տակ բույսը դադարել է աճելուց: Խորշակները, ինչպես վերևում ասացինք, ունեն և լեռնային ծագում: Յերբ հազեցման դրութեան մոտ քամին ճանապարհին պատահում է լեռնաշղթայի, ողային մասսան սկսում է բարձրանալ լեռան լանջով դեպի վեր: Բարձարնայիս ողային մասսան լայնանում է և ողի ջերմութեանն իջնում է. միջին հաշվով ամեն մի 100 մետր վերելքին ողային մասսայի ջերմութեանն իջնում է մեկ աստիճան: Ողի ջերմութեանն ընկնելիս առաջանում է հազեցում և հազեցած ողի մեջ ջրային գոլորշիների խտացում, վորի հետևանքով լանջի քամու դարձած կողմը, վորի վրայով բարձրանում է ողային մասսան, առաջանում է ամպ և տեղումներ են թափվում: Ջրային գոլորշիները խտանալիս գաղտնի ջերմութեանը աղատում է այն ջերմութեանը, վորը գոլորշիանալիս կլանել է ջրային գոլորշիները: Ջերմութեան իջնելը լրացվում է գոլորշիների խտացման ժամանակ ազատված գաղտնի ջերմութեանով և հետևյալ վերելքին ամեն 100 մետրին ջերմութեան աստիճանն իջնում է կես աստիճանով:

Հասնելով լեռան գագաթը, և յետե սարը բարձր է, ողային մասսայի ջերմութեանն աւժեղ չափով ընկած է լինում՝ համեմատած սկզբնական ջերմութեան հետ, վոր նա ունեւ սարի ստորոտից

Մեծերոյնգիական պայմանները խորտակների (суховети) ժամանակ

Գայ-նի անունը	Ողի ջերմության աստիճանը			Աբսոլյուտ խոնավությունը միլիմետրի երով			Հարաբերական խոնավությունը տոկոսներով		
	ժ. 7	ժ. 13	ժ. 21	ժ. 7	ժ. 13	ժ. 21	ժ. 7	ժ. 13	ժ. 21
Հունիսի 27—32 p.									
Բաշխյաննի	22,5	30,1	22,6	9,0	5,4	5,6	43	17	27
Քալիւն	20,1	27,2	20,0	8,5	4,8	6,2	48	17	36
Լենինական	19,8	28,2	20,5	10,1	4,6	10,1	53	17	56
Ախտա	16,9	25,7	16,5	9,5	5,2	10,8	65	21	77
Զաջուռ	15,3	23,6	16,0	9,4	5,5	11,0	71	25	80
Ալիքուչակ	16,9	23,2	18,8	9,1	5,3	7,9	63	25	49
Մարտունի	16,4	24,3	19,3	9,9	4,2	5,4	71	11	31
Ն. Բայազետ	16,0	25,6	15,4	9,3	7,6	10,7	68	31	82
Յանրիս	11,8	21,0	14,0	7,6	2,6	5,0	73	14	42
Ալադյազ	8,8	12,3	7,9	4,8	2,8	3,0	55	26	36
Հունիսի 28—32 p.									
Բաշխյաննի	21,7	28,5	22,1	5,6	4,9	3,9	29	17	20
Քալիւն	19,9	27,3	19,5	8,0	5,9	4,7	46	22	28
Լենինական	15,7	27,3	17,0	9,0	5,2	9,2	67	19	64
Ախտա	15,2	24,0	16,6	9,6	3,6	9,9	74	16	70
Ալիքուչակ	15,0	23,1	18,9	7,6	4,1	5,6	59	19	34
Մարտունի	17,4	23,9	18,2	8,4	4,3	6,3	56	19	40
Ն. Բայազետ	15,4	23,2	13,0	8,3	6,4	7,6	64	31	68
Յանրիս	11,0	20,0	14,0	5,4	2,6	3,8	55	15	32
Ղաջարուլաղ	17,0	21,6	17,2	5,1	3,9	4,1	35	20	28
Աբադյազ-Լեռն	6,6	10,5	6,0	3,6	2,7	2,7	49	28	39
Հունիսի 29—32 p.									
Բաշխյաննի	22,7	29,1	23,7	5,8	4,6	4,3	38	16	20
Քալիւն	18,8	26,6	19,4	7,1	5,4	4,7	43	21	28
Լենինական	14,4	26,7	19,8	9,9	4,9	—	73	18	—
Ղաջարուլաղ	17,1	22,5	17,2	4,8	4,9	4,7	32	24	32
Ախտա	15,1	24,2	16,4	7,5	4,5	9,9	58	20	71
Ալիքուչակ	15,7	23,0	16,3	6,9	8,6	6,1	51	17	44
Ն. Բայազետ	14,2	22,6	14,0	7,6	5,5	9,1	62	27	76
Յանրիս	11,6	20,4	13,2	5,2	5,1	5,5	51	29	48
Ալադյազ Լեռն.	6,8	11,7	9,0	2,5	2,1	3,4	34	20	40

Խոնավության դեֆիցիտ			Ամպամածություն			Հողմի ուղղությունը և արագությունը մի մետր մեկ վարկյանսով		
7	13	21	7	13	21	7	13	21
11,44	26,16	14,96	0	1	0	Հողմացույցը չէ աշխատել		
9,14	22,26	11,34	0	1	0	0	S 6	0
6,92	24,08	7,98	0	2	0	NE 1	SW 6	NE 7
4,94	19,56	3,28	0	0	0	NE 3	SW 4	E 6
3,64	16,34	2,63	1	8	0	NE 7	S 3	NE 5
5,34	16,02	8,37	0	1	0	0	WSW 8	NNW 3
4,79	19,28	11,92	0	1	0	SW 1	SSW 3	SW 1
4,58	17,02	2,42	0	1	0	0	SW 7	WNW 8
2,78	16,05	6,99	0	0	0	ENE 1	SSE 8	E 3
3,69	7,93	4,99	0	0	0	0	SW 6	WNW 2
13,87	24,28	16,05	0	0	0	Հողմացույցը չէ աշխատել		
9,43	21,32	12,30	0	0	0	0	S 1	N 1
4,38	22,01	5,33	0	0	0	NE 1	WSW 8	N 9
8,35	18,78	3,27	0	0	0	E 2	WSW 5	W 1
5,52	17,10	10,77	0	0	0	NNW 1	SSE 1	NNE 3
6,50	17,81	9,37	0	2	0	SW 1	NNE 1	SW 5
4,00	14,92	3,63	0	1	0	0	NE 6	0
4,44	14,94	8,19	0	0	0	0	SE 7	ENE 3
9,43	15,53	10,62	0	2	0	0	NNE 1	WSW 4
—	6,82	4,31	0	0	0	W 1	SW 3	N 2
14,89	25,62	17,68	0	1	0	Հողմացույցը չէ աշխատել		
9,17	20,73	12,19	0	0	0	0	SE 3	N 1
3,40	21,37	7,22	0	0	0	NNE 1	S 1	NE 7
9,82	15,54	10,02	0	0	0	NW 1	S 3	SSW 3
5,37	18,15	4,09	0	1	0	0	SW 2	NE 3
6,48	17,47	7,80	0	0	0	Հողմաց. լսվ չէ աշխ.		
4,54	15,06	2,89	0	1	0	0	NNE 4	N 1
5,04	12,87	5,88	0	1	0	0	SSE 7	ENE 3
4,91	8,21	5,21	0	3	0	NW 3	N 2	SW 2

նոր բարձրանալիս Այդ պատճառով ողային մասսայի մեջ պարու-  
նակվող ջրային գոլորշիներն ամպեր և տեղումներ դառնալով հաս-  
նում են սարի գագաթը՝ կորցնելով խոնավության վերջ մասը: Ող-  
ային մասսան ունենալով ցածր ջերմություն և պարունակելով սա-  
կավ քանակությամբ ջրային գոլորշիներ՝ սկսում է ցածրանալ լանջի  
քամուն դարձած հակադիր կողմով: Ողային մասսան վերին շերտե-  
րից գեպի վար իջնելիս՝ միջին թվով յուրաքանչյուր 100  
մետրին այդ մասսան մեկ աստիճան տաքանում է. ողային  
մասսան տաքանալով ավելի ևս հեռանում է հագեցած դրություն-  
ներից և լեռան ստորոտում հանդես է բերում բարձր ջերմություն  
և փոքր հարաբերական խոնավություն: Չոր և տաք քամիները  
այսպես կոչված՝ ֆիոնները, փչում են հաճախ վաղ գարնանը՝  
արագ կերպով հալեցնելով ձյունը, արագացնելով ջրերի գոլոր-  
շիացումը և ջրերի բարձրացումը գետերում ու գարնան վաղ գա-  
լուստը: Ֆիոնները ձմեռն առաջացնում են ողի ջերմության վե-  
րելք և ողի հարաբերական խոնավության ցածրացում. ֆիոններ-  
ները փչելիս ողի ջերմությունը միանգամից բարձրանում է: Փե-  
տրովարին իջելանում 35 րոպեյի ընթացքում ջերմությունը  
բարձրացել է 14 աստիճան. լինում է, վոր մեկ ժամվա ընթաց-  
քում ջերմությունը բարձրանում է 25 աստիճան: Ֆիոնները  
աշնանն ազդում են խաղողի ստուղների վաղ հասունանալու վրա:  
Հաճախ ֆիոնները լինում են Ալպերում, Անդրկովկասում, Շու-  
շում, Բուխարստում: Հայաստանում ֆիոնները փչում են Սեանի  
ավազանում, Արարատյան դաշտում, բայց հաճախ կրկնվում են  
և ավելի լավ արտահայտվում են Իջևանում: Իջևանում ֆիոններ-  
ները փչում են բացառապես հոկտեմբերից—տարի ամիսներին:  
Ֆիոններն ամենից շատ որեք լինում են դեկտեմբերին, հուն-  
վարին, մարտին: Ամենից շատ փչում են դեկտեմբերին: Ֆիոնները  
յերբեմն փչում են 5 որ շարունակ, բայց մեծ մասամբ փչում  
են մի որ ընդմիջումներով: Յերբ լեռներից ցածրանում է քամին՝  
ջերմությունը բարձրանում է և շատ կարճ ժամանակամիջոցում  
ողի հարաբերական խոնավությունն ուժեղ կերպով պակասում է:  
Յերբ քամին կտրվում է, ողի ջերմությունը նորից պակասում է,  
վորին համեմատաբար ավելանում է ողի հարաբերական խոնա-  
վությունը: Ֆիոնները գիշերով փչելով՝ բարձրացնում են ջեր-  
մությունը: 1934 թ. փետրվարին 18 որ փչում էին ֆիոնները,  
վերից 12 որ գիշերներն էին փչում: Այդ քամիները բարձրացնելով  
ողի ջերմությունը՝ բարենպաստ պայմաններ են ստեղծում, վոր

դարձնել վաղ սկսվի Իջևանում: Հայաստանում Իջևանն աչքի  
 յե ընկնում գարնան վաղ սկսվելով: Գարունը շուտ և գալիս նաև  
 Մեղրում և Ալլահովերդում, բայց, շնորհիվ Ֆիոնիերի, Իջևանում  
 գարունը 15—16 ոք շուտ և սկսվում:

Ղերմուքյան բնթացք, ողի խոնավությունը, Ֆիոնի ժամանակ քամու  
 ուղղությունը յեվ արագությունը:

Ողի Ղերմուքյունը	Քամու ուղղու- Հարար. խոնավու. թ. թյունն ու արագու- թյունը								
	7 ժ.	13 ժ.	21 ժ.	7 ժ.	13 ժ.	21 ժ.	7 ժ.	13 ժ.	21 ժ.
29/12	-3,6	7,3	-1,0	74	44	61	NNW 1	NNW 2	0
30/12	8,1	8,0	13,1	23	31	23	S 6	N 2	S 14
31/12	13,9	19,9	13,3	19	17	22	S 8	SSW 6	S 20
1/1	7,7	14,6	7,3	29	24	34	SSW 4	N 4	SE 4
2/1	-0,2	6,7	0,7	60	53	76	0	0	0

Ֆիոնն սկսեց փչել դեկտեմբերի 30-ի գիշերվանից, դեկտեմբերի  
 31-ի յերեկոյան դեմ ուժեղացավ՝ բարձրացնելով ողի Ղերմուքյուն-  
 նը, քչացնելով ողի հարարերական խոնավությունը: Հունվարի 2-ի  
 գիշերը քամին կարվեց, ողի Ղերմուքյունն իջավ և հարարերական  
 խոնավությունը շատացավ: Թե՛ անձրևներ չգալուց, թե՛ չոր ու  
 սաք քամիների՝ խորշակների հետևանքով առաջացած յերաշտն  
 ընդհանրապես մնասակար և անդրադառնում բերքի վրա: Լինում  
 են տարիներ, վոր վոչնչացնում և բերքը: Յերաշտի ուսումնա-  
 սիրությունը և նրա դեմ պայքարելու միջոցների վորոնումն ամե-  
 նաակտուալ խնդիրներից մեկն է: Ագրոտեխնիկական միջոցառում-  
 ներով և արհեստական անձրևով պայքարում են յերաշտի դեմ:  
 Ագրոտեխնիկական միջոցառումներ են՝ հողի մեջ բաժականաչափ  
 խոնավություն պահպանելը՝ մոլախոտերը հեռացնելու, հողը փափ-  
 կացնելու, վորոգման, սլարարտացման, ձյունը դաշտերում պահե-  
 լու միջոցով, սելեկցիայի ձևով, յերաշտին ավելի դիմացող տեսակ-  
 ներ ստանալով և գեր-վաղաժամ ձմեռնամուտ ցանքսի միջոցով:

Յերաշտի դեմ պայքարելու համար՝ վերջին ժամանակներս  
 սկսել են լայնորեն ոգտագործել արհեստականորեն անձրև ստա-  
 ջացնելու մեթոդը: Մթնոլորտում դանազան քանակությամբ գտնը-  
 վում են ջրային գոլորշիներ. վորպեսզի ջրային գոլորշիներից  
 ամպ կազմվի, իսկ ամպից՝ անձրև, դրա համար անհրաժեշտ է, վոր  
 մթնոլորտը ջրային գոլորշիներով հասնի հազեցման դրու թյան

խոյն հազեցած մասսայից խտացման ճանապարհով կազմվի ամպ,  
ամպից՝ խոշոր և մանր կաթիլները միաձուլվելու միջոցով՝ անձ-  
րև: Ջրային գոլորշիների հազեցման համար անհրաժեշտ է, վոր  
որի ջերմությունն իջնի: Բարձր ջերմության ժամանակ հազեց-  
նելու համար մեծ քանակությամբ Ջրային գոլորշի յի պահանջ-  
վում, ցածր ջերմության ժամանակ հազեցման համար Ջրային  
գոլորշիների պահանջը քիչ կլինի: Հազեցած ուռային մասսային,  
Ջրային գոլորշիների արագ խտացմանը նպաստում է որի մեջ  
գտնվող հիդրոսկոպիական փոշին: Յուրաքանչյուր փոշի այն մի-  
ջուկն է, վորին շրջապատում են Ջրային գոլորշիները: Ջրային  
գոլորշիների խտացումը հնարավոր է և մաքուր մթնոլորտում,  
առանց փոշու, բայց այն ժամանակ մթնոլորտը պետք է լինի շատ  
հազեցած: Հիդրոսկոպիական փոշին, վոր հանդիսանում է խը-  
տացման միջուկը, արագացնում է Ջրային կաթիլների կազմա-  
կերպման սրտցեսը և ամպի կազմակերպումը: Աորպեսզի կազմ-  
ված ամպից անձրև դա, դրա համար անհրաժեշտ է Ջրային կա-  
թիլների միաձուլվելն իրար հետ: Ելեկտրական հակառակ նշան-  
ների ներկայությունը մթնոլորտի մեջ նպաստում է ամպի Ջրա-  
յին կաթիլների միավորվելուն ավելի խոշոր կաթիլների: Մթնո-  
լորտի մեջ գտնված Ջրային գոլորշիների խտացման և ամպ  
կազմելու համար բաց են թողնում մթնոլորտի մեջ գանաղան  
քիմիական բաղադրություններ, ինչպեսին են՝ ամոնիակը, բո-  
րակածնի օքսիդները, ուղոնը և Ջրածնի գերօքսիդը: Ելեկտրական  
սլարայիչները մթնոլորտի մեջ նույնպես ոժանդակում են խտաց-  
ման միջուկներ կազմելուն:

Աորպեսզի կազմակերպված ամպի մեջ Ջրային կաթիլները  
միասին իրար հետ և կազմեն ավելի մեծ կաթիլներ ու անձրև  
ստացանա, ամենամանր փոշու կամ թե լուծույթի ձևով քիմիա-  
կան նյութերով ներգործում են ամպի վերևից, ընդ վորում  
նյութերին հաղորդվում է ելեկտրականություն՝ ամպի նշանին  
հակառակ նշանով:

Ոգտագործելով արդեն բնական ճանապարհով գոյացած ամ-  
պը, սավառնակից՝ ամպի վերևից շող տալով ելեկտրականացած  
քիմիական նյութեր՝ ամպի նշանին հակառակ նշաններով: Բա-  
վական քանակությամբ անձրև է ստացվում, յեթե յերկնքի մոտ  
կեսը կամ կեսից ավելին ծածկվում է ամպերի համատարած  
ծածկոցով և քիչ է ստացվում յերկնքի յերեսին դատ դատ ցրված  
ամպերից Cumulus: Չոր և տաք քամիների դեմ պայքարելու

համար կիրառվում են սույնպես և անտառների անկեղծ ձևը: Հայտ-  
նի յե, վոր զանազան տեսակ արգելքները քամու արագությունը  
պակասեցնում են: Մոլերի և ովկիանոսների վրա, վորտեղ դի-  
մադրությունը փոքր է, քան թե ցամաքի մակերևութի վրա,  
քամու արագությունը մեծ է: Յերկրի մակերևութի վրա, վոր-  
տեղ դիմադրությունը մեծ է, քամու արագությունը թույլ է:  
Մթնոլորտի վերին շերտերում, ուր դիմադրություն չկա, քամու  
արագությունը մեծ է: Բուսականությամբ ծածկված տարածու-  
թյան վրա քամու արագությունը նույնպես փոքրանում է,  
առանձնապես շատ է պակասում քամու արագությունը խիտ  
անտառի ներսում: Ըստ Տիմիրյազովի անվան աղաղակիայի դիտո-  
ւթյունների՝ անտառի յեղերքից 50 մետր տարածության վրա  
դիպի անտառի խորքը քամու արագությունն սկզբնական արա-  
գության 55—78 տոկոսն է կազմում, իսկ 70 մետր տարածու-  
թյան վրա՝ 23—27 տոկոսը, 100 մետրի վրա՝ 7 տոկոսը և 200  
մետրի վրա՝ 2—3 տոկոսը:

Այսպիսով չոր և տաք քամիների դեմ սլառվար հանդիսա-  
ցող առատաների տնկումը, նախ՝ թուլացնում է քամու արագու-  
թյունը և, յերկրորդ՝ չոր, և տաք ոդային մասսան անտառի միջով  
անցնելիս շերտությունը պակասեցնում է, վորի համեմատ և  
պակասում է ողի չորությունը:

Չոր և տաք քամիները փչելիս ոդային մասսան մթնոլոր-  
տի մեջ բավականին հաստ շերտ է կազմում: Տաք և չոր ոդային  
մասսան շարժվելիս բարձր կլինի անտառային մասսիվից և վեր-  
ջինիս յետևն անցնելիս չի իջնի դաշտը, շնորհիվ այն բանի,  
վոր անտառի հետևը դաշտերի վրա կլինի ավելի խիտ և ավելի  
խոնավ ոդային մասսա, վորի վրայով շարժվում է ինքը, այսինքն՝  
թեթև, ավելի պակաս խոնավություն ունեցող ողի տաք ու  
չոր մասսան: Բերքատվությունը բարձրացնելու համար ոգտա-  
գործվում է ձմեռվա ընթացքում կուտակված խոնավությունը:  
Վորպեսզի գարնանային ուշ ցանքերը չորությունից չտուժեն և  
գարնանային աշխատանքների համար քարշող ուժի մի մասն  
ազատվի, կատարվում է գեր-վաղաժամ ցանք: Փորձադաշտերի  
դիտողությունները ցույց են տվել, վոր վաղ ցանքերն ավելի  
քիչ են յենթակա գյուղատնտեսական վնասատուների ավերածու-  
թյուններին, վոր արմատային սխտեմը լավ է զարգանում, բույ-  
սերի յերաշտադիմացկունությունը մեծանում է, բարձրանում է  
նաև բերքը:

Գեր-վաղաժամ ցանքերի ժամանակը բաժանվում է յերկու յինթամամանակի: Առաջին ցանքն անում են շարքացաններով՝ սառած հողին նստծ ձյան վրա, 2-րդ ցանքն անում են սավառնակից՝ ձյունածածկը վերանալուց հետո՝ ցեխի վրա: Այնտեղ, ուր սավառնակներ չլինելու պատճառով հնարավոր չէ ցանքը սավառնակներով կատարել, ցանում են շաղացան (ձեռքով), վաղ առավոտյան, յերբ ձյան վերանալուց հետո ցեխը գիշերը սառած է լինում: Ցանքը փոցխում են դաշտ դուրս գալու առաջին խկ հնարավորության դեպքում: Նվան դեպքերում սովորաբար նոր-մայից 20 տոկոս ավելի սերմ են ցանում և պաշտպանում են թռչուններից մինչև դաշտը փոցխելը:

Ծանր կավային հողերն այդ ցանքերի համար անպետք են, հողը թեթև կառուցվածք պետք է ունենա, այսինքն՝ լինի ավաղային: Գեր-վաղաժամ ցանքերի համար պետք է ընտրել ձյունից շուտ ազատվող հողամասեր: Յեթե հողամասը հարթ չի, ապա ամենից լավ է ընտրել հարավային, հարավ-արևմտյան և հարավ-արևելյան լանջերը. գեր-վաղաժամ ցանքերի հողը դեռ աշնանը պիտի լավ պատրաստել, այսինքն՝ աշնանավար անել:

Հիդրո-մետեորոլոգիական սպասարկման խնդիրն է յերկարատև պրոգնոզի միջոցով տալ ձյունահալքի և ձյան շերտի վերանալու ժամանակը և դրանով խկ վորոշել աշխատանքներն սկսելու ժամկետները:

Գարնանացանի բերքի բարձրացման և գարնանային աշխատանքների համար քաջող ուժի մի մասը ազատելու նպատակով՝ գարնանացանքն անում են ձմեռնամուտին: Ուշ աշնանը ցանում են գարնանացան ցորեն: Հիդրո-մետեորոլոգիայի սպասարկման գլխավոր աշխատանքն այն է, վոր կարողանա նշել ձմեռնամուտի ցանքերի ժամանակը, վորը պիտի համապատասխանի հետևյալ յերկու պահանջներին, այն է՝ 1) հնարավորություն՝ դաշտում գյուղատնտեսական գործիքներով աշխատելու սերմերը փոցխելու և 2), վոր գլխավորն է՝ աշնանը սերմերը չծլեն:

Հիդրո-մետեորոլոգիայի սպասարկման նպատակն է պարզել առանձին կուլտուրաների սերմերի աճեցողությունը մինիմում ջերմաստիճանում, որպեսզի այդ մինիմում ջերմաստիճանի չինելու ժամանակը հողի 5, 10 սանտ. խորության մեջ, վորպեսզի ցորենի սերմերն աճեն, ապա հողի որական միջին ջերմաստիճանը 5 սանտիմետր խորության մեջ պիտի լինի 3, 5—4, 8 աստիճան, արևածաղկի սերմերի աճման համար հողի նույն խորու-

թյան միջին շերտաստիճանը պիտի լինի 3,5 աստիճան, իսկ 10 սանտիմետր խորության մեջ 4,0 աստիճան: Յերեանում 5 սանտ. խորության մեջ 0 աստիճանից ցածր շերտաստիճան լինում է դեկտեմբերի 2-րդ դեկադից սկսած: Դեկտեմբերի 1-ին դեկադից սկսած՝ նոյն այդ խորության մեջ որվա միջին շերտաստիճանը տատանվում է 4,0—0,5 աստիճանի միջև:

Լենինականում հողի 5 սանտիմետր խորության մեջ շերտաստիճանը մինչև դերո աստիճան իջնում է մոտավորապես նոյեմբերի 3-րդ դեկադից սկսած. նոյեմբերի 2-րդ դեկադի սկզբից որվա միջին շերտաստիճանը 5 սանտ. խորության մեջ իջնում է մինչև 3,7 աստ., մինչև 1,0 աստ.:

Չմեռնամուտի ցանքեր Լենինականում կարելի չե անել նոյեմբերի 2-րդ դեկադի սկզբից մինչև նոյեմբերի 3-րդ դեկադի վերջը, այն հաշվով, վոր սերմերն այդ ժամանակամիջոցին չեն ծլի:

Մի քանի տարիների ընթացքում ուսումնասիրելով հողի վերին շերտի շերտաստիճանը՝ կարելի չե վորոշել շերտաստիճանի այն ժամանակը, յերբ կարելի չե ձմեռնամուտի ցանք անել և սերմերը մինչև ձյան գալը ծլելը չեն տա: Բացի այդ անհրաժեշտ է յերկարատև գուշակումների միջոցով վորոշել, վոր արդյոք յերկար տարիների տվյալներից վորոշված ժամկետից հետո չեն լինի նոր տաք յեղանակներ, վորի ժամանակ սերմերը չեն կարող ուռչել և ծլել:

Ունենալով մի քանի տարվա ֆենոլոգիական դիտողություններ հացահատիկների վերաբերյալ, այսինքն՝ դիտողություն հացահատիկի դարգացման վերաբերմամբ, կարելի չե առաջ պրոգնոզ տալ գարնանացան և աշնանացան կուլտուրաների մոմային հասունության շրջանն սկսվելու մասին: Իրա համար անհրաժեշտ է հանել յերկու ֆազերի այն է՝ հասկ հանելու և մոմային հասունության միջև յեղած որերի միջին թիվը մի քանի տարվա ընթացքում: Այդ թնտերվալն ավելացնելով հասկակալելու փաստական ժամանակն սկսվելուն՝ կստացվի մոմային հասունության ժամանակի սկիզբը: Այդ ձևով կադամծ պրոգնոզի մեջ անհրաժեշտ է մտցնել ուղղումներ՝ յեղանակի յերկարատև պրոգնոզի համաձայն, վորովհետև յեթե ամառն անձրևային է և ամպոս, այդ դեպքում հասունանալու ֆազն ուշ կսկսվի, իսկ յեթե, ընդհակառակը, ամառը լինի չորային հասունության ֆազը շուտ կսկսվի:

Այսպիսի պրոգնոզի նշանակությունը շողժողկուստի պլա-

նաւորող, դեկավարող և տնտեսական այլ կազմակերպութիւններէ համար մեծ եւ Հասունանալու ժամկետներէ պրոգնոզը և, դրան զուգընթաց, բերքահավաքի կամպլանիայի աշխատանքներն սկսելը հնարավորութիւն կտա պլանավորելու բերքահավաքի մեքենաների, բանվորական ուժի բաշխումը և հացամթերման աշխատանքները:

Գյուղատնտեսութեան զարգացման համար խոշոր նշանակութիւն ունի յերկրի ջրային ռեսուրսներն ու նրա ռեժիմը ճանաչելը: Յերկրի ջրային ռեժիմն ուսումնասիրող հիդրոլոգիայի առաջ ծառայած են ջրամատակարարման բոլոր հարցերը: Ջրային բոլոր աղբյուրները, ստորերկրյա (գրունտային) գետերը և լճերն ուսումնասիրելով՝ խորհտնտեսութիւններին, կոլտնտեսութիւններին և ՄՏԿ մատակարարել բավականաչափ քանակութեամբ և լավորակ ջուր: Հայաստանում մեծ տարածութիւններ կան, վորոք իրենց ջերմութեան պայմաններով բարենպաստ են տեխնիկական կուլտուրաներ՝ բամբակ, խաղող զարգացնելու համար: Սակայն այդ տարածութիւնները, ջուր չլինելու և մթնոլորտային անբավարար տեղումների պատճառով չեն ոգտագործվում: Հիդրոլոգիայի խնդիրն է՝ ջրային աղբյուրներ գտնել և վորոգման միջոցով այդ հողերն ոգտագործելի դարձնել: Կան նաև մեծ մասսիվներ եւ, վորտեղ վոչ միայն ջրի պակասութիւնն չի գգացվում, այլև, ընդհակառակը, խոնավութիւնը ճահիճներ առաջացնելու չափով շատ եւ ատանց ցամաքեցնելու հնարավոր չե գյուղատնտեսութեան համար ոգտագործել: Հիդրոլոգիայի խնդիրն է՝ ուսումնասիրութիւններէ միջոցով ցամաքեցնել այդ ճահիճները և գյուղատնտեսութեան համար այդ տարածութիւններն ոգտագործելի դարձնել, տվյալ ջրավազանի ռեժիմն ուսումնասիրելու, ջրի մաքսիմում բարձրութիւնը և մինիմում անկումը պարզելու միջոցով կանոնավորել վորոգելու ժամկետները:

Հիդրոլոգիայի խնդիրների մեջ եւ մտնում նաև լճերի ու լճակների ուսումնասիրութիւնը՝ ձկնաբուծութեանը և ձկնորսութեանը դարկ տալու նպատակով:

Չյունածածկոցի շերտի ուսումնասիրութիւնը, ձյան մեջ ջրի պաշարի պարզումը, սառցադաշտերի ուսումնասիրութիւնն կատարելը, վորպէսզի վորոգման նպատակներով պլանաչափ կերպով բաշխվեն գարնան ջրերը և ձյունահալքի ժամանակ կանխվեն գետերի հորդացումն ու հեղեղները:

Մի շարք բարձրագիր լեռնային արոտներում, վորտեղ ա-

մատները ջուրը խիստ պակասում և և այդ հանդամանքն անդրադառնում և անասունների վրա, հիգրոլոգիայի խնդիրն և՛ ուսումնասիրել այդ արոտավայրերի ջրային բալանսը և ջրապաշարի տեսակետից ավելի հարմար արոտավայրեր հայտաբերել:

Մետեորոլոգիական գործոնները մեծ ազդեցություն են ունենում անասունների վրա, վոչխարի բրդի զարգացման վրա: Արոտների մետեորոլոգիական գործոնների ազդեցությունն անասունների վրա, բրդի զարգացման վրա մեզ մոտ ուսումնասիրված չէ: Հիգրո-մետեորոլոգիական սպասարկման հիմնական խնդիրներից մեկն էլ արոտների անասունների և վոչխարի բրդի զարգացման վրա հիգրո-մետեորոլոգիական գործոնների ազդեցության ուսումնասիրությունն է: Անդլիական գործարանատերերը վորևե այլ յերկրից բուրդ բերել տալիս ամենից առաջ հարցում են անում տեղի մետեորոլոգիական տվյալների մասին: Այլայլան արոտներն ուսումնասիրված են ըստ շրջանների, ուսումնասիրված են ըստ խոտերի տեսակների: Այս կամ այն հատկության բուրդ ստանալու նպատակով, խտալացիք վոչխարը քշում են այն արոտները, վորոնք իրենց համար ցանկալի յեն:

### ՀԻԴՐՈ-ՄԵՏԵՈՐՈԼՈԳԻԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐԾՈՒՄ

Կլիմայի, յեղանակի և ջրերի աեժիմի ճանաչողությունն անհրաժեշտ բն կապված է յերկրի սլաշտպանության բոլոր հարցերի հետ: Պատմությունից շատ որինակներ կարելի յե բերել այն մասին, թե ինչպես պատերազմական գործողությունների ժամանակ յեղանակի պայմանները վճռական դեր են խաղացել:

Սևաստոպոլի պատերազմի ժամանակ՝ 1854 թ. նոյեմբերի 14-ին, դաշնակիցները՝ Ֆրանսիայի, Անգլիայի և Թուրքիայի նավատորմի ը, շնորիվ Սև ծովի վրա տեղի ունեցող կատաղի փոթորկի, Բալակլավոյի մոտ, Սևաստոպոլից 14 կիլոմետր հեռավորության վրա ջախջախվեց և ուստական գործն ոգտվելով դրանից, հաղթանակ տարավ:

Պետրոս Մեծի ժամանակ՝ 1700 թվին Շվեդական թագավորը, ոգտվելով Նարվի տակ առաջացած կատաղի բքից, հաղթեց ռուսներին: 1812 թ. Նապոլեոնի գործերը Ռուսաստանում հանդիպելով խստագույն սասնառանխների և համապատասխան հազուստ շունենալու պատճառով ստիպված յեղան նահանջել:

1917 թ. համաշխարհային պատերազմի ժամանակ Ստալինի գեորգի  
հեղեղումը դժվարին կացութիւնն ստեղծեց ուսական գործի  
շարժման համար և ոժանդակեց գերմանացիներին ուսական  
բանակը ջարդելու գործում: 1920 թ. քաղաքացիական կռիւնե-  
րի ժամանակ կարմիր բանակը հաջողութեամբ ոգտագործելով  
Ազովյան ծովի մոտ Սիվաշի նեղուցի չորութիւնը՝ արագորին  
շարժվեց դեպի Ղրիմ:

Պատերազմական գործողութիւնների պատրաստվելու դեպ-  
քում անհրաժեշտ է, վոր հրամանատարութիւնը Հիդրո-մետեո-  
րոլոգիական կազմակերպութիւններից նախորոք ստանա ապագա  
պատերազմական գործողութիւնների շրջանի կլիմայի և ջրային  
ուժիւրի լրիւ բնութագիրը:

Չմեռային սառնամանիքների տևողականութիւնը, ձմաւն ըն-  
թացքում ողի ջերմաստիճանի բացարձակ միւնիումը, ամաւն ամիւ-  
ների ընթացքում շոգերերի տևողականութիւնը, ամաւն ընթաց-  
քում ողի մաքսիւմը ջերմաստիճանը—անա հարցեր, վորոնք անհ-  
րաժեշտ են բանակի զգեստավորութեան և ուղիւնական գործողու-  
թիւնների խնդիրները լուծելու համար:

Չիւնի ծածկոցի տևողականութիւնը և խորութիւնն ան-  
հրաժեշտ են բանակի առաջխաղացման և գինամթելի տեղա-  
փոխութեան հետ կապված հարցերը պարզելու համար: Հողի  
սառչելու խորութիւնը, տևողականութիւնը կապված է ամրու-  
թիւնների կառուցելու, խրամատների փորելու, ելեկտրական մալուխ-  
ների (кабель) անցկացնելու հարցերի հետ: Քամիների տիրող ուղ-  
ղութիւնն ու արագութիւնն անհրաժեշտ է իմանալ ողային,  
ինչպես և հրետանային հրաձգութիւնների համար. ինչպես նաև  
անհրաժեշտ է իմանալ մառախուղների, ամպրոպների և հեղեղնե-  
րի կրկնումների հաճախակիութիւնը: Անհրաժեշտ է նաև ճանա-  
պարհների և վայրերի լրիւ բնութագրումը, տեղումներն անցնե-  
լուց հետո հողի կրած փոփոխութեան բնույթը, նրա կազմութիւնը:

Ռազմական հրամանատարութիւնը կլիմայական բնութա-  
գրման հետ միասին, նախորոք պիտի ունենա նաև պատերազմա-  
կան հավանական գործողութիւնների վայրի ջրային ուժիւրի—  
գետերի, ջրերի, լճերի, ճահիճների ստորերկրյա, գրունտային և  
այլ ջրերի լրիւ բնութագիրը: Պատերազմական գործողութիւնների  
շրջանում խստիւ ջրի առկայութիւնը հանդիսանում է ամենալուրջ  
խնդիրներից մեկը, վորովհետև տարւիւ շոգ ժամանակ՝ ամառը  
անջրդի շրջաններում խմելու ջրի բացակայութիւնը կարող է

կաղմալուծել շատ լավ կաղմակերպված բանակը: Ահա վարը պի-  
տի իմանա տվյալ վայրի ստորերկրյա և գրունտային ջրերի, նը-  
բանց խորության, պաշարի ու քանակի առկայության մասին,  
վորովհետև բաց ջրավազանների խմելու ջրից ոգտվելը վտանգա-  
վոր է — թշնամու կողմից նրանք կարող են թունավորված լինել:  
Մյուս կողմից՝ ստորերկրյա և գրունտային ջրերն ամբողջուններ  
կառուցելու ժամանակ խանգարող գործոն են հանդիսանում,  
յերբեմն խրամատները լցվում են ստորերկրյա ջրերով:

Պատերազմական գործողությունների շրջանում նավազնաց  
գետերի ու լճերի առկայությունը հարմարություն է ստեղծում  
աղմական նավատորմի ոգտագործելու:

Յեթե պատերազմական գործողությունների շրջանում կան  
վոչ նավազնաց գետեր, լճեր ու ճահիճներ, ապա նրանց՝ վորպես  
պատենշներ՝ ոգտագործում են թշնամու շարժումների դեմ, այ-  
սինքն՝ արհեստական ամբարտակներով բարձրացնում են ջուրը և  
հեղեղում պատերազմական գործողությունների վայրերը, ինչպես  
համաշխարային պատերազմի ժամանակ բելգիացիք բացելով  
Իզերա գետի փականները՝ հեղեղեցին շրջակայքը և այն գեր-  
մանական բանակի համար անանցանելի դարձրին: Յեթե ճանա-  
պարհի վրա ճահիճներ կան, ապա այն հեղեղում են և անանցա-  
նելի դարձնում: Գետերի սառցի վրայով բանակի տեղափո-  
խության կարգը վորոշելու համար, դեկավարությանն անհրա-  
ժեշտ է իմանալ նաև գետերի ձմեռային աեժիմի և սառցի  
հաստության տեղեկությունների մասին:

Ավելի հարմար գետանց ընտրելու համար անհրաժեշտ է նաև  
մանրամասն ուսումնասիրել գետի յուրաքանչյուր մասը:

Կլիմայական և հիդրոլոգիական բնութագրումների բոլոր  
տվյալների հիման վրա՝ աղմական հրամանատարությունը, ըստ  
հնարավորության, մետեորոլոգիական պայմանների տեսակետից  
պատերազմական գործողությունների շրջանի, պատերազմելու յե-  
ղանակների և բանակի զգեստավորության համար տարվա ավելի  
բարենպաստ ժամանակն է ընտրում: Սակայն պատերազմական  
գործողությունների ժամանակ, բացի տվյալ շրջանի հիդրո- մետեո-  
րոլոգիական բնութագրումն իմանալուց, բանակի հրամանատա-  
րությունը աղմական գործողությունների մոմենտին Յեղանա-  
կի Ինստիտուտից յեղանակի և ջրային աեժիմի վերաբերյալ ին-  
ֆորմացիա պիտի ստանա: Տեղեկություններ պիտի ստանա նաև  
գրունտային և խճուղային ճանապարհների անանցանելիության

մասին, վորը վճռական մտնենտ ե հանդիսանալու հրետանային գործողությունների վայր ընտրելու և բանակին ազատական և այլ նյութեր մատակարարելու համար Ռազմական ղեկավարությունն իր համար վորև ե շահագրգռություն ներկայացնող մետեորոլողիական յերևույթի մասին նախազգուշացում պիտի ստանա, որինակ՝ ամպրոպ տեղատարափի հետ ուժեղ քամիներ, ջրերի բարձրացումը գետերում, լճերում, հեղեղումներ, մատախուղ և այլն:

Բանակի հրամանատարությանն անհրաժեշտ են նաև յեղանակի և ջրային ուժի մասին կարճատև նախազգուշակումներ: Վորոշ գործողությունների նախապատրաստվելու դեպքում, վորը տեղի պիտի ունենա մի առժամանակից հետո, մտաւարասպես մի ամիս հետո, բանակի ղեկավարը պիտի իմանա յեղանակի բոլոր պայմանները և յեղանակի պայմանների առնչությամբ՝ նաև ջրերի աւելումն այդ ամսվա ընթացքում:

**ՀԻԴՐՈ-ՄԵՏԵՈՐՈԼՈԳԻԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՍՊԱԱՐԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Ինչպես պատերազմական, նույնպես և քաղաքացիական ավիացիայի համար թռչելու տեսակետից անհրաժեշտ ե տվյալ ջրջանի ամպամածության բնութագրումը, այսինքն՝ յերկինքն ամպերով ծածկված լինելու տողոսը, ամպերի բաշխումն ըստ սեզոնների, տարվա վեր ժամանակին են լինում ավելի շատ պարզ որեք և վեր ժամանակ ամպամած որեր. գերակշռող ամպածեղերը և այլն: Անհրաժեշտ ե իմանալ ամպերում կատարվող բոլոր պրոցեսները, վորովհետև ողաչուի համար բոլորովին ել միևնույնը, չե, թե թռչելու ժամանակ ինքն ամպերի վեր մասում կլինի Յեթե թռչելու ժամանակ ողաչուն ընկնի ամպերի վերին սահմանին՝ Cumulus - ին մտա, որ տեղի յին ունենում վերը թաց ու վարընթաց հոսանքներ, ողային փթորիկներ, ապա նա կենթարկվի ավարիայի: Ողաչվի համար դժվար ե նույնպես թռչել խիտ stratus շերտավոր ամպերի միջով, վորովհետև դրանց միջից դժվար ե վորոշել իջնելու տեղը և դժվար ե ապարասը ղեկավարել: Թռչելու համար վտանգավոր են նույնպես strato-Cumulus շերտավոր-դիզված և Cumulo-Nimbus ամպրոպային ամպածեղեր՝ ինքնաթիռն ամպրոպային ամպերի և յերկրի միջով անցնելիս նրա միջով կարող ե պարպում առաջանալ, վորը կարող ե ինքնաթիռի և ողաչուի համար ապետով վերջանալ:

Ողագնացութեանն անհրաժեշտ ե ինչպես յերկրի յերեսի,  
նույնպես և մթնոլորտի վերին շերտերի քամիների ու նրանց  
թափի բնութագրումը: Այս բոլորը հնարավորութուն կտան թըռ-  
չելու համար ընտրել բարձրութեան ավելի բարենպաստ գոնա-  
Բարեհաջող քամու շնորհիվ ինքնաթիռը կստանա մաքսիմում  
արագութուն և կտնայի վառելանյութ: Ողաչվի համար տեսա-  
նելիութունը (վորքան հեռվում գտնվող առարկաները պարզ են  
յեղում) հսկայական դեր ե խաղում: Թռչելու համար խոշոր դեր  
ե խաղում նաև այն, թե տվյալ վայրը վորքան ե յենթակա մառա-  
խուղների:

Մառախուղներն ընդհանրապես ինչպես չորային, նույնպես  
և ծովային տրանսպորտի համար վտանգավոր են: Մառախուղի  
դեպքում մեքենավարը կամ նավավարը կարող ե դանդաղեցնել  
ընթացքը, բայց ողաչուն, ընկնելով խիտ մառախուղի շերտը՝  
կորցնում ե իր իրազեկութունն ինչպես թռչի հորիզոնակա-  
նութեան, նույնպես և վայրի նկատմամբ, իջնելու ժամանակ կողմ-  
նորոշվելու հնարավորութունն չի ունենում ու յենթարկվում ե ա-  
վարիայի: Ավարիաների մեծագույն մասը տեղի յեն ունենում  
ժառանգների հանդիպելու հետևանքով:

Ողանավակայանների տեղ ընտրելու համար նույնպես ան-  
հրաժեշտ ե իմանալ տեղի կլիմայական պայմանները: Հաճախա-  
կի մառախուղներով խոնավ տեղերն ողանավակայանների համար  
անսպասելի են: Ողանավակայանների համար անհարմար են նաև  
այնպիսի տեղեր, ուր տեղի յե ունենում ողի կուտակում, որի-  
նակ՝ կիրճերը և անտառով շրջապատված վայրերը:

Իր ժամանակին յեղանակների վերաբերյալ նախազուշա-  
կուսներ ստանալն՝ ողագնացութեան համար վճռական նշանակու-  
թեան ունի:

Յիժե ողակայանը տեղեկութուն ե ստանում մրրկային  
ամպրոպի շարժումների մասին, մանավանդ գիշերային, ապա թը-  
ռիչքը դողարեցվում ե, վորվհետև հնարավորութունն չի վնում  
ամպրոպից, մառախուղից, փոթորկից խուսափել և առաջ անցնել:

Ինքնաթիռից յուրաքանչուր թռչից առաջ ողանավակա-  
յանները տեղեկութուն են ստանում ճանապարհի թռչիչ շրջա-  
նի յեղանակի մասին, և նախազուշակուսներ՝ սպասվող յեղանա-  
կի մասին: Ողանավակայանին հաղորդում են յեղանակի հետևյալ  
տարրերի մասին՝ յեղանակի ընդհանուր դրութունը, ամպրոպ-  
ների, անձրևի, ձյան, մառախուղի, ուժեղ քամու, բքի մասին,

ամպամածությունը, ամպերի բարձրությունը, մասնավորապես  
ցածր ամպերի ձևերը, տեսանելիությունը, ողի ջերմաստիճանը,  
ողի ճնշումը և ճնշման փոփոխությունը, վոր տեղի յե ունեցել  
3 ժամվա ընթացքում, մինչև դիտողությունը, այսինքն՝ ծանրա-  
չափի տենդենցիան: Հաղորդում են նույնպես մթնոլորտի վերին  
շերտերի քամիների ուղղության ու արագության մասին:

Ինչպես և յեղանակի կանխորոշման մասին ըստը տեղեկու-  
թյուններն ստանալով՝ ողանավակայանի սինոպտիկայի (համա-  
տեսական) կոնսուլտացիայի սղնությամբ ողանավակայանի պե-  
տը վորոշում և ինքնավիտը բաց թողնելու կամ չթողնելու հարցը  
Յեթե յեղանակի պայմանները թույլ են տալիս թռչիչ կատա-  
րել, ապա ողանում իբ հետ վերցնելով յեղանակի տեղեկանքը՝  
թռչում և, իսկ յեթե յեղանակի պայմաններն անբարենպաստ են,  
ապա թռչիչ չի կատարվում: Թռչիչի ժամանակ կարող են տեղի  
ունենալ թռչիչի համար վտանգավոր յեղանակի հանկարծակի  
փոփոխություններ, ուժեղ մառախուղներ, ամպերայներ, ուստի  
թռչիչի ընթացքում՝ ողանվին նախադուրսցնելու համար՝ թը-  
ռչիչի ուղղությամբ կառուցվում են սխեմատիկային կետերու Այդ  
կետերից դիշերն ելեկտրական լապտերի, իսկ ցերեկը զանազան  
դրոշակների միջոցով ողանվին լուսց են տալիս յեղանակի փո-  
փոխությունների մասին: Վերջին ժամանակներս այդ բոլորի  
մասին հաղորդվում և աղիոցով, յերբ յեղանակն ինքնավիտի  
համար վտանգավոր և, աղանշան և տրվում իքնավիտի իջնելու  
անհրաժեշտության մասին:

## ՀԻՊՐՈՍԵՏԵՆՈՐՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՍԱՐԿՍԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Յերկաթուղային տրանսպորտի համար նույնպես անհրա-  
ժեշտ են բարենպաստ կլիման ու յեղանակը: Նոր յերկաթգիծ անց-  
կցնելու ժամանանակ անհրաժեշտ և ունենալ ճանապարհի կլիմայի  
բնութագիրը, այսինքն՝ տվյալ շրջանի մթնոլորտային տեղումների  
քանակը, տեղումների բնույթը, հեղեղները, նրանց ինտենսիվու-  
թյունը: Այդ բնութագիրը ճարտարապետին հնարավորություն  
կտա յերկաթգիծը հեղեղումներից պաշտպանել հեղեղատար  
խողովակներով:

Ողի ջերմաստիճանը, ձմեռային սառնամանիքների տեվո-  
ղականությունը, ձմեռային սառնամանիքների բացարձակ մե-  
ծությունը, ամրան մաքսիմալ ջերմաստիճանը, շոգ սրերի տեվո-

դակասութիւնը ապրիլա ընթացքում, բուքորերի թիվը և բժշ-  
մուղեղնութիւնն անհրաժեշտ և խմանալ՝ ճանապարհը հիմնելու,  
վառելիքի հաշվարկումների և ամառ ժամանակ փշացող մթերք-  
ների տեղափոխութիւնների համար: Անհրաժեշտ և խմանալ քա-  
միւնների ուղղութիւնն ու արագութիւնը՝ պաշտպանողական ցան-  
կապատեր կառուցելու, քամիների տիրապետող ուղղութիւն  
դեմ ծառեր տնկելու համար: Այն շրջանում, վերտեղ անց և կաց-  
վում յերկաթգիծ, յիթե քամու տիրապետող ուղղութիւնն ա-  
րեւելիյան և, ապա ճանապարհաշերտը ձյուն ու բքից պաշտպա-  
նելու համար, ճանապարհաշերտի արեւելիյան կողմը ծառեր են  
տնկում, ձմեռը ձյունածողեր են շարում: Քամին քշելով ձյունը՝  
հանդիպում և այդ ձյունածողերին, թափը կտարւում և, և ձյու-  
նը կուտակւում և ձյունածողերի կամ ծառերի մօտ:

Յերկաթգծի համար նույնպէս անհրաժեշտ և Յեղանակի  
Ինտիտուտից տեղեկութիւններ ստանալ յեղանակի մասին,  
ստանալ կանխագուշակող և նախագոր. շացնող տեղեկութիւններ.  
ձնաբուք և ուժեղ քամիներ սկսվելու դեպքում նախագոր.  
շացումը հնարավորութիւն կտա իր ժամանակին քանվորներ  
կենտրոնացնել ձնաբքի յենթարկւած շրջանում ճանապարհը  
մաքրելու, ոժանդակ շոյեմեքե՞նա ուղարկելու, կամ թե, ըստ հնա-  
րավորութիւն, ուղեցուցակը փոխելու:

Ծովային արանսպորտի համար յեղանակի նախագուշակու-  
մը հսկայական դեր և խաղում, վերուհետև հնարավոր և կանխել  
ծովային աղետները:

Ծովի փոթորիկ առաջանալու առաջին իսկ նշանի դեպքում  
նավահանգիստներին ուղարկում են նախագոր. շացման հաղորդա-  
գրութիւններ և նավահանգիստները բարձրացնում են փոթորիկի ազ-  
դանշաններ. նավահանգստում ցերեկը փարոսի վրա բարձրացնում  
են սև կոնուս, իսկ գիշերը՝ կարմիր լապտերով լուսավորւած կո-  
նուս: Նայած թե վեր կողմի վրա յե ուղղւած կոնուսի կատա-  
րը, այդ կողմից ել սպասւում և փոթորիկը:

## ՀԻՊՐՈՍԵՏԵՈՐՈՐՈՒՆԻՔԻԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Տուր տեսակի շինարարութիւնների տեխնիկական պլան-  
ները կազմելու ժամանակ վարպետ հիմք վերցնում են տեղի  
կլիմայական պայմանները: Միախոտի չորանոցները շինում են

այն հաշիվով, վորպեսզի մաքսիմալ չափերով ոգտագործվեն տեղի տիրապետող քամիները՝ ծխախոտի չորացումն արագացնելու համար:

Քաղաքների հատակագծումների ժամանակ դիտավորապես ուղղադրության և առնվում քամիների տիրապետող ուղղությունը: Քամիների ուղղության համապատասխան ել քաղաքը բաժանվում և յերկու մասի — տիրապետող քամիների դեմ-հանդիման կառուցվում և քաղաքի բնակելի մասը, բնակելի մասի հետևում՝ գործարաններն ու ֆաբրիկաները, վորպեսզի գործարանների ու ֆաբրիկաների ծխնելույզների ծուխը չտարածվի քաղաքի բնակելի մասի վրա: Գործարաններին կից կառուցվող տները նույնպես կառուցվում են տիրապետող քամիների դեմ-հանդիման:

Տներն պատերի հաստության և կտուրների ծավալի հաշիվները կազմելիս ուղղադրության և առնվում տեղի քամիների մաքսիմալ տարածությունն այն նպատակով, վոր քամու հնչումներին դիմացող պատեր ու կտուրներ կառուցվեն: Տների, ջրմուղու հիմք գցելիս, խողովակներ անցկացնելիս նկատի յե առնվում հողի սառչելու խորությունը: Յեթե խողովակներն անցկացվեն հողի այն շերտի վրայով, վոր ձմեռվա սրտերին սառչում և, ապա սառնամանիքների ժամանակ ջուրը խողովակներում կսառի, իսկ խողովակները կտրաքեն: Վառարանների վառելու շրջանի հաշիվների ժամանակ հիմք են վերցնում ձմեռային սրտերի տեվողականությունը, ողի ջերմաստիճանի բացարձակ մինիմումը, ձմռան ընթացքում ողի ջերմաստիճանի միջին մինիմումը, և միջին մաքսիմումը:

Հիդրո-դրույթների բոլոր հաշիվարկումների համար դիտավորապես ուղղադրության և առնվում և հիմք և ծառայեցվում մըթ-նորոքության տեղումների քանակը գետերի ավազանում: Հանքային զանազան աշխատանքների պլանները կազմելու համար բացությա աշխատանքների հավանական բանվորական որերի թիվը վորոշելիս անհրաժեշտ և իմանալ ողի ջերմաստիճանը, տիրապետող քամիների ուղղությունն ու արագությունը, ամպամած ու պարզ որերի թիվը, տեղումների որերի ու առանց տեղումների որերի թիվը:

Ջրամբարներ շինելիս նկատի յեն առնում տեղատարափների ինտենսիվությունը, ձյան ջրապաշարը, հողի սառչելու խորությունը:

Յեղիպատական բամբակի ջերմոցները տաքացնելու համար

նկատի յե առնվում մարտից մինչև սալիճներ տնկելու ժամանակաշրջանի ցածր ջերմաստիճանի տեվողականությունը:

Կամրջաշինարարության ժամանակ հաշվի յե առնվում ջրի ծախսման մեծությունը, տեղատարափների ինտենսիվությունը, գետում ջրի մաքսիմալ բարձրացումը և դետի հունը:

Կապի գծեր անցկացնելու ժամանակ անհրաժեշտ է լարերի վրա ջննջառի և մերկասառույց նստելու բոլոր դեպքերի մասին տվյալներ ունենալ, վորովհետև ինչպես ջննջառի չափը, նույնպես և մերկասառույցի հաստությունը, նայած կլիմայական պայմաններին՝ տարբեր տեղերում տարբեր է: Յերևանում ջննջառի մաքսիմում յերկարությունը հասնում է մինչև 1 $\frac{1}{2}$  սանտիմետրի, Արագածում՝ մինչև 21 սանտիմետրի: Կապի գծեր անցկացնելու ժամանակ տարբեր վայրերում ջննջառի և մերկասառույցի չափի համեմատ ել անց են կացնում տարբեր հաստության դիամետրի լարեր, վորպեսզի տեղի պայմաններում, ջննջառի և մերկասառույցի մաքսիմում չափով նստելու դեպքում լարերը դիմանան: Ելեկտրական հաղորդակցության համար նույնպես անհրաժեշտ են ջննջառի, մերկասառույցի և ամպրոպի տվյալներ:

Քաղաքային շինարարությունը ջրաբանական հետախուզումներ և պահանջում ազդարնակությանը խմելու ջուր մատակարարելու համար:

Կուրորտներ, հանգստյան տներ և սանատորիաներ կառուցելու ժամանակ հիմք են վերցվում տեղի կլիմայական պայմանները, այսինքն՝ տարվա պարզ, արևոտ օրերի թիվը, մթնոլորտի թափանցկությունը, ոդի փոշոտությունը, արևի առդեացիան, (մթնոլորտը թափանցող արևի արձակած ճառագայթների ենթագիան), արևի ճառագայթների ցրվածությունը, վոր առաջանում է մթնոլորտի կազմության մեջ մտնող գազերի ցրվածությունից, ջրային գոլորշիները, սառցաբյուրեղիկները, վորոնք լողում են մթնոլորտում և, նայած տեղական պայմաններին, փոշու մասնիկները, վորոնք շատ կամ քիչ քանակությամբ գտնվում են մթնոլորտում:

Արևի ուղիղ ցրված ճառագայթների լրիվ հաշվառումը բժշկին հնարավորություն է տալիս արևաբուժումների ժամանակ կալորիաների դողիբովկա նշանակել, հիվանդներին արևի տակ պահելու ժամանակը վորոշել, արևի վաննաները դետնից վորոշ բարձրության և շենքերից ու պատերից վորոշ հեռավորության վրա կառուցել, և այլն:

ԱՐԵՎԻ ՅԵՎ ՔԱՍՈՒ ԵՆԵՐԳԻԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Բնութիւն մեջ մի շարք եներգիաներ կան—Չուրը՝ սպիտակ  
ածուխը, քամին՝ յերկնագույն (լուրթ) ածուխը, արևի եներ-  
գիան՝ դեղին ածուխը, վոր հետազոտութեան և ուսումնասի-  
րութեան միջոցով կարելի յե ներգրավել յերկրի եներգիայի ընդ-  
հանուր սխաեմի մեջ:

Ընկ. Լենինը վոտոգման գործում քամու շարժիչներէ կի-  
րաւման մասին խոսելով՝ առաջարկել և այն մտցնել Գիտու-  
թյունների Ակադեմիայի գիտական-տեխնիկական պլանների  
մեջ: 16-րդ կուսհամագումարը նույնպես ընդգծել և դուրսատնտե-  
սութեան մեջ քամու ոգտագործման հնարավորութեանը: Խոր-  
հարդների 6-րդ համագումարում ԽՍՀՄ-ի հողժողկոմ ընկ. Յակով-  
լեմը ընդգծել և քամու շարժիչներ պատրաստելու հատուկ գործա-  
րան հիմնելու անհրաժեշտութեան մասին:

Յեթե վերցնելու լինենք բոլոր տեսակի եներգիաների ազ-  
րյութները, ապա կտեսնենք, վոր ԽՍՀՄ քամու եներգիան  
81,96% - և կազմում: Յերկնագույն (լուրթ) ածուխը կամ քամու  
եներգիան կարող և փոխարինել նավթին: Քամու եներգիան  
կարելի յե ոգտագործել վոչ միայն մեքենաներն ու հաս-  
տոցները շարժման մեջ դնելու համար, այլ և ելեկտրո-եներգիա  
ստանալու համար:

Քամու շարժիչներ կիրառելու ամենալայն տարածուցը դյու-  
րատնտեսութեանն և, մասնավորապես խորհտնտեսութեանների  
ու կուլտնտեսութեանների ջրամատակարարման և առանձնապես  
վոտոգման գործում: Ամերիկայում մեծ շափով տարածված և քա-  
մու եներգիայի ոգտագործումը մեծ մասամբ վոտոգման նպտ-  
տակների համար:

Արդենտինայի մի շարք շրջաններում այգեգործութեանն  
ու հողագործութեանը բացառապես դարգացել են վոտոգման և  
ջրամատակարարման համար քամու շարժիչներ կիրառելու շնոր-  
հիվ, մինչև պատերազմ այնտեղ տարեկան գործարկվում Եր  
12—15 հազար քամու շարժիչ: Քամու շարժիչներ պատրաստելու  
համար Ամերիկայում կառուցված են բազմաթիւ հատուկ գործա-  
րաններ: Ամերիկայում վոտոգման նպատակներով ոգտագործվում  
են նաև ելեկտրոմատորներ և նավթով աշխատող շարժիչներ,  
սակայն քամու շարժիչները դրանց աստիճանաբար գուրս են

մղում: 1923 թ. քամու շարժիչների հզորությունը հասնում էր մինչև 851,000 ձիու ուժի: ԽՍՀՄ-ում 1929թ. քամու շարժիչները պատրաստում էին յերկու գործարանում:

Հայաստանում, վոստոկյան նպատակներով քամու եներգիայի ոգտագործումը խոշոր ակտուալ նշանակություն և հետանկարներ ունի: Քամու եներգիան վոստոկյան համար ոգտագործելու տեսակետից Հայաստանում շատ ավելի լավ պայմաններ կան, քան ուրիշ տեղերում, ինչպես՝ Ապշերոնը, Մարխոտի լեռնանցը, Այնտեղ, ինչպես և ուրիշ շատ շրջաններում, քամու արագությունն ավելի ուժեղ է լինում ձմեռը, մինչդեռ Հայաստանում յեղանակի պայմանների շնորհիվ՝ ձմեռը, տիրապետող անտիցիկլոնային սեժիմի հետևանքով, տիրում է բարձր ճնշում, քամիների դադարում, իսկ ամառը, դաշտային աշխատանքների սեզոնում, քամու արագությունը հասնում և ամենամեծ ուժի, ամսվա միջինը մի վայրկյանում հասնում է մինչև 6 մետրի, զորը միանգամայն բավական է քամու շարժիչները շարժման մեջ դնելու համար:

Հայաստանում քամու շարժիչներ դնելու համար ամենահարմար վայրեր են՝ Զանգվի կիրճը, Արդնին, Յեղվարդի բարձրավանդակը, Զաջուռի լեռնանցը, վորտեղ, գյուղատնտեսական աշխատանքների շրջանում, վոստոկյան աշխատանքների ժամանակ, քամու արագությունը կապահովի քամու շարժիչների նորմալ աշխատանքը:

Քամու շարժիչներ դնում են նաև բելեռային լեռնային բարձրադիր մետեորոլոգիական կայաններում, վորտեղ քամու ամսական միջին արագությունն զգալի ուժի յե հասնում:

Արագածի վրա՝ Կարագյուլի ավերի մոտ քամու տարեկան միջին արագությունը մի վայրկյանում 4,2 մետրի յե հասնում, յեբրեմն ձմրան ամիսներին քամու արագությունը միջին թվով մինչև 11,5 մետրի յե հասնում մի վայրկյանում: Այդպիսի կայաններում քամու շարժիչներ դնելով՝ կարելի յե ամբողջ տարին կայաններն ավահովել լույսով ու վառելիքով:

Արևի եներգիայի պաշարը շատ մեծ է ու անսահման: Հաճախ փորձեր են արվել արևի եներգիան, այսպես կոչված՝ դեզին տծուխը, տեխնիկական դանադան նպատակների համար ոգտագործել. փորձեր են արվել սֆերիկ մեծ հայելիների միջոցով արևի ճառագայթներ հավաքել: Այդպիսի հայելիների ոգնությամբ ստացվել է մինչև 3500 ջերմաստիճան, վոր ոգտագործվել է

զանազան մետաղներ հալելու համար: Սֆերիկ հայելու և շոգե-  
մեքենայի միացումով ստացած արևի եներգիայի ոգնությամբ  
հանքահորերից ջուր են դուրս մղում, կամ ջուրը դեպի վեր են  
բարձրացնում: Ժամացույցի մեխանիզմի ոգնությամբ սֆերիկ  
հայելին դառնում և արևի հետ, և հայելուն միացած մեքենան  
արևի ծագելուց մինչև մայր մտնելն աշխատում և կալիֆորնիա-  
յում, վորտեղ արևի տեվոզականութունը շատ և արևի ճառագ-  
այթներն ոգտագործում են նաև տնային տնտեսության մեջ:

Ջրմուղու բաքերի վրա շինում են մեծ ջրամբարներ՝ ապա-  
կե կրկնակի ծածկոցներով, վորոնք խանգարում են ճառագայթնե-  
րի ճառագայթմանը և դրանով նպաստում են տաքության կու-  
տակմանը: Բաքերը սևացնում են՝ ավելի շատ արևի ճառագայթ-  
ներ կլանելու համար: Այդ բաքերում ջրի տաքութունը հաս-  
նում և 35 աստիճանի: Կալիֆորնիայում արևի ճառագայթներն  
ոգտագործում են կերակուրներ պատրաստելու համար: Շինում  
են տախտակե արկղներ՝ սևացրած բաքերով և ապակե կրկնակի  
ծածկոցներով: Այդ արկղներում ջերմութունը բարձրանում և  
մինչև 120 աստիճանի: Կալիֆորնիայում՝ Վիլեսի սարի վրա որ-  
սերվատորիայում խոհանոց և հիմնված, վորտեղ տաքութունը  
հասնում և մինչև 150 աստիճանի: Մեզ մոտ՝ Միության մեջ ար-  
ևի եներգիայի ոգտագործումը կադմակերպված և Տաշկենտի որ-  
սերվատորիային կից:

## Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Ա Կ

ՊՍԻԽՐՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՈԴԻ ԲԱՑԱՐԶԱԿ  
ՅԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՑՈՂԻ ԿԵՏԵՐԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ



Պարսպաների կազմի հաշվումներ

Յերկու ջերմաչափերի տարբերությունը

Ցամկան ջերմաչափ	0			1			2		
	Բացարձակ խոնավում. միլիմետր	Հարաբեր. խոնավում. տոկոսով	Ցողի կետերը	Բացարձակ խոնավում. միլիմետր	Հարաբեր. խոնավում. տոկոսով	Ցողի կետերը	Բացարձակ խոնավում. միլիմետր	Հարաբեր. խոնավում. տոկոսով	Ցողի կետերը
30	31,5	100	30,0	30,9	93	29,6	30,3	86	29,3
29	29,8	100	29,0	29,2	92	28,6	28,5	85	28,3
28	28,1	100	28,0	27,5	92	27,6	26,9	85	27,2
27	26,5	100	27,0	25,9	92	26,6	25,3	85	26,2
26	25,0	100	26,0	24,4	92	25,6	33,7	85	25,1
25	23,5	100	25,0	22,9	92	24,6	22,3	84	24,1
24	22,2	100	24,0	21,6	92	23,5	21,0	84	23,0
23	20,9	100	23,0	20,3	91	22,5	19,7	83	22,0
22	19,7	100	22,0	19,0	91	21,5	18,4	83	20,9
21	18,5	100	21,0	17,9	91	20,4	17,3	83	19,9
20	17,4	100	20,0	16,8	91	19,4	16,2	82	18,8
19	16,4	100	19,0	15,7	91	18,4	15,1	82	17,8
18	15,4	100	18,0	14,8	90	17,4	14,1	81	16,7
17	14,4	100	17,0	13,8	90	16,3	13,2	81	15,6
16	13,5	100	16,0	12,9	90	15,3	12,3	80	14,5
15	12,7	100	15,0	12,1	89	14,2	11,5	80	13,4
14	11,9	100	14,0	11,3	89	13,2	10,7	79	12,3
13	11,2	100	13,0	10,6	89	12,1	10,0	78	11,2
12	10,5	100	12,0	9,9	88	11,1	9,3	78	10,1
11	9,8	100	11,0	9,2	88	10,0	8,6	77	9,0
10	9,2	100	10,0	8,6	87	9,0	8,0	76	7,9
9	8,6	100	9,0	8,0	86	7,9	7,4	75	6,8
8	8,0	100	8,0	7,4	86	6,9	6,8	74	5,6
7	7,5	100	7,0	6,9	86	5,8	6,3	73	5,4
6	7,0	100	6,0	6,4	85	4,7	5,8	72	3,3
5	6,5	100	5,0	5,9	85	3,6	5,3	71	2,1
4	6,1	100	4,0	5,5	84	2,5	4,9	70	0,9
3	5,7	100	3,0	5,1	83	1,5	4,5	69	-0,3
2	5,3	100	2,0	4,7	83	0,3	4,1	67	-1,5
1	4,9	100	1,0	4,4	82	-0,7	3,8	66	-2,7
0	4,0	100	0,0	4,0	81	-1,8	3,4	64	-3,9

Պսիխոմետրիկական հատվումներ

Տասնյակած ջերմաստիճան	Յ Յ երկու ջերմաստիճանի տարբերությունը								
	0			1			2		
	Բացարձակ խոնավություն, միլլիմետր.	Հարաբերակ. խոնավություն, տոկոսով	Ցողի կետերը	Բացարձակ խոնավություն, միլլիմետր.	Հարաբերակ. խոնավություն, տոկոսով	Ցողի կետերը	Բացարձակ խոնավություն, միլլիմետր.	Հարաբերակ. խոնավություն, տոկոսով	Ցողի կետերը
—	4,6	100	0,0	4,1	82	— 1,7	3,5	67	— 3,5
— 1	4,3	100	— 1,0	3,7	81	— 2,8	3,2	65	— 4,6
— 2	4,0	100	— 2,0	3,4	80	— 3,8	2,9	63	— 5,9
— 3	3,7	100	— 3,0	3,1	79	— 5,0	2,6	61	— 7,3
— 4	3,4	100	— 4,0	2,9	78	— 6,1	2,3	59	— 8,6
— 5	3,1	100	— 5,0	2,6	77	— 7,3	2,1	57	— 9,9
— 6	2,9	100	— 6,0	2,4	76	— 8,4	1,9	55	— 11,4
— 7	2,7	100	— 7,0	2,2	74	— 9,6	1,6	52	— 13,0
— 8	2,5	100	— 8,0	1,9	73	— 10,9	1,4	49	— 14,7
— 9	2,3	100	— 9,0	1,7	71	— 12,2	1,2	46	— 16,5
— 10	2,1	100	— 10,0	1,6	69	— 13,6	1,0	42	— 18,5
— 11	1,9	100	— 11,0	1,4	67	— 14,9	0,9	39	— 20,4
— 12	1,8	100	— 12,0	1,3	65	— 16,2	0,7	35	— 22,6
— 13	1,6	100	— 13,0	1,1	63	— 17,7	0,6	31	— 24,8
— 14	1,5	100	— 14,0	1,0	61	— 19,0	0,5	27	— 27,5
— 15	1,4	100	— 15,0	0,9	58	— 20,6	0,4	22	— 30,3
— 16	1,3	100	— 16,0	0,8	55	— 22,1	0,3	16	— 33,9
— 17	1,2	100	— 17,0	0,7	52	— 23,7	0,2	11	—
— 18	1,1	100	— 18,0	0,6	48	— 25,4	0,1	4	—
— 19	1,0	100	— 19,0	0,5	45	— 27,3	—	—	—
— 20	0,9	100	— 20,0	0,4	40	— 29,2	—	—	—
— 21	0,8	100	— 21,0	0,3	36	— 31,2	—	—	—
— 22	0,8	100	— 22,0	0,3	31	— 33,5	—	—	—
— 23	0,7	100	— 23,0	0,2	25	—	—	—	—
— 24	0,6	100	— 24,0	0,1	19	—	—	—	—
— 25	0,6	100	— 25,0	0,1	12	—	—	—	—
— 26	0,5	100	— 26,0	—	—	—	—	—	—
— 27	0,5	100	— 27,0	—	—	—	—	—	—
— 28	0,5	100	— 28,0	—	—	—	—	—	—
— 29	0,4	100	— 29,0	—	—	—	—	—	—
— 30	0,4	100	— 30,0	—	—	—	—	—	—

ՊԵՐԻՄԵՏՐԻԿԱԿԱՆ ԿՈՎՈՒՄԵՆՏ

Տամկան զերմաչափ	Տ. Յ Ե Ր Կ Ո Ւ Զ Ե Ր Մ Ո Ն Վ Ո Ւ Ե Ր Ի Մ Ա Ր Բ Ե Ր Ո Ւ Թ յ Ա Ն Բ								
	3			4			5		
	Բացարձակ խոնավութ. միլիմետ.	Հարաբերակ. խոնավութ. տոկոսով.	Ցողի կետերը	Բացարձակ խոնավութ. միլիմետ.	Հարաբերակ. խոնավութ. միլիմետ.	Ցողի կետերը	Բացարձակ խոնավութ. միլիմետ.	Հարաբերակ. խոնավութ. տոկոսով.	Ցողի կետերը
30	29,7	79	28,9	—	—	—	—	—	—
29	27,9	79	27,9	27,3	73	27,5	—	—	—
28	26,2	79	26,8	25,6	72	26,4	25,0	67	26,0
27	24,6	78	25,8	24,0	72	25,3	23,4	66	24,9
26	23,1	78	24,7	22,5	71	24,2	21,9	65	23,8
25	21,7	77	23,6	21,1	71	23,1	20,5	65	22,7
24	20,3	77	22,6	19,7	70	22,0	19,1	64	21,5
23	19,0	76	21,5	18,4	69	20,9	17,8	63	20,4
22	17,8	76	20,2	17,4	69	19,8	16,6	63	19,2
21	16,7	75	19,3	16,0	68	18,7	15,4	62	18,1
20	15,6	74	18,2	14,9	67	17,6	14,3	61	16,9
19	14,5	74	17,1	13,9	66	16,5	13,3	60	15,7
18	13,5	73	16,0	12,9	66	15,3	12,3	59	14,5
17	12,6	72	14,9	12,0	65	14,1	11,4	58	13,3
16	11,7	72	13,7	11,1	64	12,9	10,5	57	12,1
15	10,9	71	12,6	10,3	63	11,7	9,7	55	10,8
14	10,1	70	11,4	9,5	62	10,5	8,9	54	9,5
13	6,8	69	10,3	8,7	61	9,3	8,1	53	8,2
12	8,6	68	9,1	8,0	59	8,0	7,4	52	6,9
11	8,0	67	7,9	7,4	58	6,8	6,8	50	5,5
10	7,4	66	6,7	6,8	57	5,5	6,2	48	4,1
9	6,8	65	5,5	6,2	55	4,1	5,6	47	2,7
8	6,2	63	4,2	5,6	54	2,8	5,0	45	1,2
7	5,7	62	3,0	5,1	52	1,5	4,5	43	— 0,3
6	5,2	61	1,7	4,6	50	0,0	4,0	41	— 1,5
5	4,7	59	—0,4	4,1	48	—1,4	3,5	39	— 3,4
4	4,3	57	—0,9	3,7	46	—2,8	3,1	36	— 5,1
3	3,9	56	—2,2	3,3	44	—4,3	2,7	34	— 6,8
2	3,5	54	—3,5	2,9	42	—5,9	2,3	31	— 8,7
1	3,2	52	—4,9	2,6	39	—7,5	2,0	28	—10,7
0	2,8	50	—6,3	2,2	36	—9,2	1,6	25	—13,0

ԳԻՐԿԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՍՎԱԼՆԵՐ

Պատկան զեղամանակ	Ծ. Յերկու շերտաշափերի տարբերություններ								
	3			4			5		
	Բացարձակ. խոնավութ. միլիմետր.	Հարաբեր. խոնավութ. միլիմետր.	Ցույն կետերը	Բացարձակ. խոնավութ. միլիմետր.	Հարաբեր. խոնավութ. տոկոսով.	Ցույն կետերը	Բացարձակ. խոնավութ. միլիմետր.	Հարաբեր. խոնավութ. տոկոսով.	Ցույն կետերը
— 0	3,0	58	— 5,5	2,5	40	— 7,8	2,0	30	— 10,5
— 1	2,7	51	— 6,9	2,2	38	— 9,5	1,6	27	— 12,9
— 2	2,4	48	— 8,4	1,9	35	— 11,4	1,3	23	— 15,5
— 3	2,1	45	— 9,9	1,6	32	— 13,5	1,0	19	— 18,4
— 4	1,8	43	— 11,6	1,3	28	— 15,8	0,8	15	— 21,7
— 5	1,6	40	— 13,5	1,0	24	— 18,5	—	—	—
— 6	1,3	36	— 15,5	0,8	20	— 21,4	—	—	—
— 7	1,1	32	— 17,7	0,6	16	— 25,0	—	—	—
— 8	0,9	28	— 20,2	0,4	11	— 29,8	—	—	—
— 9	0,7	24	— 23,1	0,2	6	—	—	—	—
— 10	0,5	20	— 26,4	—	—	—	—	—	—
— 11	0,4	15	— 30,3	—	—	—	—	—	—
— 12	0,2	10	— 35,0	—	—	—	—	—	—
— 13	0,1	4	—	—	—	—	—	—	—


Պարսկաստանի հաստիքներ

6. Յերկու շերտաշերտերի տարբերությունը

Տասնյակ շերտաշերտ	6			7			8		
	Քաղաքակ. խոն- վաթ. միլիմետր	Հարաբեր. խոն- վաթ. տոկոս.	Ցույն հեռավոր	Քաղաքակ. խոն- վաթ. միլիմետր	Հարաբեր. խոն- վաթ. միլիմետր	Ցույն հեռավոր	Քաղաքակ. խոն- վաթ. միլիմետր	Հարաբեր. խոն- վաթ. տոկոս.	Ցույն հեռավոր
27	22,8	61	24,4	—	—	—	—	—	—
26	21,3	60	23,3	20,0	55	22,8	—	—	—
25	19,8	59	22,1	19,2	54	21,6	18,6	50	21,1
24	18,5	59	21,0	17,9	63	20,4	17,2	49	19,9
23	17,2	58	19,8	16,6	53	19,2	16,0	48	18,6
22	16,0	57	18,6	15,4	52	18,0	14,7	47	17,3
21	14,8	56	17,5	14,2	51	16,7	13,6	46	16,0
20	13,7	55	16,2	13,1	49	15,5	12,5	44	14,7
19	12,7	54	14,9	12,1	48	14,2	11,4	48	13,4
18	11,7	53	13,7	11,1	47	12,9	10,5	42	12,0
17	10,8	52	12,5	10,1	46	11,5	9,5	40	10,6
16	9,9	50	11,1	9,3	44	10,2	8,7	39	9,2
15	9,1	49	9,8	8,4	43	8,8	7,8	37	7,7
14	8,3	47	8,4	7,7	41	7,3	7,0	36	6,1
13	7,5	46	7,7	6,9	40	5,8	6,3	34	4,5
12	6,8	44	5,6	6,2	38	4,3	5,6	32	2,8
11	6,2	43	4,1	5,6	36	2,7	5,0	30	1,0
10	5,5	41	2,6	4,9	34	1,0	4,3	28	— 0,8
9	5,0	39	1,1	4,4	32	— 0,7	3,8	26	— 2,7
8	4,4	37	— 0,6	3,8	30	— 2,5	3,2	24	— 4,7
7	3,9	35	— 2,2	3,3	28	— 4,4	2,7	21	— 6,9
6	3,4	33	— 4,8	2,8	25	— 6,4	2,2	18	— 9,3
5	2,9	30	— 5,8	2,3	22	— 8,6	1,7	16	— 12,2
4	2,5	28	— 7,1	1,9	19	— 11,0	1,3	13	— 15,7
3	2,1	25	— 9,8	1,5	16	— 18,9	0,9	9	— 20,0
2	1,7	22	— 12,3	1,1	13	— 17,5	0,5	6	— 26,2
1	1,4	18	— 15,1	0,8	10	— 21,8	0,2	2	—
0	1,0	15	— 18,5	0,4	6	— 28,0	—	—	—
—0	1,4	20	— 15,1	0,9	12	—	—	—	—
—1	1,1	17	— 17,5	—	—	—	—	—	—
—2	0,8	13	— 21,5	—	—	—	—	—	—

Պսիխոմետրիկական հասցումներ

Տասնյակած ջերմաչափ	8. Յերկու ջերմաչափերի տարբերությունը								
	9			10			11		
	Բացարձակ խոնավումի-միլիմետր.	Հարաբերակ. խոնավումի. տակուսով	Ցողի կետերը	Բացարձակ խոնավումի-միլիմետր.	Հարաբերակ. խոնավումի. տակուսով	Ցողի կետերը	Բացարձակ խոնավումի-միլիմետր.	Հարաբերակ. խոնավումի. տակուսով	Ցողի կետերը
24	16,6	44	19,3	—	—	—	—	—	—
23	15,3	43	18,0	14,7	39	17,3	—	—	—
22	14,11	42	16,7	13,5	38	16,0	12,9	34	15,2
21	13,0	41	15,3	12,4	37	14,6	11,7	33	13,8
20	11,9	40	13,9	11,3	36	13,1	10,6	32	12,3
19	10,8	39	12,5	10,2	34	11,6	9,6	30	10,7
18	9,9	37	11,1	9,2	33	10,1	8,6	29	9,1
17	8,9	36	9,6	8,3	31	8,5	7,7	27	7,4
16	8,1	34	8,1	7,4	30	6,9	6,8	26	5,6
15	7,2	33	6,5	6,6	28	5,2	6,0	24	3,8
14	6,4	31	4,8	5,8	26	3,4	5,2	22	1,8
13	5,7	29	3,0	5,1	25	1,4	4,5	20	-0,3
12	5,0	27	1,2	4,4	22	-0,6	3,8	18	-2,5
11	4,4	25	-0,7	3,7	20	-2,7	3,1	16	-5,0
10	3,7	23	-2,8	3,1	18	-5,0	2,5	14	-7,7
9	3,2	20	-4,9	2,5	16	-7,6	1,9	11	-10,9
8	2,6	18	-7,3	2,0	13	-10,5	1,4	9	-14,9
7	2,1	15	-10,0	1,5	10	-14,2	0,9	6	-20,4
6	1,6	13	-13,2	1,0	7	-18,9	4,0	3	-29,2
5	1,1	10	-17,4	0,5	4	-26,0	—	—	—



Գաս. խմբ.՝ Է. Մանյան  
Յեթ. խմբ.՝ Հ. Մալախյան  
Լեզվ. խմբ.՝ Ն. Ալլախանյան  
Սրբագրիչ՝ Գ. Գ. Հակոբյան

---

Փլավլիտի լիազոր Ս—478, Կրտտ. Ա 329, պատվ. № 177, օրհմթ 1899


Հանձնված և արտադրութիան մարտի 16-ին 1936 թ.

Ստորագրված և ապագրելու ապրիլի 27. 1936 թ.

Տ.Տ ապ. թերթ՝ մեկ ապ. թերթում 38400 ապ. Կ<sub>2</sub>.

---

Նյութերատի ապագրան, Յերևան, Նալբանդյան 11







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0004265

876

II  
A 23139

ԳԻՆԸ 1 ռ. 50 կոպ.

254.



НАРКОМЗЕМ СССР

Гидро-метеорологическое управление СССР

**А. НЕРСИСЯН**

**Роль Гидро-метеорологии  
в социалистическом  
строительстве**

Сельхозгиз

1936

Эривань